

Ри/ург.

թափառելու պահ
և անվայրացմանը.

Եղիշ 1912թ.

891.99
R-34



H2-12632 2-1263a 19 NOV 2011 36
APM.

891.99

Հ-34 ԼՆՏԱՆԵԿԱՆ
ՎԻՃՏ

ԵՒ

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

ՊԱՑՄԱԿԱՆ ՎՀՊ

ՊԱՐՍԿԱՀԱՅ ԿԵԱՆՔԻՅ

(1826—1830)

2-րդ ՑՊՐԴՐՈՒԹ. ՅԵԽԵՂՈՒԹՆԵՐՈՎ ԵՒ ՊԱՑԿԵՐՈՉՈՐԴ

ՀԱԽԱՐԾ

ՀԱՅ. № 22487

ՇՈՒՇԻ
Տպարան Բ. Տէր-Սահմակեանի

1912

13 JUL 2013

47449

ԲՈՅ Ա Ռ Ե



40514-63

ՅԱՌԱՋԱԲԱՆ


Թէև «Ընտանեական վիշտ և հաւատարմութիւն»-ը տպագրուած էր 1888 թիւ և սպառուած, սակայն բազմաթիւ ծանօթներիս և բարեկամներիս բաւարարութիւն տալու համար, լաւ համարեցի երկրորդ ագնամ տալ տպագրութեան զանազան բարեփոխութիւններով, յաւելուածներով և պատկերազարդ:

Յուսով եմ որ յարգելի ընթերցասէրներն աւելի գոհ կմնան: Քաղցր պարտականութիւն եմ համարում հրապարակով իմ խորին չնորհակալութիւնը և երախտագիտական զգացմունքներն արտայատել պ. Քաղղասար Արգումանեանցին, որը ամենայն սիրով յանձն առաւ ներկայ հրատարակութեան բոլոր ծախքերը:


Խորէն քահանայ Խոկեանդարեանց

1888.0000
propter obiectum quod in causa obiectum dicitur
propter obiectum, hoc est utrum est idem quod in causa obiectum
obiectum propter obiectum vel non obiectum, et quod
utrumque potest hanc causam obiectum non potest hanc
obiectum, propter id est utrumque potest obiectum, id est utrumque

propter obiectum quod in causa obiectum dicitur
propter obiectum, hoc est utrum est idem quod in causa obiectum
obiectum propter obiectum vel non obiectum, et quod
utrumque potest hanc causam obiectum non potest hanc
obiectum, propter id est utrumque potest obiectum, id est utrumque



ՅՈՒՅԱՆԻ ՓԱԼԽՑՆԵԼԼ



Մի գալնանալին գեղեցիկ առաւօտ էր, արշալուսի առաջին ճառաղալթներից ամենաբարձր լեռների գաղաթները ծիրանի գոյն էին ստացել, կուսական անտառների մէջ թռչունների դալալիկը, գետակների և ականակիտ աղբիւրների կարկաչումը ամենահարուստ բնութեան գեղեցկութիւնը ցոլց տալով, միանգամայն կամայ ակամայ տեսնողների ուշը կ'գարձնէին դէպի այս հրաշալեաց պատճառ Արարիչը:

Պարսկաստանի հալաբնակ Ս. գիւղի հարիւրամեալ վշտալի ծերունի Արքահամը, որ առաջինն էր համարվում ալն շրջակալքում թէ նիւթական և թէ բարոյական հարստութեամբ, իւր սովորութեանը համաձայն գաւազանը ձեռքին տանից դուրս գալով, դողդոջուն քայլերով բարձրանում էր դէպի Մարգարիտ աղբիւրի արևմտեան կողմում

ձուածե բարձրացած նահատակի խութ^{*)}) անուանեալ ազօթատեղին, որն իւր կանաչազարդ բարձրութիւնից նայում էր իւր շուրջը բուսած ուղղաբերձ դարեւոր մայրիների վրայ:

Դիւղի մի քանի ծինելոյզներից թանձը ծուխը սիւնածե բարձրանում էր գէպի երկինքը, տեղ տեղ բակերում հայուհիք պարզ հագուստով, բոկոտն՝ աւելում էին սրահներն և կերակրում ընտանի անասունները:

Տաւարածը իւր նախիրով հեռանում էր գէպի ծաղկածոր անուանեալ արօտատեղին, որն իւր քաղցրահամ սառն աղբիւրներով առաջինն էր համարվում: Ծերունի Աբրահամի թոռը 10 ամեայ գեղեցիկ Շուշանը տանից դուրս գալով գնում էր գէպի Մարգարիտ աղբիւրը իւր թարմ գէմքը, որը կիսով չափ ծածկել էր նրա հարուստ սև գիսակները, լուսալու և իւր փոքրիկ կժով իւր ալրի մօր Աննալի համար ջուր բերելու:

Աղբիւրի արեւելեան փոքրիկ ձորակն, որի երկարութեամբ ընկած էր մէկ նեղ և օձապտոյտ ճանապարհ, տանում էր գէպի ահագին կաղնոտ անտառի խորքը, որտեղից ճանապարհը բաժանվում էր շատ ճիւղերի:

Ա. գիւղի հարեան Ք. գիւղացի պարսիկ

^{*)} Յիշեալ խութի վրայ գտնվում էր ծերունու քրոջ օրիորդ Մարիամի գերեզմանը, որը զոհ էր եղած պարսիկ Բուստամ-խանի բարբարոսութեանը նրա անասնական կամքը չ'կատարելու համար:

Քարիմ-բէկն, որ ծերունի Աբրահամի Մարութ որդուն սպանելու պատճառաւ իւր բոլոր կարողութիւնը վատնելով բանտից իւր աներ Մուշտէ-իտի միջոցաւ ազատուած էր, գաղտնի թշնամութեամբ սպասում էր յարմար միջոցի վրէժինդիր լինլու այն անմեղ գերդաստանից, նրա բոլոր հարստութիւնը կողոպտելու և ընտանիքը իսպառջնջելու. բայց մի օր հանգուցեալ Մարութի գեղեցիկ աղջիկ Շուշանին տեսնելով՝ աւելի լաւ համարեց առևանգել նրան, քան կրկին անգամ ներկել իւր սուրն անմեղների արիւնով:

1826 թուին երբ Պարսկաստանը մոլեռանդութեան դրօշակը պարզել էր Ոուսաստանից վրէժինդիր լինելու, երբ ամեն տեղ խռովութիւնը, սապատակութիւնը բարձրացել էին մինչեւ երկինք, Քեարիմ-բէկը հասաւ իւր չոր նպատակը կատարելու ըոպէին: Քեարիմ-բէկը իւր չարագործութիւնը անյայտ պահելու համար, ինչպէս իւր ընտանիքի՝ նոյնպէս և գիւղի մէջ, օր առաջ ձայն էր ձգել որ ինքը մտադիր է անցնել Ոուսաց հողը սապատակելու:


Մի օր Քեարիմ-բէկը իւր հաւատարիմ ծառաներին Ասլանին, Ալիւն, Աբբասին և Խուրշիտին յայտնելով իւր դիտաւորութիւնը հրամայեց պատրաստուիլ: Նրանք քանի ըոպէից յետոյ պատրաստ սպասում էին բէկի կարգադրութեանը, երբ վերջինս ասաց՝ «առանձին առանձին ճանապարհաւ՝ կաղնոտ անտառը»:

Բէկը՝ իւր ծառաներին գիւղականներից չ'ճանա-
չուելու համար, իւր կնոջից ծածուկ վերառած
երեք ձեռք կանացի հագուստը տալով նրանց,
ինքը Խուրշիտի հետ մնաց անտառում ձիաների
մօտ:

Ասլանը իւր ծպտեալ ընկերներով անհետա-
ցաւ մի նեղ և օձապտոյտ ճանապարհաւ, որը
ուղղակի տանում էր գէսլի աղբիւրի փոքրիկ ձորը:
Ասլանը՝ որի գէմքի վրայ երկար տարիներն, ան-
ընդհատ փորձանքները ակօսներ էին թողել, իւր
անուանը վալել յատկութիւններն ունէր, իւր
տարիքին անհամապատասխան արագաշարժու-
թիւն, սրտոտութիւն, անհամեմատելի ոլժ, հաս-
տատամտութիւն. վեհանձնութիւն և հնարագի-
տութիւն:

Նուշանը իւր փոքրիկ կուժը լցնելով, սպա-
սում էր ջրի եկած իւր հասակակից աղջիկներին,
որ միասին վերադառնան, երբ Ասլանն իւր ընկեր-
ներով հասաւ աղբիւրի ձորը և իբր թէ նեղացած՝
նստեց ձորակի ահագին ընկուզենու տակ:

Ասլանի սրատես աչքերից երեսակալը (բուհ-
բեանտ) չէր կարող արգելել Նուշանին տեսնելուն
պէս չ'ճանաչել, որին իբրև հարեւան լաւ գիտէր.
միայն նրան առանց մեծ աշմուկի և հեշտու-
թեամբ փախցնելու համար, սկսեց Ասլանը աղ-
ջիկներից քանիսին մէկ քանի շար ուլունքներ և
փոքր ինչ մրգեղէն տալ: Միւս երեխաները, որոնց



Հետ և Շուշանը, տեսնելով այդ երեխայական ուրախացուցիչ առարկաները, գնացին դէպի ձորը, երանք էլ մասը ստանալու.

Որսը յաջող անցաւ, Շուշանը արդէն Ասլանի գրկում անհետանում էր իւր հայրենի ծննդավայրից ողբալով և աղաղակելով։ Աղջիկներից մի քանիսը վազելով պատմեցին Շուշանի մօր ալի Աննալին։ Այդ վշտահար թուլ կինը մոռանալով ամեն ինչ, կատաղի իբրև որդեկորուս առիւծ կայծակի արագութեամբ հասնելով աղբիւրի ձորը, ողբալի ձայնիւ կտնչում էր «Շուշան Շուշան, ուր ես, ո՞ր անգութը տարաւ քեզ, դէպի ուր...»

Աննան դիւահարի պէս վազում էր երեխաների մէկի ցոյց տուած մացառօտ նեղ շաւիղով, և ով պէտք էր նրան օգնութեան հասնէր, քանի որ ամբողջ գիւղի տղամարդիկ գնացած էին դէպի իրենց արտերը. իսկ նրա տագրները իւր 18 ամեալ Վահան որդու հետ գտնվում էին հարկաւոր գործով Թ. քաղաքում։

Աննան հասել էր Շուշանին, բայց ինչպէս խլել նրան, որը արդէն Ասլանի երկաթեալ բազուկների մէջ էր։ Նա լսում էր Շուշանի մայրիկ աղաղակելը, բայց ի՞նչ օգուտ, քանի որ չէր կարող ազատել։ Աննալի սիրտը աւելի մորմոքվում էր, երբ մերկացրած գալոյների միջոցաւ ստիպում էին Շուշանին լռելու։


Աննան ինքը զինքը մոռացած վազում էր

Նրանց ետևից և աղեկտուր ձայնիւ աղաչում էր
«ինայեցէք զաւակիս, դուք ևս մալրեր էք, դուք
ևս որդիք ունիք, խղճացէք անբաղդիս, ստացէք,
ինչ որ ուզում էք և բաց թողեցէք երեխալիս,
կամ գոնէ թոյլ տուէք մի անգամ ևս գրկեմ
դորան, մի անգամ ևս համբուրեմ թշուառ զա-
ւակս, 'ի սէր Աստուծոյ մի զրկէք ինձ Շուշա-
նիցս։ Ասլանը խղճահարուած Աննայի աղաչանքից
իսկոյն բաց կ'թողէր Շուշանին, եթէ բէկի վրէժ-
ինդրութիւնից չ'փախենար։

Բէկին և Խուրշիտին կանացի հագուստ
չունենալու առթիւ Աննան պիտի ճանաչէ, այս
տեղ էլ խիղճը հանգամանքներին պիտի յաղթէ,
իմ ներքին մարդը տանջում է ինձ պիտի մալրը
չ'բաժանեմ աղջկանից, վճռողաբար ասաց Ասլանը.
Աննան մի թոյլ կին է, ինչ պիտի անէ։ «Արբաս,
ուրեմն վազիր բէկի մօտ, պատմիր տեսածդ և իմ
այս նոր միտքը Շուշանին մօրը ևս փախցնելու
համար և ասիր մեզ կարող է գտնել Դեահուահի *)
անտառի միայն մեզ յայտնի զազմայում **). իսկ
դու չ'մոռանաս մեր ձիանքը և զէնքերը մեզ
հասցնելու։ Այս բոլորը մի քանի վայրկենում կա-
տարուեց. Աննան, Շուշանը երեք ձիաւորների
հետ կայծակի արագութեամբ հեռանում էին դէ-
պի զազման։

*) Տասն ճանապարհ ունեցող

**) Հազմայ, գետնափոր տուն։



ԾԵՐՈՒՆԻ ԱԲՐԱՀՈՅԻ ՄՈՀԸ

Ծերունին մի առանձին հոգեկան զգացմամբ
իւր քրոջ գերեզմանի վրայ ընկած արտասուալից
աչքերով ալսպէս էր խօսում, «ալաօր ես պիտի
թողեմ այս վշտալի աշխարհը, իմ սիրտը սովորա-
կանից դուրս տիսուր է. ոհ Աստուած՝ գիշերուալ
երազներս սարսափեցնում են ինձ, երեխաներս
չվերադարձան. ինալիք վշտահար ծերունուս և
եթէ սպասում է իմ տանը մի փորձանք, գոնէ
փակիք շուտ աչքերս չ'տեսնելու համար։ Քոյր,
քոյր, սիրելի քոյր, ուր ես ուր, ինչու չես ինձ
էլ ընդունում սառ գերեզմանիդ մէջ։» Քանի որ
ողորմելին ալսպէս կ'ողբար, լսեց մի սուր ձախ
և ուշը դարձնելով նահատակի խութից դէպի գիւ-
ղը, տեսաւ մի վայկոչ թռչուն, որը սաւառնում
էր գիւղի չորս կողմով։ «Այս երկրորդ անգամն է
որ տեսնում եմ, սա լաւ նշան չէ» վրդովուած
ինքը իրեն ասաց ծերունին և նրա երեակալու-
թեան առաջ պատկերացաւ մի սարսափելի անցք,
որը շատ տարիներ առաջ կատարուած էր նրա
անբաղդ քրոջ համար։

Ծերունին առանց ժամանակ կորցնելու, շունչը բերանին հասած հազիւ հազ կարողացաւ հասնել գիւղը։ Նրա նախազգացմունքը՝ իզուր չէր, ամբողջ գիւղը ողբում էր Աննալի և Շուշանի անհետանալը։ Ծերունին փոքր առ փոքր թուլանալով կորցրեց ոլժը, նա երբեմն անիծում էր իւր բաղդը և երբեմն տալով իւր սիրելի Աննալի և Շուշանի անունը պատրաստվում էր թողել այս աշխարհը։

Կէս օրից բաւական անցել էր, երբ Գաբրիէլը և Միքայէլը Վահանի հետ մտան իրենց դըռնով։ Ծերունին կարեցածին չափ ուժը և ուշը հաւաքելով, կանչեց իւր որդոցը Գաբրիէլին և Միքայէլին, օրհնեց նրանց և նրանց ընտանիքին ու ասաց մարդասիրութիւնը բնական առաքինութիւններից գլխաւորն է։ Մարդասէրը մի վշտացած, տխուր անձանօթ մարդի անգամ արտասուքը տեսնելով առանց արտասուքի պատճառն էլ իմանալու ճմլվումէ և աշխատում կարացածին չափ օգնել իր նմանին։ Ալո՞, նախախնամութիւնը մի ալնպիսի զգացում է դրել մեր սրտերում որ ուրիշի թշուառութիւնը տեսած ժամանակ զալրանում, վշտանում ենք և ցանկանում օգնել անմիջապէս որ մեր վիշտն էլ դադարուի։ Եւ եթէ դէպի օտարը պարտաւորենք ալնպէս լինիլ, հապա որքան առաւել դէպ մեր հարազատը, մեր արիւնակիցը և բռնելով Վահանի ձեռքից դողդոջուն ձայնով

ասաց «որդիք, ահա ձեր մեծ եղբօր որդին, զուրկ հօրից ու մօրից կամաւն Աստուծոյ յանձնում եմ ձեր խնամատարութեանը, սիրեցէք դորան հայրաբար, և դու Վահան, հնագանդ կ'մնաս քո հոգեսոր հալրերիդ։ Եթէ իմ արիւնս եռում է ձեր երակների մէջ, որդիք, և եթէ կ'յարգէք ձեր հօր վերջին խնդիրը և արցունքը պիտի որոնէք, պիտի գտնէք Աննալիս և Շուշանիս եթէ ոչ կենդանի, գոնէ մեռած. ուրեմն եթէ խոստանում էք խնդիրս կատարել, ընդունեցէք վերջին հայրական հրաժարական համբոլը»։

Քանի որ Գաբրիէլը և Միքայէլը համբուրելով իրանց ողորմելի հօր սառը ձեռքը և դալկացած դէմքը կ'թրջէին արտասուքով նրա սպիտակ միրուքը, մահուան սուր մանգաղը վերջ դրեց ծերունու կեանքի մաշուած թելին։

ՓԱԹՄԱՅԻ ՎՐԵԺԸ

Աննալի և Շուշանի անհետանալու երկրորդ օրն էր. ծերունին արդէն իւր սառը գերեզմանի մէջ յաւիտենական քնով կ'ննջէր, բոլոր հարևան գիւղօրայքում յայտնուել էր Աննալի և Շուշանի անհետանալը. բայց թէ ովքեր էին փախցնողները, այդ միայն մէկը գիտէր: Դա Քեարիմ-բէկի կինն էր, որ իր և ամսնու մէջ եղած խիստ անբաւականութիւնների և իւր հագուստների պակասութեան պատճառով իմացել էր:

Փաթման վառուած ամուսնական նախանձով և աչքի առաջ ունենալով բէկին դէպի ինքը ունեցած սառնասրտութիւնը իւր տգեղութեան պատճառով, սկսեց վրէժինդիր լինել և նրա չարութեան առաջն առնել: Նա հանգամանօրէն նամակով մի հաւատարիմ ծառալի ձեռքով անմիջապէս յայտնեց իւր հայր Միւշտէխտին, որին ամբողջ Պարսկաստանը յարգելով մարդարէի տեղ կ'ընդունէր:


Միւշտէխտը իւր մի հատիկ աղջկայ սրտաշարժ նամակը ստանալուն պէս, գրեց հետեւեալ նամակները: «Մեծազօր, հաւատարիմ և սիրելի իշխանք, իմ ամենասիրելի՝ դստեր Փաթմալին, որին միայն է թողել վերնախնամ տեսչութիւնը

ալս վշտալի և վաղանցուկ աշխարհում ինձ ծերութեանս մէջ մխիթարելու, անարժան ալր Քեարիմ-բէկը, մոռանալով իւր մարդասպանութեան համար երկար տարիներով կրած նեղութիւնը, փախցրել է այն խեղջ կնոջ հանդերձ 10 ամեայ աղջկանով, որի ամուսնու անմեղ արիւնը բողոքում է անարդարութեան դէմ դէպի այն ամենաբարձրեալ Աստուածը, որի զօրութեամբ և թելադրութեամբ հրամալում եմ ձեզ իբրև իմ սիրելի որդոցս, որոնել այն անիրաւին և մատնել իմ ձեռքն առանց արիւն թափելու. իսկ ձեր նեղութեան փոխարէնը բացի Աստուծոյ վարձատրելուց, հայուհիներին թողում եմ, եթէ կամենաք, ձեր ցանկութեան: 'Ի վերջոյ ինչպէս Բէկի, նոյնպէս և ծառաների հասակները և գէմքերի գծագրութիւնները նկարագրելով կնքեց նամակները մէկը զրկելով Ա. և միւսը Բ. քաղաքի խաներին:

ԱՆՏԱՌԻ ՀԻՒՂԸ

Աննան երկու օր էր ոչինչ չէր կերած, նրա վարդագոյն դէմքը, սև վառվոռուն աչքերը դալ-կութիւն էին ստացել, նա առանց իսկապէս ծպտեալներին ճանաչելու նստած Շուշանի մօտ ձեռքը ճակատին դրած, տխուր՝ կարծես մտածում էր մի բան, որի կորստաթեր հետևանքը սարսափեց-նում էր նրան։ Այո՛, նա հոգեպէս տանջվում էր, նրա աղեղնաձև սև յօնքերի տակ նուազուած աչ-քերը երբեմն պալծառ աստղերի պէս փալլելով կար-ծես կանհետանալին սև ամպի տակ։ Նա խորը մտա-ծում էր թէ իւր և թէ անմեղ Շուշանի մասին, որը ուղղակի նայում էր մօրն աչքերից գլորւող արծաթափալլ կաթիլների վրայ։ Աննան գիտէր որ մեծ վտանգի մէջ են և շատ փորձանք դեռ կ'սպասեն իրենց, նա ինքը իրան ասում էր «փախ-չել՝ չեմ կարող, քանի որ չ'գիտեմ ո՞րտեղ եմ և ո՞ւր պիտի գնամ, մանաւանդ որ խստիւ կ'պահեն ինձ, զրկել ինձ և Շուշանիս կեանքից, արգելում են մալրական գութս և քրիստոնէական պարտքս»։

Վերջապէս Աննան կամալ ակամալ ստիպուած էր թողնել զինքը նախախնամողի անհասանելի կամքին, ընդունելով դժբաղդութեան մինչև ան-



գամ վերջին դառն մըուրը քամելու:

Սըրեգակը մօտ էր մայր մտնելուն, նրա անգօր ճառագալթները հազիւ ամենաբարձր լեռների գագաթները կ'հասնէին, ընտանի անասունները վերադառնում էին ուրախ ոստոստելով դէպի իրանց փարախները, երբ Քեարիմ-բէկը հարուստ պաշարով հասաւ մեզ ծանօթ հիւղին, որի մէջ Ասլանը իւր ընկերներով քաղցած սպասում էր:

Աննան՝ որ մինչև ալն չ'գիտէր իւր ում ձեռքով այնտեղ բերուիլը, բէկին տեսնելուն պէս, իմացաւ որ նա է այս չարութեան պատճառը և նրա անելանելի թակարդի մէջն է: Բէկը պարսկական լատուկ կեղծաւորութեամբ գլուխ տալով Աննալին, գնաց ծառաների մօտ:

Գիշեր էր, գետնափոր հիւղի մէջ եղենափալու ալրուելով սփռել էր իւր ճառագալթը, Շուշանը առանց խորը մտածելու, որը բարձր էր նրա մանկական հոգու և մտքի կարողութիւնից, գլուխը մօր ծնկնին դրած պառկել էր, իսկ Աննան պահապան հրեշտակի պէս հսկում էր իւր միամիտ դստեր վրայ:

Հիւղի մի անկիւնում անլսելի ձայնով խօսում էին, Աննան տեսաւ որ խօսողներից մէկը կանացի հագուստով անհետացաւ բէկից վերջին խօսքերը լսելուց յետոյ, «թող Ալիի սուրը և մեծ մարգարէ Մշամմետի անէծքը ինձ փշացնէ, եթէ ես անժամանակ մի որ և իցէ զանցառութիւն



անելու լինեմ ձեզ տուած խոստմանս հակառակ։
Դա Ասլանն էր, որ վեհանձնաբար պարտաւորեցրաւ բէկին Աննալին և Շուշանին անմեղութիւնը պահպանելու մինչև նրանց իսկ յօժարակամութիւն ստանալը։

Ա.ՍԼ.Ա.ՆԻ ԼՐՏԵՍՈՒԹՅԻՒՆԸ

Ասլանը հիւղից դուրս գալով, հանեց իւր կանացի վերնազգեստը և աշտանակեց իւր արաբ ձիի վրայ։ Կէս գիշերին հասնելով իւր տունը և փոքր հանգստանալուց յետոյ, հարցրաւ իւր կին Կովհարից «Բ՞նչ նոր լուր կայ, ուր է Սմայիլը։»

«Գիտէք, Ասլան, շարունակեց Կովհարը, մեր հարեան Ա, գիւղացի ողորմելի ծերունի Աքրահամը իւր հարս Աննալի և թոռն Շուշանի անհետանալու մասին սաստիկ կսկծից մեռնելուց մի օր յետոյ, Փաթմայ-խանումը Սմայիլին գաղտի զրկել է իւր հօր Միւշտէիտի մօտ և պատուիրած է ոչ ոքի չասել, դուք էլ ՚ի սէր Աստուծոյ այնպէս անէք՝ մեր երեխին վտանգի չ'տաք։»

—Միթէ չեն ճանաչում փախցնողներին, ըոպէական սրտացաւութիւնից յետոյ հարցրաւ Ասլանը Կովհարից։

—Ի՞նչպէս ճանաչեն, ասում են թուրքի կանալք են եղած։

—Թուրքի կանալք... ինչես ասում, կի՞ն փախցնէ, մեքենական զարմացմամբ շարունակեց Ասլանը, ախ թէ նրանք իմ սրի առաջը դուրս գալին...։


Ասլանը բոլորն իմանալուց լետոյ, ասաց որ
ինքը դեռ լոյսը չ'բացուած պիտի ճանապարհուի
Ռուսաց սահմանագլուխը դէպի բէկը, ուրեմն
«Կովհար ես արաբիս գարին ու դարձանը տամ,
դու էլ չմոռանաս ինձ համար պաշար ու հա-
գուստ պատրաստելու» Կէս ժամից լետոյ, երկու
ամօւսինները գրկախառնուելով պարզուեցին իրենց
հնամաշ անկողնի մէջ:

Լոյսը դեռ չէր բացուած, գիշերուայ լուռ-
թիւնը թագաւորում էր ամեն տեղ, կարծես լուս-
նեակը դադարել էր երկնային ովկիանոսի մէջ
լողալուց: Արաբը գարին կերած մի բնագդմամբ
սպասում էր ճանապարհորդութեան: Ասլանն էլ
բոլորովին պատրաստ էր թողնելու իւր հայրենի
օջախը: Ալդ անհամար փորձութիւնների մաղովն
անցած մարդը գրկելով իւր կին Կովհարին զգա-
ցուած ձայնիւ ասաց, «սիրելի, ես գնում եմ դէպի
ալնտեղ, ուր մահուան սարսափեցուցիչ սուրը
և հրացանի սպանիչ գնդակները պատերազմում
են կեանքի դէմ: Եթէ ճակատագիրն իմ ցանկու-
թեան հակառակ կզրկէ ինձ միւս անգամ ձեղ և
որդիքս տեսնելու, կ'իսնդրեմ շատ չ'մտածէք, ես
վստահ եմ որ իմ ասլանբալասի Սիւլէլմանը իբրև
արժանաւոր որդի կ'հոգայ ինչպէս ձեր՝ նոյնպէս
և իւր փոքրիկ եղայների պիտոյքը:» Ալս խօսքերը
ասելով համբուրեց Կովհարին և իւր երկու քնած
երեխաներին ու դուրս թռաւ տանից, շրջելով

արաբի սանձը դէպի Դեահռահի հիւղը տանող
ճանապարհը:

Ասլանը պիտի անցնէր Ս. գիւղի մօտով, նա
հասնելով Ս. և Ք. գիւղօրայքի սահմանները
բաժանող մեծ ընկուզենուն, կարծես թէ նրան
կանգնեցրին, նորա լիշողութեան մէջ զարթնեց
հին շատ անցքեր և նա կարծես լառմ էր մի
ծանօթ ձայն որ կոչում էր «Ասլան Ասլան, գուք
իմ ո՞ր վատութեան փոխարէնը կ'վճարէք, գուք
ի՞նչու մոռացիք իմ ձեզ արած այնքան լաւու-
թիւնները. եթէ բոլորն էլ մոռանալու լինէք, գո-
նէ հէնց ալս ընկուզենու տակ եղածը բաւականէ
որ լիշէք և իմ կինը ու զաւակս, որոց դժբաղ-
դութեան պատճառ դարձիք. ազատէք այն բար-
բարոս Քեարամի ձեռքից» Ասլանը սարսափի մէջ
ընկնելով, նորա երկաթեալ բազուկները թուլացան
և ձիի սանձը ընկաւ ձեռքից, նա լիշեց այն սոս-
կալի օրը, որ իշխանութեան հրամանաւ պիտի
իւր գլուխը կտրէին, եթէ Աննալի ալր Մարութը
մի նշանաւոր գումար չվճարէր զինքը պարտքից
ու մահից ազատէր, նա վայր իշնելով ձիից և
ծնկաչոք ձեռքերը դէպի երկինքը բարձրացրած,
արտասուքը աչքերին ներումն էր խնդրում Աս-
տուածանից:

Ասլանը հենց այն ըոպէին կարող էր հեռա-
նալ Քեարիմ-բեկից եթէ մի կողմից կենդանացած
խղճի զօրաւոր խալթը, միւս կողմից դէպի Աննան



և Շուշանը սաստկացած սրտացաւութիւնը և մի
այլ կողմից բէկի գազանաբարութիւնը արգելք
չ'լինէին։ Նա երդուեց ամեն կերպ աշխատել թէ
հայուհիների պատիւը պահպանելու և թէ նրանց
ազատելու միջոցներ հոգալու։ Նոր նոր թուչուն-
ները արթնանալով քնից, սկսել էին իրենց
փառաբանական ճռողոցը, երբ արարը խինջաց
ծանօթ հիւղի դրան։

Ասլանը առանձնանալով բէկի հետ, պատ-
մեց նրան իւր կնոջից լսածները առանց պակա-
սութեան։ Բէկը Ասլանին հետն առնելով դուրս
գնաց։ «Ասլան, ասաց, դուք որ իմ հաւա-
տարիմ ծառաներից մէկն էք եղած, ձեր քսանա-
մեայ ծառալութեան ընթացքում ես մի փոքր
անդամ անհաւատարմութիւն չեմ նկատած. այլ
միշտ ձեր հաւատարմութեան, հնարագիտութեան
և վեհանձնութեան վրայ զարմացած եմ. այժմ
հասել է այն ըոպէն՝ որ պիտի թողէք ծառայա-
կան պաշտօնը և իբրև եղբայր ամեն կերպ աշխա-
տէք ինձ Փաթմայի և Մուշտէիտի որոգայթնե-
րից ազատելու։»

ԳԱԶԱՆԵՐԻ ԱՆՏԱՌԸ

Ասլանը նկարագրելով որ ինչեր պիտի անէ
Միւշտէիտը իւր մի հատիկ աղջկայ համար ասաց
«բէկ, ես որ տարիքով եմ ձեզնից և դեռ հօրդ
ժամանակից ծառայել և ծառայում եմ ձեր տան
ամենայն հաւատարմութեամբ, պարտք եմ համա-
րում տալ ձեզ իմ անկեղծ խորհուրդը, քանի որ
այժմ էլ ինձ եղբայր էք համարում։ Այժմ խիղճս
տանջում է ինձ և վկայում որ մեծ անիրաւու-
թիւն է հայուհիներին փախցնելը։ Վրեժինդիր
մարդն երբէք չէ կարող հանգստութիւն գտնել։
Դէպի վրիժառութիւնը և չարութիւնը յօժարա-
կամ մարդը լաւ իմացէք որ ապագայում չէ կա-
րող մնալ առանց նեղութիւնների, թշուառու-
թիւնների, պատիժների, տանջանքների և զղջում-
ների։ Քանի ուշ չէ՝ շատ լաւ կլնէր հայուհինե-
րին ազատ թողնէինք, մանաւանդ որ նրանց
տունը մեզ վրայ երախտիք ունի։ Ապերախտու-
թիւնը լաւ բան չէ, ինդիրում եմ լսեցէք ինձ,
լարգեցէք ինդիրս։ Մարդ պիտի աշխատի լաւ
բարեկամների թիւը շատացնել, որովհետեւ որքան
բարեկամ՝ նոյն չափ պաշտպան և զգայարանքներ։
Ազատեցէք անմեղ հայուհիներին և կպակասեն

արդար և իրաւացի թշնամիներիդ թիւը յանձին կնոջ, աներոջդ և հայերի: Յանցանքդ գետէ կինդ, աներդ կնշանակէ բոլորը պիտի իմանան: Բայց նկատելով բէկի չափազանց բարկութիւնը, որոշեց փախչելու տեղը, որի մասին սկսեց պատմել թէ ինչպէս ինքը շատ տարիներ առաջ Ա. Քաղաքից որսի դուրս գալով և ճանապարհը կորցնելով ընկել էր մէկ ահագին խոր անտառի մէջ, որի դարեւոր սաղարթախիտ ծառերի գագաթները կարծես երկինքն էին հասնում և արեգակի ճառագայթներն անզօր էին նրա խորքը հասնելու:

Անտառի մէջ տարիների ընթացքում բուսած և կրկին տմկած խոտը, ծառերից թափուած բորբոսնած տերևները և վայրենի պտուղները հաստատ ցոյց էին տալիս որ այն տեղ բացի վայրենի թռչուններից և գազաններից ոչ ոք մինչեւ այն օրը մահկանացուներից ոտք չէր դրել:

Արեւ մօտ էր մալր մտնելուն, յուսահատութեանս չափ չ'կար, բաւականին նեղացած էի, տերևների խշխոցը երկիւղ էր ձգում սիրտս, մտածեցի գազաններից, որոց գոռուն գոչիւնը սարսափեցնում էին ինձ, ազատելու համար գիշերուայ տեղ գտնել, վերջապէս հասալ մէկ քարափի, որի բարձրութեան վրայ նկատեցի մէկ քարայր: Մեծ դժւարութեամբ բարձրացալ այն տեղ, նրա միջից գահավիժում էր մէկ ականակիտ ջուր. բնութիւնը պատրաստել էր այս անմարդաբնակ

քարայրի մէջ մէկ հրաշալի միապաղաղ ահագին սենեակ, որի յատակին մի առանձին փափկութիւն էր տուել վայրենի այծերի կտիտը:

Ես ինձ գազաններից ազատ էի համարում, լաւ համարեցի կրակ վառել քարայրի մուտքում, որով հազիւ մէկ մարդ կարող էր մտնել: Կրակը կարճ ժամանակից լուսաւորել էր անտառը, նրա ճարճատումները խլացնում էին ականջներս, նրա հազարաւոր միմեանց ետևից վայր թափուող պայծերից քարայրի ստորոտում չորացած խոտերը և թուփերը վառուելով հրդեհի մի գոտի էին ներկայացնում, սովածութեանս չափ չ'կար, միայն երախտաւոր քունը ինձ ամեն ինչ մոռանալ տուաւ:

Լոյսը բանուալու մօտ էր որ խառն ու սարսափեցուչից ցնորքները զարթնացըն ինձ, յոգնածութիւնս անցել էր, կրակը հանդարտուել, ամեն տեղ տիրում էր լուսաթիւն, քանի որ մտածում էի թողել այս դժոխային տեղը, մի ձայն հասաւ ականջիս, դա շան հաշիւն էր բայց շատ հեռու: Վերջապէս լոյս դնելով Աստուծոյ վրայ, վերառի հրացանս և թողեցի քարայրը:

Մէկ ժամից յետոյ ես անտառի խորքում էի և բացի գազանների, ուրիշ ձայն չէի լսում, շատ անգամ ես ինձ ազատելու և մի որ և իցէ ուրախացուցիչ ձայն լսելու համար, բարձրանալով ամենաբարձր ծառերի գագաթները մի ծառից միւսն էի անցում:

Յանկարծ մի բան եկաւ իմ միտքը, լիշեցի
ես որ Ա. քաղաքից որսի դուրս գալուց գէպի
հիւսիսարևմուտ եմ եկած, ուրեմն պէտի հարաւ-
արեելք դառնամ. մի կողմից արեգակի ծագումով
և միւս կողմից ծառերի բուների վրայ գէպի հիւ-
սիս աւելի առատութեամբ բուսած մամուռներովը
օգտուած, հանեցի ինձ մի ամենաբարձր ծառա-
զարդ լեռան կատարը: Վերջապէս արեգակը մօտ
էր իւր շրջանը կիսելու, երբ ես էլ թողնելով
այն տարտարոսը հասալ մի խաշնարածի:

Ալդ ինձ անծանօթ բարերար հովուի մօտ
քաղցածութիւնս լքցնելով, հանգստացալ նրա
վրանի տակ: Երեկոյ էր, հովուին մօտ գտնվում
էին և նորա ընկերները, բոլորեքեանս ըռնած
էինք անշուք սեղանի շուրջը և նրանց հարցմանը
համաձայն պատմեցի թէ իմ որտեղացի լինելս, և
թէ խոր անտառի մէջ ընկնելս: Իյ ասածների
վրայ կասկածում էին, որովհետեւ նրանք ասում
էին այն գաղանների անտառ է և ինչպէս վկա-
լում են մինչև անգամ ամենածեր մարդիկ, մին-
չև օրս այնտեղ մարդ չէ գնացած:

Ասլանը իւր պատմութիւնը վերջացնելուն
պէս, Քեարիմ-բէկը, ասաց «Ասլան, էլ ինչու
կ'ուշանանք, կարծես ընութիւնը ալդ տեղը հէնց
մեզ նմանների համար է ստեղծել, եթէ մարդիկ
թողած լինեն ալդ իւր վաղեմի կուսականու-
թեան մէջ»:

Նախ քան մեր ճանապարհութիւլը հարկաւորէ
մեզ հաց և Աննայի համար փափախ. Խուրշիտին
այս շրջակալում հազիւ թէ ճանաչեն, ուրեմն
շատ լաւ կանէիք բէկ որ նրան յանձնէիք այս բա-
ներն-ասաց Ասլանը: Կէսօրուայ ճաշը վերջացել էր,
բէկը իւր երկու ծառաներով կանաչ գետնի վրայ
ննջում էր, Խուրշիտը արդէն յանձնարարական
գործով հեռացած էր. միայն Ասլանն էր որ հիւղի
շուրջը կ'հսկէր:

Խուրշիտը իւր գործը կատարելով վերադար-
ձել էր, լուսինը գիշերուալ թագուհին դուրս գա-
լով առագաստից փայլուն աստղերով երկնային
կապուտ տիեզերակալ ովկիանոսի մէջ իւր ծո-
վագնացութեան ընթացքն էր կատարում. ծա-
ռերի տերևների զովարար սոսաւիւների հանդարտ
խշչոցը, բարեխառն օդը մէկ առանձին հոգեկան
ուրախութիւն էին ներշնչում մարդուն: Ասլանը
որ մինչեւ այն օրը չէր խօսած Աննայի հետ, մօ-
տենալով նրան մեղմ ձախնիւ ասաց «Թշուառ
քո՛յը, բէկը՝ որ ձեր տժբաղդութան պատճառ է
եղած կամենում է տեղափոխվիլ, ձեր օգտի հա-
մար ահա այս տղամարդի հագուստը և ալս դա-
շոյնը գուցէ կ'հարկաւորուի»:

Աննան հիւղը եկած օրից բէկին երդմնե-
ցնելու ժամանակն էր նկատել Ասլանի կարեկ-
ցութիւնը, որի խօսքը յարգելու համար իւր հագ-
ուստի վրայով հագնելով նրա տուած հանդերձը և

գլխի արծաթեալ զարդերը գրապանը գնելով սև սաթի նման մազերը անհետացրաւ ոչխարի մորթուց բրդոտ փափախի տակ: Խուրշիտի ձին նստել էր Աննան Շուշանի հետ, պաշարեղէնը և հիւղի մէջ առաջուց ունեցած ամանները Աբբասը և Ալին էին վերառած, իսկ Խուրշիտը երբեմն Ասլանի և երբեմն բէկի գաւակիր նստելով գնում էին:

Մէկ ամսից յետոյ Ասլանը իւր փոքրիկ խըմբով հասաւ գազանների կոչուած անտառը: Նրանք երբեմն ձիով և երբեմն ոտքով հասան այն ահազին խոր ձորակին, որը առանց ոչինչ փոփոխութեան մնացել էր իւր վաղեմի դրութեան մէջ, նրա արևեմտեան կողմում քարափի վրայ Ասլանը նկատեց քարայրը, որից մի ժամանակ ազատվելու համար չէր խնայած իւր բոլոր աշխատանքը: Քարայրի մուտքը տանող նեղ շաւիղը համարեա անհետացել էր թփերի խոտութիւնից: Քանի քայլ հեռու, Ասլանը նկատեց քարայրի մէջ մի ալծեամի իւր ձագով և իսկոյն բռնելով Խուրշիտի օգնութեամբ ընծալեցին Շուշանին:

Ցերեկները բէկը երկու ծառաներով միշտ որսի էր գնում, նա չէր խնայում պատահած գազաններին և էրէներին: Հրացանների անընհատ ձալներից, գիշերուալ քարափի շրջագալքում վառուած կրակներից գազանները հեռու էին փախած, բէկը այս տեղից չէր հեռանալ եթէ անլաջող դէպքերը չ'հարկադրէին:

Աննան բոլորովին մոռացած իւր կանացի տկար բնութիւնը, յոյսն Աստուծոյ վրայ դրած աշխատում էր Ասլանի աշակցութեամբ Շուշանին միշտ բէկի գազանական կրքերից տզատելու, կարացածին չափ բարոլապէս նրան կրթելու, քրիստոնէական հաւատի սրբութիւնը նորա փափուկ սրտի վրայ դրոշմելու և իւր իմացած աղօթքները սովորացնելու, Շուշանն էլ օրէկան քանի անգամ մօր ասածները կրկնելուց յետոյ, պարապ ժամերը խաղում էր իւր ընտելացած ալծեամների հետ:

Աննան գուցէ բէկի մի հարուածով շատ առաջ հոգիների աշխարհը գնացած և Շուշանը նորա անասնական կրքերին զոհ դարձած լինէին, եթէ Ասլանը ամեն մի ըոպէ չհսկէր նրանց վերայ և Շուշանի ջահիլութիւնը ու նրանից յառաջ գալի վնասները առարկելով շատ անգամ չսպառնար բէկին հակառակ դէպքում զինքը միայնակ թողելու և իսպառ հեռանալու: Բէկն էլ շատ լաւ իմանալով որ առանց Ասլանին ոչինչ չէ կարող անել, կամայ ակամայ ստիպուած էր իւր աջ բազուկին չ'հակառակուիլ:

ԽԱՆԵՐԻ ԿԱՐԴԱՐԱՒԹՅՈՒՆՆԵՐ

Թողենք բէկին իւր փոքրիկ խմբով քարայրի մէջ, և գառնանք դէպի Մուշտէիտի նամակ ստացած խաները: Երկու խաները նամակ ստանալուն պէս, իրենց կառավարութեան տակ գտնուող վալիներին, նայիքներին և քեանդխուտաներին հրամայեցին որ բոլոր պատահած անձանօթ մարդկանց, որոնք օրինաւոր հաստատուած թուղթ չեն ունենալ իրենց ով լինելու և որտեղ գնալներուն մասի, իսկոյն բռնեն և ներկայացնեն ուղղակի իրենց:

Պարսից խաժամուժ ամբոխը սովոր չ'լինելով ալսպիսի խորթ կարգադրութիւնների, որը շատ անգամ իրենց անզգուշութիւնից մեծ նեղութիւններ և վնասներ էր պատճառում մէկ օր իրենց հոգեոր ներկայացուցիչներով հաւաքվել էին խաների դուռը. բայց լսելով նըանցից որ այդ կարգադրութիւնը ժամանակաւոր արուած է Մ. քաղաքի սրբազնասուրբ Մուշտէիտի հրամանով, բոլորովին լուռ ու մունջ դարձան իրենց տեղը:

Տասն և հինգ օր բէկը քարայրը գալուց անցել էր, պաշարն էլ վերջանալու վրայ, Ասլանը միայն ծանօթ լինելով այն կողմերին պիտի գնար

պաշարի, բայց նա չէր ուզում Աննալին և Շուշանին միախակ թողել, ուստի նա բէկին իւր վճռողական վերջին զգուշացնող խօսքերը կրկնելուց յետոյ, իւր ազգակից Աբբասի հսկողութեանը թողելով Աննալին և Շուշանին, կէս օրից շատ առաջ առանց խաների նոր կարգադրութեան գիտակ գուրս եկաւ քարայրից և նրան ստորոտին հասնելով սկսեց ծառերի վերայ նշան անել, այնպէս որ մուլթ գիշերը անգամ կարելի էր նկատել ծառերի բուների վրայ անկեղեւ պայտաշափ սպիտակ տեղերը: Ասլանը ուղղուելով գէպի հարաւարեւելք և Ալիւն թողելով անտառի եզրում նշան արած ծառի մօտ, քայլերն արագացրաւ գէպի Ա. քաղաք:

Երեկոյեան ազանի ժամանակ՝ Ասլանը մտնելով քաղաքի նախադռնով. նկատեց մի խրճիթի առաջ կանգնած պառաւի, մօտեցաւ նրան և ասաց. «մալրիկ, ես մի անձանօթ օտարական եմ, ինզրեմ ինձ գիշերելու տեղ շնորհէք»:

—Աստուծոյ հիւրն էք, ես չեմ արգելում ձեզ, միայն թէ աղքատ եմ ոչինչ չունիմ, ասաց կիսով չափ կոյր պառաւը:

—Հոգ չէ, մալրիկ, ասաց Ասլանը ձեռքը գրպանը ձգելով, ահա փող որքան և կամիք, պատրաստեցէք ինչ հարկաւորն է, միայն չ'մոռանաք բաւականին հաց, բըինձ, իւղ, միս և մի փոքր մրգեղէն առնելու, որսկհետև ես ունիմ

ընկերներ, որոնք ինձ-պէս քանի օր է հացի երես
չեն տեսել գուցէ նրանք ևս գան ալստեղ քանի
օր մնալու:

Պառաւը թողնելով Ասլանին իւր տանը, ու-
րախ ուրախ գնաց իւր հարեանի որդի Բէհրուտի
մօտ «Բէհրուտ, գնանք շուկան (բազար) հաց ու
միս առնելու քեզ էլ փող կ'տամ»:

—Երազ լինի, ի՞նչ ես ասում, քեզ ո՞վ կ'տայ
հաց ու միս, զարմացմամբ հարցրաւ Բէհրուտը:

—Որդեակ, դու ծաղրում ես ինձ, միթէ
Աստուած աղքատներին հարուստների ձեռքով չէ
կերակրում, մեծ է Ալիի Աստուածը, վեր կաց
տեղիցդ ահա քեզ նեղութեանդ համար մի զը-
ռան։ Բէհրուտը փողը տեսնելուն պէս՝ վեր թը-
ռաւ տեղից և պառաւի ձեռքից բռնելով գնացին
շուկան։

Այն մարդիկ, որոնց մօտ պառաւը գնացած
էր բան գնելու, ճանաչելով մուրացիկ Ֆարիւն,
հարցնում էին «ի՞նչ կայ, ի՞նչ պատրաստութիւն
է, և ո՞րտեղից է քեզ ալդ փողը պառաւ։»

—Է՛հ որդիք միք հարցնիլ, Աստուած ինձ
համար մի բարի հիւր է դրկել, որը քանի օր պի-
տի մնալ իմ տանը։

Բէհրուտը ծանր խուրջինի տակ տնքալով,
պառաւի ձեռքից բռնած, հասաւ տուն և Ասլա-
նի հետ հաց ուտելուց լետոյ գնաց իրենց
տուն, պառաւն էլ իւր հնամաշ անկողինը տալով

Ասլանին ու հանդիստ քուն բարեմազմելով, հե-
ռացաւ գէպի իւր հարեանի տունը, Ասլանն էլ
հէնց ալդ էր ուզում։

Քաղաքի հասարակ գասը քնած էր, մի քա-
նի նշանաւոր տների մէջ հեռուից երեսում էր ճրա-
գի աղօտ լոյս, երբեմն երբեմն լսվում էր գիշերա-
պահների միմեանց զգուշացնող ձախնը։ Ասլանը
պնդացնելով խուրջինը՝ շալակեց ու դուրս թռաւ
տանից և հասնելով Ալիւն, բռնեցին գէպի քա-
րալը տանող նշան արած ծառերի շարքը։

Լոյսը գիշերուայ քօղը կ'պատռէր և հրե-
ղէն գունդը իւր փառաւոր կառքով հանդարտ
վեր կ'բարձրանար և իւր շողշողուն ճառագալթները
ջրերի վրայ ձգելով նրանց փողփողալովը հալած
ուկու մի վտակ կ'ձեւացնէր։ Բէկը սովորականին
համաձայն որսի էր գնացած, Աննան քարայրի մի
անկիւնում առածին ծնկաչոք իւր աղօթքն էր
կատարում։ իսկ Նուշանը Ասլանի բերած մրգեղէ-
նից իւր այծեամներին մասն էր տալիս։ Քարալը
թողելով մի կարճ ժամանակ իւր խաղաղ դրու-
թեան մէջ, դառնանք գէպի Ա. քաղաքը։

Ա. քաղաքի խանի փառաշները հացթուինե-
րի մէկի խօսքով հասել էին պառաւի տանը հէնց
այն ժամանակ, երբ պառաւը քարացած իւր հիւ-
րի անհետանալուն վրայ, ինքն ինքը խօսելով կամե-
նում էր դուրս գնալ կարծես Բէհրուտին կանչելու։

—Պառաւ ուր ես գնում, ինչու երեկոյեան
չես լայտնել խանի պատուէրի համաձայն հիւրիդ

մասին. այժմ նա ո՞րտեղ է:

—Ես էլ նրան եմ վնտում, սատանան գիտէ որտեղ է գնացել. իսկ պատուէրի համար ես ոչինչ չ'գիտեմ պատասխանեց պառաւը: Փառաշներն առնելով պառաւին իրենց հետ՝ պատահած անցքի համար յայտնեցին խանին:

Խանը սկսեց պառաւից հետևեալ հարցելն անել: «Հիւրիդ անունն ի՞նչ էր, ո՞րտեղացի և ուր էր գնում»:

—Դրանց և ոչ մէկի համար չեմ հարցրել, պատասխանեց պառաւը:

—Լաւ, քանի տարեկան կ'լինէր, և ինչպիսի դէմք ունէր:

—Ես լաւ չեմ տեսնում, երեկոյեան իմ հարեւան բէհրուտի հետ միասին հաց կերանք, նա կարողէ ձեզ բոլորը պատմել, ողորմած տէր, ահա և հիւրիս ինձ տուած փողերից:

Գանի որ խանը ուշադրութեամբ զնում էր փողերը, բէհրուտը՝ որ 20 տարեկան կ'լինէր, սաստիկ երկիւղի մէջ, խորին երկրպագութեամբ կանգնեց խանի առաջ:

—Դու երեկոյեան տեսմը պառաւի հիւրին:

—Այո՛, ողորմած տէր:

—Նրա անունը չիմացար:

—Ոչ.

—Նա քանի տարեկան կ'լինէր և կարո՞ղ ես ինձ նորա դէմքը նկարագրել:

—Նա 50—55 տարեկան, դէմքն ախորժելի, մազերը համարեալ թուխ, բեղերը երկար, լոնքերը խիտ և աղեղնաձեւ, աչքերը կրակոտ, արծուաքիթ, յաղթանդամ մարդ էր պատասխանեց բէհրուտը:

Դատ լաւ, ապրիս, հագուստը, հարցրաւ խանը:

—Սև շալից չուխալ (զարփղի) ծմերուկի գոյն զատաք արխալուզ, սպիտակ շալից շալվար, սև փափախա: Խանը բէհրուտի ասածները համեմատելով Միւշտէիտի գրածի հետ, իմացաւ որ անծանօթն Ասլանն է եղած, մանաւանդ որ գրամները նորա երկրում կտրվող գրամներիցն էր: *)

Խանը իսկոյն ձիաւորների մի խումբ զրկեց գլխաւոր անցքերը բռնելու և նրանց կալանաւորելու, և մի քանի փորձառու մարդկանց էլ ձգեց անտառներն որոնելու. իսկ իւր հաւատարիմ դրանիկներից երկուսին հրամայեց ծպտեալ հագուստով գիշեր ցերեկ պառաւի տանը հսկել: Տասն օր անցել էր այդ անցքից, բոլոր հետախուզութիւններն անօգուտ էին մնացել, բէկի պաշարն էլ վերջանալու մօտ էր:


*) Հին ժամանակներում իւրաքանչիւր թէ ծագումով և թէ կարողութեամբ նշանաւոր Խան իւր անունով առանձին դրամն ունէր, որը բնդունվում էր պարսկաստանի ամեն կողմերում:

ԱԼԻԻ ԲԹՆՈՒԻՒԼԸ



Ալին Ասլանից հետեւեալ խօսքերը լսելուց յետոյ, «նշան արած ծառերը ձեզ ուղղակի կ'տանեն հասարակաց ճանապարհը, քաղաքը մտնելուն պէս կ'նկատէք աջ թեփ վրալ մի խրճիթ, որի մէջ բնակվում է մի աղքատ պառաւ կին, ինչ հարկաւորն է նա կպատրաստէ և գուք կանհետանաք այն ժամանակ՝ երբ նա կ'հեռանալ դէպի իւր հարեանի տունը, միայն զգուշացէք ինձ համար ոչինչ չասել»:

Ալին թողելով Աբբասին նշան արած ծառի մօտ, ստացաւ խուրջինը և հանելով Աբբասի մոռացմամբ խուրջինի մէջ թողած կանացի հագուստը ձգեց ու հեռացաւ դէպի քաղաք։ Նա հասել էր պառաւի տանը, պառաւը չ'կար. իսկ նրա տան վրալ գաղտնի հսկողներից մէկը կալծակի արագութեամբ լալտնել էր խանին։ Ալիւն սիրտը տրոփում էր, կարծես նա գուշակում էր ինչ և իցէ մի վատ բան, ուզում էր թողել խրճիթը, երբ քանի փառաշներ շրջապատելով նրան տարին խանի մօտ։



Խանը Մուշտէիտի նամակի մէջ նկարագրած
գծագրութիւններին լաւ ուշ դարձնելուց յետով,
հարցրաւ «Ալի՛, ընկերներդ որտեղ են»:

Ալին գոյնը թռած, «ողորմած տէր ես միալ-
նակ եմ»:

— Ի՞նչպէս միալնակ, քո ընկերներդ սրանք
չեն, տալով բոլորի անունները, որոնցից Ասլանը
տասն օր առաջ ալս տեղ է եղած զայրացած ա-
սաց խանը:

— Ես ոչինչ չ'գիտեմ, պատասխանեց Ալին:

— Վաղը կամ ինքնին կ'խոստովանուիս, կամ
սատանալական տանջանքների գործիքները կ'մա-
շեն կեանքդ:

Ալին մի գարշահոտութեամբ լի, նեղ, խոնաւ
բանտի մէջ էր, որի երկարութեամբ հազիւ թէ
մի մարդ կարող էր պառկել, նա աւելի նման էր
գերեզմանի:

Գիշերն անցել էր, խեղճ Աբբասը ծառին
թիկն տուած սպասում էր, ամեն մի ձայն, մի
տրոփի, նրա լուսը ոչինչ էին դարձնում: Բէկը և
Ասլանն էլ շատ անհանգիստ էին Ալիւն և Աբբա-
սի ուշանալու համար:

Քանի արեգակը կը պատրաստուէր իւր ոսկե-
գոյն վարսն աշխարհին ցոյց տալու, Ասլանը թռ-
ղեց քարալըն իւր ընկերներին որոնելու. իսկ Աբ-
բասը կանացի հագուստով հասել էր քաղաք մի
որ և իցէ տեղեկութիւն իմանալու: Նրա ուշա-

դրութիւնը գըաւեց քանի մարդկանց հետևեալ խօսքերը «անունը Ալի է, պառաւի տանն են բռնել»:

Աբբասը բոլորովին երկիւղի մէջ մօտեցաւ մի ջահիլ հացթուխի, «խանում ինչ կ'հրամալէք»:

—Հաց եմ ուզում:

Տղան հացը կշռելով, «հրամալեցէք որտեղ հարկաւոր է հասցնեմ»:

—Մինչեւ մեծ ուռենու տակ, մեր ծառալքը շուտով կ'հասնեն մեզ:

—Ալսօր ես մի բան լսեցի չ'գիտեմ դու ևս լսած ես թէ ոչ, հարցրաւ Աբբասը:

—Պառաւի տանը բոնուած մարդի համար կ'լինի խօսքդ, այնպէս չէ շարունակեց հացթուխը, ասում են թէ նա մի բէկի ծառայ է և միայնակ չէ, Միւշտէխը գրածէ խանին որ անպատճառ բռնել տալ նրանց:

Հացթուխը հազիւ թէ փոքր հեռացել էր, Աբբասն անցաւ ճանապարհից ցած թփերի մէջ և հացը չարշաւում պնդացնելով, անհետացաւ դէպի քարալը տանող նշան արած ծառերը: Ասլանը հանդիպելով Աբբասին անտառի մէջ հարցրաւ. Ալլ տղայ, ուր էիք այսքան ժամանակ:

—Խօսելու ժամանակ չէ, շուտ արէք փախչենք որ կորած ենք, պատասխանեց Աբբասը լայտնելով թէ Ալիի բոնուիլը և թէ իւր լսածները:

Բէկը և Ասլանը շատ տիսուր, իմացել էին որ Ալին Միւշտէխտի հրամանաւ արդէն խանի ձեռքումն է: Բէկն այս անգամ էլ մերժեց Ասլանի հայուհիներին ազատելու համար արած խնդիրը:

Ասլանն էլ թագաւորող լոռութիւնը ընդհատելով ասաց. «Հարկաւոր է օր առաջ փախչել, բայց թէ ուր, կ'դժուարանամ որոշել, կանչենք Աբբասին և Խուրզիտին գուցէ նրանք մի տեղ իմանան»:

—Սիրելիք վտանգը մօտ է, պիտի փախչինք. բայց գիտէք մի ալնպիսի տեղ, ուր կարողանանք ապահով մնալ, հարցրաւ բէկը:

Աբբասը կարճ լոռութիւնից լետոյ, անցնենք դէպի Բ.-ի. կողմերը:

—Աբբաս, ասաց Ասլանը շատ լաւ կ'լինէր, եթէ ճանապարհն իմանալինք:

—Ես քանի անգամ գնացած եմ, միայն ճանապարհները շատ վատ են, մանաւանդ ջրի պակասութեան պատճառաւ, պատասխանեց Աբբասը:

—Հոգ չէ՝ միայն թէ փախչինք այդ գաղաններից հրամայաբար աւելացրաւ բէկը:

Թողելով բէկին իւր փոքրիկ խմբով քարալը մէջ փախչելու պատրաստութիւնները հոգալու, դառնանք դէպի բանտարկուած Ալին:

Ալին բոլորովին գունատուած և շրջապատուած քանի փառաշներով, ծանը շղթալի տակ կանգնած էր խանի դրանը:

—«Ալի, կեանքդ ալժմ իմ ձեռքումս է. կեանք կամ մահ քեզանից է կախուած և եթէ իմ բոլոր հարցերին արդարութեամբ կ'պա-

տասխանես, ոչ թէ միայն կազատես կեանքդ. ալ և կարժանանաս վարձատրութեան, ուրեմն ասիր որքան ժամանակէ փախցրել էք հայուհիներին, որի հրամանաւ, այժմ ընկերներդ որտեղ և քանի հոգի են, ինչպիսի պատրաստութեամբ, հարցրաւ խանը:

Տէր, գթացէք վրաս՝ երիդասարդ եմ և գարնան հասակում, մահը զարհուրելի է ինձ, ձեր գեղեցիկ դէմքի վրալ գութ և արգահատութիւն է նկարուած, ուրեմն լեզուդ մահուան վճիռ չպիտի կարդայ, ես կասեմ ճշմարիտը:

Քեարիմ-բէկի հրամանաւ ահա երեք ամիս է որ փախցրել ենք հայուհիներին, բէկն ունի ալժմ իւր մօտ երեք ծառայ Ասլան, Աբբաս և Խուրշիտ, հարուստ զինապաշար և գտնվում են քաղաքիս հիւսիսաբևմտեան կողմում մի անսահման և անեզր ծովի նման անտառի մէջ, որի մուտքը՝ մարդ հեշտութեամբ, բայց ելքը՝ հազիւթէ կարող է գտնել, պատասխանեց Ալին:

— Ապիրատ, ինչպիս կարելի է այն գազանների անտառում բնակուիլ, այն տեղ մինչեւ օրս մարդ չէ գնացած, բարկացած գոչեց խանը:

— Ողորմած տէր, արդար էք հրամալում, մեր այն տեղ գնալից յետով, օր չէ եղած որ մի քանի գազան չ'սպանէինք, այժմ շատ հեռու են փախած և եթէ գուք կասկածում էք իմ խօսքերի վրայ՝ կարող եմ ցոյց տալ, ասաց Ալին:

— Խօսքերիդ ճշմարտութիւնիցն է կախուած կեանքիդ թելը, տարէք ուրեմն սրան և լաւ հըսկեցէք մինչեւ վաղը ես կ'կարգադրեմ փոքր լոռւթիւնից յետով, ասաց խանը:

Աննան բէկի և ծառաների տխուր գէմքից, Ալիւն չերեալուց, գուշակում էր որ մի բան կայ. բայց թէ ինչ է, իսկապէս չգիտէր: Առաւօտեան նախաճաշիկը սովորականից շուտ անելուց յետով, բէկի հրամանաւ Խուրշիտը սկսեց ամանները և պաշարը պնդացնել:

Արեգակի վերջալուսն աներեոյթ լինելու մօտ էր, գիշերը մօրը ծոցից դուրս գալը սկսած՝ ջինջ պաղպաջուն ցողի երթևեկներն օդին մէջ խաղալով ծաղիկների ու կանաչների վրայ իջնելով նրանց կենդանութիւն կ'տային, եթե Ասլանը մօտեցաւ Աննալին և ասաց «Քոյլիկ պիտի գնանք չ'մոռանաք հագուստդ փոխելու»:

Աննան Շուշանի ձեռքից բռնած իւր վերջին հրաժարականը տալիս էր քարայրին, Շուշանը չէր ուզում թողել ալծեամներին, որոնք պիտի մորթուէին, եթէ Աննան արգելք լինէր: Աննան արտասուքն աչքերում կարծես ալսպէս էր ասում իւր սրտի մէջ, «գնացէք, աղատ էք իմ սիրելի և անմեղ ալծեամներ, թող Աստուած մեղ ես հասցնէ այդ երջանիկ ըոպէն»:

Միւս օրը խանի հրամանաւ ձիաւորների մի ընտիր խումբ զբահաւորուած պատրաստ սպա-

սում էր քաղաքի արքունական ալգիին կից հրապարակի վրայ, երբ խանի նայիթ Ռասիւլ-բէկը արաբական ձիի վերայ Ալիւն և խումբը հետը առաջ ճանապարհ ընկաւ դէպի յայտնի անտառը:

Ռասիւլ-բէկը հրամայեց խմբին պաշարել անտառը. իսկ ինքը քանի քաջ մարդիկներով բռնեց Ալու ցոյց տուած նշան արած ծառերի շարքը: Լոռւթիւնը թագաւորում էր անտառի մէջ, նըրանք հասին քարայրին, որտեղ բացի ալծեամներից ոչինչ չ'գտան:

Անպիտան ուր են չարագործները, ինչպէս փախցրիր, հարցրաւ զայրացած բէկը:

—Ես չեմ փախցրել երևի նրանք մի բան իմանալով փախած են, այս ալծեամները մեր այստեղ եկած օրն ենք բռնել տուել Շուշանին, ահա տեսնում էք երախալի ուլուքներիցն է նրանց վրգին, կնշանակէ որ նրանք անցեալ երեկոյ և կամ այսօր են փախած, որովհետև դեռ օջաղի կրակը չէ մարած, պատասխանեց Ալին:

Ռասիւլ-բէկը ամբողջ անտառը տակն ու վըրայ անելուց լետոյ, վերագարձաւ դէպի քաղաք իւր հետ ալծեամները բերելով և եղելութիւնը լայտնեց խանին:

—Գուցէ Ալին սուտ է ասած հարցրաւ խանը:

—Ոչ՝ նրա ասածներն ուղիղ են, ձեր կասկածները թող ցըեն օջաղի դեռ չ'մարած կրակը, ձիաների սմբակների հետքը և քարայրի մէջ բռ-

նած երկու ընդելացած այծեամները, որոնք բերած եմ ձեզ համար, պատասխանեց Ռասիւլը:

Խանը իւր առանձնասենեակում մտածում էր երբեմն երբեմն ճեմելով և ձեռքերը տրորելով և երբեմն ոսկեգլուխ զալեանը ծխելով, նա ընկնելով թիկնաթոռների մէկի վրայ, հասաւ այս եզրակացութեան. Քեարիմ-բէկն իւրեւ յանցաւոր չվերադառնալ իւր հայրենիք, այստեղ էլ իմանալով որ իրան որոնում են փախել է, բայց թէ ուր, ո՞ր կողմ, Ուուսացը՝ ալժմեան պատերազմի առթիւ համարեա անկարելի. իսկ Տաճկաց՝ շատ դըժուար և վտանգաւոր, ուրեմն նա անպատճառ պիտի անցնէ Բ. կողմերը, որտեղ նրանց ոչ ոք չէր ճանաչիլ, եթէ Միւշտէիտը գրած չլինէր, որի համար անկարծիք նա ոչինչ չգիտէ:

Արևն իւր առաւօտեան ճառագալթը Ա. քաղաքի արևմտեան կողմի բարձր լերան գագաթին ձգելով կարծես հրդեհել կուզէր, Ռասիւլ-բէկը խանի մանկաւիկներից մէկն ետեկից ձգած, օձապտոյտ ելեէջներով բարձրանում էր դէպի խանի առանձնասենեակը. խանը ընդհատելով տիրող լըռութիւնը. «Ռասիւլ, ինչ ես կարծում, դէպի որ կողմ փախած կ'լինեն:

—Դէպի Բ. որտեղ նրանց չ'պիտի ճանաչեն:

—Ուրեմն քո կարծիքը նոյն է՝ ինչոր իմս, ուստի հարկաւոր է օր առաջ մեր և Բ.-ի սահմանագլուխ բաժանող մեծ կամուրջը կտրել և սրա համար Ալլահղուլի խանին տեղեկութիւն տալ:

Խանը թէ Ալիի բռնուիլը և թէ Ռասիւլ-բէկին սահմանագլուխ զրկելու հարկաւոր անցքը կը տրելու համար ունեցած դիտաւորութիւնը հանգամանօրէն գրելուց յետոյ, կնքեց նամակը և իւր նամակատարի ձեռքով զրկեց Ալլահղուլի-խանին։

Առաւօտեան կանուխ սպառագինուած ձիաւորների մի խումբ քաղաքից դուրս սպասում էր. Ռասիւլ-բէկը իւր հրաժարականը խանին տալուց և նրանից հետեւեալ պատուէրները լսելուց յետոյ, «աշխատէք մարդասպանութիւն չ'լինի, յանցաւորներին բռնելուց, իսկոյն ինձ կ'յայտնէք և չ'մոռանաք Ալլահղուլի-խանին մարդկանց հիւրասիրելու շրջեց իր օդապարիկ ձիու գլուխը դէպի սահմանագլուխ տանող ճանապարհը։

Հինգ օրից յետոյ, Ռասիւլն իւր փոքրիկ խմբով հասաւ յայտնի կամուրջին և թաքնուեցաւ նրան մօտ փոքրիկ անտառի մէջ։ Ռասիւլը կամուրջը հասնելուց չորս օրից յետոյ, բարձրանալով մի բլրակի վերայ, դիտակով նկատեց գետի միւս երեսից եկող մի խումբ ձիաւորների։ Նրանք անշուշտ խանի մարդիկը կ'լինին, ասաց ինքն իրան և իւր ձիաւորներով գնաց նրանց դիմաւորելու։ Այդ երկու վաղեմի ծանօթները Ռասիւլը և Թեմրագ-բէկը, որն Ալլահղուլի-խանի քրոջ մարդն էր, միմեանց բարեկելուց յետոյ, դարձան դէպի փոքրիկ անտառը։

Կէս օրվայ ճաշը վերջանալուց և մի փոքր

հանգստանալուց յետոյ, երկու գլխաւորներն իրենց երեսուն մարդից բազկացած խումբը բաժանեցին երեք մասի, առաջինը զրկեցին մօտ անտառներում դարանամուտ լինելու, երկրորդը՝ կամուրջի շրջագալքում գտնուղ բլրակներից եկող գնացողներին դիտելու և երրորդ մասը պահեցին նրենց մօտ։

Կարգադրութեան երկրորդ օրն էր, անտառում դարանամուտ եղած ծառաներից մէկն ուրախ ուրախ ներկալացաւ գլխաւորներին։

— Հ'ը ի՞նչ նոր լուր։

— Այս գիշեր երկու փարսախ հեռաւորութեամբ մի անտառի մէջ տեսանք չորս ձիաւոր և մի փոքր աղջիկ, նրանք խորհուրդ արին երեկոյիս կամուրջն անցնելու. ուստի ընկերներս թողելով նրանց դիտելու, ես ձեր պատուէրի համաձայն շտապեցի յայտնել ձեզ։

— Եատ լաւ, ապրիս-ապրիս կրկնեցին Ռասիւլը և Թեմրազը վարձատրելով ծառալին։

Կարճ ժամանակից յետոյ գլխաւորների հրամանաւ բոլոր խումբը հաւաքուած էր մի տեղ. Թեմրազն ուշը դարձնելով դէպի Ռասիւլը. «ալժմ մեզ ի՞նչ է մնում անելու։»


— Դուք ձեր խմբով անցէք կամուրջի ախն կողմը. իսկ ես իմ ձիաւորներով կանհետանամ մեզ յանդիման բլրակի միւս երեսում, երբոր մեր յանցաւորները կ'կիսեն կամուրջը և դուք կ'նկա-

տէք բլրակի վերայ ծածանվող դրօշակը, իսկոյն
կ'կտրենք կամուրջի երկու կողմը, այն ժամանակ
առանց նեղութեան նրանք անձնատուր կ'լինեն
ասաց Ռասիւլը:

Երեկոյեան զովացուցիչ հովն երբ որ նստեց
երկը վրայ, Քեարիմ-բէկը իւր փոքր խմբով
հասաւ յայտնի կամուրջին հէնց այն ըոպէին, երբ
արեգակի վերջին ճառագայթները բոլորովին անհե-
տանալով բարձր սարերի կատարներից, տարին
իրենց հետ և Քեարիմ-բէկի բաղդը:

Ասլանն առաջ էր ամենից, նրանք համարեա
կիսել էին կամուրջը, երբ բլրակից փողփողաց դը-
րօշակը: Ռասիւլն և Թեմրազը կտրելով կամուրջի
երկու ծայրը, գոչեցին «անամօթ չարագործներ,
հնազանդութիւն, կամ մահ. ընտրեցէք երկուսից
մէկը»:

Աննան և Շուշանը կամուրջի բարձրութիւնից
ուշաթափ վաղուց զոհ կ'լինէին գետի յորձանք-
ներին, եթէ Ասլանը չօգնէր: Քեարիմ-բէկը փախ-
չելու տեղ և կռվելու ապաստարան չունէր: Ա-
լանն ուշը դարձնելով դէպի Ռասիւլը, որ աւելի
աչքի էր ընկնում քան Թեմրազը իւր հսկալավա-
յել նշաններով ասաց, «ազնուական տէր, ես ա-
մօթ եմ համարում այն մարդկանց, որոնք երեք
մարդի դէմ խմբով են դուրս գալիս և այն՝ գաղտ-
նի ու մի այնպիսի անկնկալ տեղ, որի ոչ նեղ և
սահմանափակ դըութիւնը և ոչ ձեր սպանիչ գըն-



տակները չէին կարող արդելել իմ ազատութիւնը.
այլ այս անմեղ և թշուառ արարածների խնալելի
կեանքը, որոց մասի պատասխանատու եմ Աստուծոյ
և մարդկանց, ուրեմն հրամայեցէք մարդավալել
եղանակաւ ինչ հարկաւորն է անել, մենք հնագանդ
ենք ճակատագրին. միայն երգմնեցնում եմ ձեզ
մեծ մարդարէների սուրբ գերեզմանով ողորմելի-
ների պատիւը չ'շօշափել, պարզելով ձեռքը դէ-
պի Աննան և Շուշանը:

Քեարիմ-բէկը իւր ծառաներով զինաթափ ե-
ղած Աննայի և Շուշանի հետ գտնվում էր սաս-
տիկ հսկողութեան տակ: Բասիւլն իւր ձիաւորների
մէկի միջոցաւ հանգամանօրէն յայտնեց Ամիր-
խանին:

Խանը այդ ուրախացուցիչ նամակը ստանա-
լով, պատուիրեց իւր սենեկապետին տան բոլոր
հարկաւորութիւնները հոգալ Թեմրազ-բէկին հիւ-
րասիրելու համար, նոյնպէս պատուիրեց իւր նշա-
նաւոր մարդկանցից մէկին, որ Թեմրազի գալու
լուրը լսելուց, չմոռանալ իւր Շիրխան որդու
հետ ընդառաջ գնալու:

Այս պատուէրները տալուց յետով, բռնեց
հայելու մաքրութեամբ սալայատակ և երկու կող-
մից գեղեցիկ գոյնզգոյն ծաղիկներով և վարդենի-
ներով զարդարուած ուղին, որը տանում էր դէպի
կանանցը-դէպի իւր սիրելի Հիւրիզատ-խանումի*)

*) Հիւրիզատի պապն իւր անձը մահից ազատելու համար, թո-

սենեակը, որն իւր անհամեմատելի գեղեցկութեանը հետ վարձատրուած էր ամենահարուստ ընութիւնից և այլ բարեմասնութիւններով:

— Ես այսօր ձեզ շատ ուրախ եմ տեսնում. ի՞նչ կալ, հարցրաւ Հիւրիզատը կնոջ լատուկ քընքըութեամբ:

Խանը պատմեց թէ Միւշտէիտի գրած նամակի, թէ իւր արած խուզարկութեան, թէ Քեարիմ-բէկի բռնվելուն և թէ Թեմբազի գալուն համար:

— Հայուհիները փախել են թէ փախցրել են, հարցրաւ Հիւրիզատը:

— Նրանց փախցրել են:

— Ո՛վքեր են դրանք:

— Մալր և աղջիկ:

— Լաւ, դուք ի՞նչ պիտի անէք այն ողորմելիներին.

— Այդ Միւշտէիտի հրամանաւ թողուած է իմ և Ալահզուլի-խանի կամքին:

— Ուրեմն եթէ այդպէս է, շարունակեց Հիւրիզատը, սիրելի ամուսին, տուէք ինձ ձեր պատուի խօսքը, որ եթէ ձեր մէջ համաձայնութիւն չ'լինի հայուհիներին իրենց հալրենիք վերադանելու, որին ես ուզեմ. թողէք իմ հովանաւորութեան ներքոյ:

— Դուք ի՞նչ պիտի անէք այն անպէտք հայերին:

զելով հայութիւնը կպարսկանայ Դ. քաղաքում:

— Ես պիտի պահեմ ինձ ծառալելու համար, ասաց Հիւրիզատը:

— Միթէ պակասէ ձեզ համար ազնուական տղիկներ, հարցրաւ խանը:

— Ես ուզում եմ իմ ծնողների և պապերի խօսքի ճշմարտութիւնն իմանալ և այնու գնհատել նրանց ինձ համար անմոռանալի խօսքը թէ՝ «Հայերի հաւատարմութիւնը, տիրասիրութիւնը և որ գլխաւորն է բարոյականութիւնն աւելի է, քան ուրիշ ազգերինը»: Ահա այս է իմ միակ ցանկութիւնը. եթէ կ'կատարէք, տուէք ինձ ձեր ձեռքի հետ և ազնիւ խօսքը, որով և պիտի մշտավառ պահէք իմ և ձեր սրտի մէջ այն փոխադարձ սէրը, որով կապուած ենք միմեանց հետա:

Ամիրխանը լսելով իւր սրտի ամենամօտիկ առարկալի վերջին խօսքերը, այլ ևս չ'կարողացաւ գիմանալ, թուլացած ընկաւ իւր սիրելու գիրկը:

Իուստամին նամակը խանը ստանալուց երեք օր անցել էր: Խանը իր պարսկական սովորութեան և ճաշակի համաձայն զարդարուած էր ոսկեթել և գոհարազարդ հագուստներով: Դարպասի բոլոր սենեակները ծածկուած էին սովորականից դուրս թանգագին գորգերով: Դրանիկները, աստիճանաւորները վայելուչ և պատշաճաւոր հագնուած: Դարպասի նախադրան ճակատին ծածանում էր առիւծանկար դրօշակը: Դարպասի շրջապատ ալգիների անցուգարձը գիշերուայ լուսաւորութեան համար

զարդարուած էր գոլնզգոյն անհամար լապտերներով։ Այգիների մարմարոնեալ լճակների մէջ արձաթափալ ջրի մեղմ քամիներից շարժվող ալիքների հետ խաղացող փոքրիկ ձկները գրաւում էին մարդու ուշադրութիւնը։

Կէս օրից յետոյ կեցցէների ձայնը թնդացընում էր քաղաքը, Շիրխանն իւր հիւրերով, Ռասիւլն իւր գերիներով անցին նախադընից ուղղակի գէպի խանի դարպասը տանող ծաղկազարդ ուղին, որի երկու կողմից փոքրիկ աղջիկները խառը ծաղկունքների հետ վարդեջուր կ'ցանէին թեմբառզի վրայ, և հասին այն մեծ սրահին, որ տեղ խանը թեմբազին արժանաւոր ընդունելութիւն անելուց յետոյ, պատուիրեց Ռասիւլին գերիներին պահել զգուշութեամբ առանձին դիտանոցի ներքին յարկում։ իսկ հայուհիներին վերին և շուտով իրան ներկայանալ։

Ռասիւլը խանի պատուէրի համաձայն գերիների վրայ պահապաներ նշանակելով, գնաց դարպաս և բռնեց իւր պատշաճաւոր տեղը։

Սութը պատած էր երկիրը, դարպասը կարծես ալրվում էր իւր շրջապատ այգիներով, գոլնզգոյն անհամար լապտերների և ջահերի ճառագայթների մօտ լուսինն անզօր էր։ Հազարաւոր փամփուշտների ձայնը որոտացնում էր օդը, երգեցողների և նուազածուների ձայները թնդացնում էին ամբողջ քաղաքը։

Քեարիմ-բէկը տխուր ինքն իրան ասում էր, «միթէ այս երեկուն իմ կեանքի վերջին պատկէրը չէ, միթէ ես էլ գէպի վեր բարձրացող փամփուշտների պէս չէ՞ մեծամտաբար բարձրանում, միթէ իմ աստղը չ'պիտի շիջանի ինչպէս երկնքի բարձրութիւնից գէպի երկիրս գլորվող փամփուշտների կայծերը»։ Միով ըանիւ նա իւր վատ ապագան աչքի առաջ ունենալով անմռունչ, պատուհանի առաջ նստած, խորասուզվել էր մտատանջութեան ալիքների մէջ։

Նուշանն երկար ճանապարհորդութեան երեսից նեղացած՝ քնած էր, Աննան լի դառնութեամբ մտածում էր իւր և գստերն ապագայի համար, նրա սեորակ աչքերից արտասուքն աղբիւրի պէս վազում էր։


Հիւրիզատը լաւ իմանալով խանի Ռասիւլին տուած գերիներին խնամք տանելու պատուէրը, հրամայեց իւր հաւատարիմ Սաշլու աղախնուն, որ հայուհիների համար հաց տանէ և նրանց առեանգելու պատճառն իմանալ։

Սաշլուն իւր տիկնոջ հրամանը կատարելուց և Աննայից հետեւեալ խօսքերը «թող տիկնոջ լաւութեան փոխարէնն երկարէ Աստուած նորաթանգագին կեանքի օրերը՝ որ չէ խնալում իւր ցաւակցութիւնը մի դժբաղդութեամբ պսակուած այրիից և նրան թշուառ աղջկանից, թող բանալ նրան հոգու աչքերը թշուառներին տեսնելու և

օգնելու համար» լսելուց յետով, թողեց և հեռացաւ:

Ամառալին օրերից մէկն էր, Ամիրխանը և Թեմրազը նստած մի զարդարուն դահլիճի պատուհանի առաջ, ոսկեգլուխ դահլեանի անուշահոտ ծուխը կ'բարձրացնէին, երբ Ռասիւլ-բէկը Քեարիմին իւր ծառաներով ներկալացրաւ խանին: Խանը Քեարիմից հարցեր անելուց յետով, բարկացած ասաց «Դու անարժան քո բարձր կոչմանը, դու ապիրատ ինչու անհաւատարիմ գտնվեցիր գէպի քո ամուսինը և չ'պահեցիր քո մեծահռչակ աներոջ տուած խօսքդ միւսանգամ յանցանք չ'գործելու: Ես երեկ քեզ իբրև հիւր ընդունեցի. իսկ այսօր իբրև կախաղանի արժանի մարդ, կ'հրամայեմ փակել քեզ ծառաներովդ այն տեղ, ուր չարչարանքի գործիքները, գարշահոտութիւնը, թունաւոր օդը վերջ կ'տան կեանքիդ»:

Քեարիմ-բէկը լուռ արձանի պէս կանգնած էր. իսկ Ասլանը զինքը ազատելու համար շարունակեց այսպէս «Բարեսիրտ և արդարադատ իշխաններ դժբաղդներին շնորք, ողորմութիւն ամենեին չ'կալ, վատանշան չարագործին թողութիւն՝ երբէք չեմ կարծում, մանաւանդ ինձ նմանին, որ քան իմ տէրը և ընկերները մեծ եմ տարիքով և փորձուած. բայց մենք ստիպված կատարել ենք մեր տիրոջ հրամանը, կամ պիտի ընտանիքով սրի ճարակ լինէինք և կամ պիտի կատարէինք նրա հրա-



մանը և մենք փախացրած ենք հայուհիներին:
Նրանց փախցնելու ժամանակ լսած աղաչանքները
և խիղճս տանջում են ինձ և պիտի տանջեն մինչ
այն երջանիկ րոպէն, երբ գուրս կ'թռչի ձեր բե-
րանից ազատութիւնը հայուհիներին իրենց հայ-
րենիք վերադարձնելու: Ա՛յս, երկինք, շնորհք,
շնորհք,.... կ'աղաչեմ, կ'զղամ....

Ասլանի սրտաշարժ և ճշմարիտ խօսքերը,
արտասուալի աչքերը, պարզ ցոյց տալով իւր ան-
մեղութիւնը, չէին կարող չ'շարժել Ամիրի և Թեմ-
րազի սիրտը, որոնք լուս նայում էին այդ հսկայի
վրայ:

Կարճ լոռութիւնից յետոյ. Ամիրը, «Ասլան,
արժանաւո՞ր ծառայ անարժան տիրոջ, իւր անձն
արդարացնում է մարդ՝ երբ իր գործած յանցանքը
պարզօքէն, հեզութեամբ խոստավանում է. ուրեմն
այսօրվանից ներում ենք քո ակամայ գործած
յանցանքին, Աստուած՝ որ աւելի ներող է քան
մարդիկ՝ նա ևս կներէ: Դու կ'լինես իմ հաւատա-
րիմ ծառաներից մէկը և բոլորովին ազատ լինե-
լուդ համար, Միւշտէիտին ևս պիտի խնդրենք.
իսկ քո Քեարիմը՝ իւր միւս ծառաներով շղթայա-
կապ կ'զրկենք նրան:

—Գթառատ իշխանք, դուք ունիք իրաւունք
ազատելու և ոչ ներելու. իմ յանցանքը կարողէ
ներել այն ընտանիքը, որը բարերարել և օգնել
է ինձ կարօտութեանս մէջ բայց ես օձի պէս

խալթել եմ ինձ տաքացնող կուրծքը: Իմ յանցանքին միայն Աննան, Շուշանը և նրանց ամբողջ տունը կարողէ ներել և այդ ներումը կ'լինի այն ժամանակ, երբ հայուհիները կարժանան ձեր շընորհիւ իրենց հայրենի տանը: Այն ժամանակ կատարեալ իրաւունք կունենաք պարծենալու թէ վարձահատոյց Աստուծու և թէ մարդկանց առաջ և ես իրբեւ երախտապարտ, ոչ թէ միայն, այլ իմ ամբողջ ընտանիքով պարտաւոր կ'լինեմ մինչեւ իմ կեանքի վերջը ծառայել ձեզ հաւատարմութեամբ և անձնուրացութեամբ:

Ամիրը գուցէ Ասլանի խնդիրը կատարէր, եթէ Ալլահուլի-խանը իւր նամակով հայուհիներից մէկը պահանջած չ'լինէր, նա հրամայեց Ասլանին մնալ իւր գրանիկների մօտ մինչեւ վաղը:

Կէսօրուայ ճաշը վերջացել էր, ամեն մարդ մտել էր իւր առանձնասենեակը հանգստանալու. իսկ Ամիրն ընկղմուած խորին մտածմունքի մէջ, հայուհիներին ազատուելու համար հնարք կորոնէր: Նա աչքի առաջ ունենալով իւր և Ալլահուլի խանի մէջ եղած նախկին խռովութիւնները, նրա հայուհիներից մէկի պահանջը, Ասլանի սըրտաճմիկ արդարացի խօսքերը հայուհիների ազատելու համար, չէր կարողանում վճռողաբար մի բան անել եթէ ոչ, խորհրդակցել Թեմրազի հետ:

Քանի որ Ամիր-խանը, այդ վեհանձն մարդը,

խորին մտածմունքի մէջ ընկղմված, այն անդնդախոր ծովի մըրկալի ալիքներից դուրս գալու ելք կ'որոնէր, Թեմրազն արթնանալով մտաւ դահլիճ և լսելով նրան կից խանի առանձնասենեկում քայլելու ձայն՝ մտաւ ներս:

— Ինչպէս երեւում է դուք անհանգիստ էք: — Ալո՛, պատասխանեց խանը, ես հենց անհանգստութեանս վերջ տալու համար կուղէի ձեր խորհուրդն իմանալ, եթէ ես համաձայն խղճի և Ասլանին աղաչանացը հայուհիներին ազատելով հայրենիք վերադարձնեմ, Ալլահուլի-խանի նախկին թշնամութիւնը չ'պիտի նորոգեմ, և դուք կ'իսուտանաք ինձ իբր դժբաղդների խնամածուի պաշտպանել աներոջդ մօտ:

— Մեծազօր իշխան, շարունակեց Թեմրազը, դուք գթած ու բարեսիրտ էք, իսկ իմ աները ձեր հակապատկերն է, ես իբրև բարեկամ, ձեզ մինչեւ վերջին շունչս կաշխատեմ պաշտպանել, միայն շատ լաւ գիտեմ, որ 'ի զուր պիտի անցնէ և գուցէ ձեր բարեգործութեամբ պատճառ լինիք մի ալնպիսի անբաւականութեան և խռովութեան, որի նմանը սատանան միալն կարող է մտածել: Նրա մի աննշան բանի համար չափազանց գրգըռվող բնաւորութեան պատճառով, հեշտ չէ նրա հետ այդ տեսակ մի խաղ խաղալ: Նոյն իսկ մենք նրա մերձաւոր բարեկամներս բաւական նեղութիւններ ենք կրում նրա այդ անտանելի բնաւո-

ըութիւնից։ Ամիր-խանը զգալով այդ խօսքերի ճշշ-
մարտութիւնը՝ վճռեց կատարել Ալլահղուլի-խանի
կամքը։

Ոսկեղէն մանգաղի նման բաւականին բար-
ձրացել էր գիշերվալ շարժուն լապտերը-մահիկն
իւր զուարթարար թոյլ լոյսը տարածել էր բոլոր
լեռների և դաշտների վրայ, դարպասը շրջապատող
գեղեցիկ ալգիների կճեայ աւագանների մէկից գէպի
միւսը հոսող վճիտ ջրերն էլ լուսնի փողփողումից
հալուած ոսկու էին նմանվում։

Սալուն՝ Հիւրիզատի ազախինը, իր տիկնոջ
հարամանով հալուհիները հետն առած գնում էր
գէպի կանանոց-Հիւրիզատի սենեակը։ Հիւրիզատը
մի կարեկցական ակնարկ Աննալի և Շուշանի վրայ
ձգելուց և մի քանի հարկաւոր տեղեկութիւններ
իմանալուց յետոյ, հետևեալ հարցերն արաւ։

— Քանի՞ որդի ունիս։

— Երկու, իսկ ալժմ և ոչ մի. պատասխանեց
Աննան։


— Իսկ այս հրաշագեղ աղջինկը։

— Այդ աղջինկը... արտասուքի կաթիլները
ցոլացին Աննալի սեռակ աչքերում։

— Միւս որդուդ անունը ի՞նչ է։

— Վահան, և մի ալնպիսի եղանակով արտա-
սանեց Վահան բառը, որ ամենաքարասիրտ մարդն
անգամ խղճահար կ'լինէր։

Հիւրիզատն այն տեսակ խանումներից չէր,



որոնք բոլորովին զուրկ ուսումից և բարոյականութիւնից՝ լոկ ամուսնական բնական պարտք կ'կատարեն, նա համարեա օրուայ մեծ մասը պարապում էր իւր լեզուի բարոյական գրքերի ընթերցանութեամբ:


Քանի որ Աննան, Շուշանը Սաշուի հետ Նիւրիգոտի սենեկի արևելեան կողմի փոքրիկ պատշգամբից կ'դիտէին արուեստական ահագին լճի մէջ լուսնի ճառագայթների տակ խաղացող ջրահաւներին, Նիւրիգատը մտասուզված կրօնի անժափանցելի վերացանութեան մէջ, ինքն իրեն կհարցնէր: «Ի՞նչու մէծ մարդարէներն առանց մի օրինաւոր ապացուցութեան պիզ կ'համարեն միւս ազգութիւնները և այն ուղղափառ մահմետականը, որ կ'համարձակվի մօտ յարաբերութիւն ունենալ նրանց հետ: Այս ինչ մի անարդարութիւն է, միթէ նոյն իսկ սրա մէջ նկատելի չէ ազատ կամքի այն անարդար ճընշումը, որը մենք սխալմամբ իբրև սուրբ օրէնք և կրօն ենք ընդունում. բայց այն կրօն չէ, որը բռնութեամբ և սրի ուժով կ'մտցնուի մարդկանց մէջ: Այն անձը, որը կուզէ փոխանակ խաղաղասիրական և բարոյական հոգով, սրով և բռնութեամբ օրէնք և կրօն մտցնել մարդկանց մէջ, նա չէ արժանի մարդարէի և մարդկութեան կոչմանը ու պատուին. այլ բռնակալի և մարդկութեան թշնամու ու նրանց գէպի խաւարը տանող առաջնորդի: Կրօնը բռնակալների ձեռքում միթէ մի ամենա-

հատու սուր չէ. ուրեմն չէ հարկաւոր խորշել այս
աղաւնու պէս անմեղ հայուհիներից, որոց ազգի
անդամ է եղած երբեմն իմ պապն ինչպէս կ'պատ-
մէր իմ հայրը: Իմ ներքին մարդը ստիպում է
ինձ օգնել, սիրել և կարեկից լինել առհասարակ
թշուառներին մանաւանդ սրանց: Ես պիտի լսեմ
ինձ հոգեկան բերկրանք և ուրախութիւն տվող
խիստ ձախը, որն Աստուածալին է քան մի որ և
է սիսալական և բռնակալ մարդու հրամանը թէ և
ալդ լինի մինչեւ անգամ մի մարդարէի»:

Հիւրիզատն իր նոր հիւրերով բռնած էր ա-
նուշահոտ կերակուրներով հարուստ սեղանի շուր-
ջը: Ընթրեքը վերջանալուց յետոյ, Աննան իր խո-
նարհ շնորհակալեքը մատուցանելով Հիւրիզատին
և վարձատրված նրանից մի մետաքսեալ կտորով,
Սազլուի առաջնորդութեամբ գնաց դէպի դիտանոց:

Թեմրազի գալուն երրորդ օրն էր, նա իւր
երկար մնալու անկարելիութիւնը լալանած էր Ա-
միրին: Օրից բաւականին անցել էր, անհամար
ծառաներ դարպասի առաջ անցուդարձ կանէին,
մանկլաւիկները մի սենեկից դէպի միւսը կանց-
նէին, աստիճանաւորներ և նշանաւոր մարդիկ
բռնած էին Թեմրազի և Ամիրի շուրջը: Ասլանը
կանգնած դահլիճի դրան ներսի կողմում՝ սպա-
սում էր հայուհիների մասին Ամիրից մի որ և
իցէ ուրախացուցիչ բան լսելու:

Ամիրը կարեկցական մի ակնարկ Ասլանի վրայ



Ճգելով, շարունակեց «Ասլան, երեկվայ խնդիրքդ
որքան յարգելի, նոյնչափ և սրտաշարժ էր, բայց
ցաւում եմ որ կան հանգամանքներ, որոնք ար-
գելք են լինում։ Հայուհիների ազատութիւնը մի-
այն իմ իրաւունքի ներքոյ չէ. այլ մի այնպիսի
բնաւորութեամբ մարդու, որի սրտի ծալքերի մէջ
ոչ իմ և ոչ քո աղաչանքն արձագանք չպիտի տան։
Դու քանի որ չես կամենում մնալ իմ իշխանու-
թեան տակ, վաղն իրաւունք ունիս յանցաւորների
հետ հալրենիք վերադառնալ. թող Քեարիմն իւր
միւս ծառաներով ամաչեն իրենց շղթայակապ
ձեռք ու ոտքով ազատութեանդ առաջ, որի պատ-
ճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ անմեղութիւնդ և
բարեսրտութիւնդ։

«Ո՛ իշխան, այն բարի և արդար սիրտը, որի
շարժողը չէ ոչ ոք, եթէ ոչ, անտեսանելի Աստու-
ծոյ ձեռքը, թող այս անգամ ևս շարժէ դէսի
ապերախտիս խնդիրը։ Մի փոքր ՚ի շատէ զգալուն
մարդու՝ անտանելի է ուղղեկցել իբրև ազատ իւր
շղթայակապ տիրոջ և ընկերներին, որոց և ինքն
է մեղսակից, ուրեմն կ՚ինդրեմ կամ առանց շըլ-
թայի ուղարկել և կամ ինձ ևս բաղդակից անել
նրանց. և յառաջ քան իմ այս տեղ թողնիլս, թոյլ
տւէք մի անգամ գոնէ ներկայանալ այն ողորմելի
հայուհիներին, որոց գերութեան պատճառ դարձաւ։

— Ասլան, տիրասիրութեանդ և ազնուասր-
տութեանդ համար, թող կատարվին գոնէ այդ
խնդիրներդ։

Արեգակի այրող տաքութեան տեղ, երկոյեան
մեղմ քամիները վչելով զովացնում էին բոլոր
շնչաւորների հետ և կանաչազարդ ճիւղերի վրալ
նստող զանազան տեսակ թռչուններին, որոց երե-
կոյեան օդը թնդացնող մըմունջը մարդ կզմալե-
ցներ: Ասլանը գլուխը կուրծքին ձգած, տիսուր,
արտասուքն աչքերում, կանգնած Աննալի դիմաց,
տալիս էր իր հրաժարականը հետևեալ խօսքերով
«Ես չ'կարողացայ այս անդամ ազատել ձեզ, միայն
երդվում եմ Աստուծով, որ եթէ շուտ չմեռնեմ,
դուք պիտի ազատուիք այն ձեռքով, որը խլած է
ձեր ազատութիւնը, ուրեմն թո՛ղ երկարէ Ալլահը
ձեր և անմեղ Շուշանի կենաց օրերը, մինչև կը-
ծագէ ձեր փրկութեան աստղը: Վաղը ես կ'ճա-
նապարհվիմ դէպի մեր հալրենիք, ասացէք ինչ
որ կուզէք. ես բոլորը կ'յայտնեմ»:

Աննալի համար Ասլանի հեռանալը մի նոր
տիրութեան առիթ էր, նրա հոգին քաղվում էր
հալրենիքի քաղցր անունը լսելուց. նա խեղդուած
ձայնով ասաց, «Ասլան, դուք ալնքան բարի էք
որ ձեր դէպի ինձ ակամայ արած վատութիւնն
ոչինչ է համարվում: Ինձ՝ թէե բաղդն արգելում
է հալրենիքիս արժանանալ. ալ իմ տիսուր հոգին
միշտ թռչում է դէպի իմ մանկութեան օրօրոցը
և այն տեղ, ուր գտնվում են այն նահապետա-
կան տան բոլոր անդամները, որոնք պիտի պաշտ-
պանեն իմ միակ լոյսը, միսիթարութիւնը իմ Վա-

հանը, որին խնդրում եմ յանձնել այս մատանին
՚ի նշան մայրական սիրոյ և այս նամակը: Տարէք
և իմ ողջոյնը հալրենիքի այն ծաղկափիթիթ գաշ-
տերին ու հովիտներին, որոնց բարեխառն օդը և
քաղցրահամ ջրերը միանգամ մնունդ էին տալիս
ապաբաղդիս: Գնացէք Ասլան, թո՛ղ Աստուծով ա-
ջը հովանի լինի ձեզ, միայն թէ կ'ինդրեմ չ'մո-
ռանալ ձեր այն ազնիւ խոստումը, որը տւած էք
մեզ ազատելու»: Ասլանը ստանալով մատանին և
նամակը դառն արտասուքով և խորին երկրպա-
գութեամբ հեռացաւ Աննալից:

Ա.ՍԼԱՆԻ ՀՅԱՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ

Երկրի սրտից տխուը գեշերը ջնջելով, ցերեկվալ պաղպաջուն և պայծառ լոյսը գահ էր բարձրացել։ Ամիրի հաւատարիմ գրանիկներից մէկը ստանալով իր տիրոջ Միւշտէիտին գրած նամակը, քանի մի ընտիր զինավառ ձիաւորներով Քեարիմն իր երեք ծառաներով մէջ տեղ առած հեռացան Ա. քաղաքից. իսկ Ա.սլանն իբրև ազատ իւր արաբ ձիի վրայ բոլորից յետով, տխուը, մտքի մէջ խորասուզված, երբեմն երբեմն քաշելով ձիի սանձը դարձնում էր ուշը դէպի Աննալի բնակարանը դէպի դիտանոցը, որը հսկայի պէս գլուխը բարձրացը ծիծաղում էր իր շուրջն եղած տնակների վրայ։ Գուցէ Ա.սլանը չ'թողեր այս ողորմելի արարածներին, եթէ ընտանեկան քաղցը կեանքը և հայրական սէրը դէպի իր որդիքը մագնիսի պէս չ'քաշէին նրան։

Ճանապարհելով Ա.սլանին իր ընկերներով կանաչազարդ և շղթայակասլ բլրակների միջով ընկած ճանապարհով դէպի հայրենի երկիրը, դառնանք դէպի Աննան։

Հիւրիզատ խանումը, այս այդ միսիթարութեան հրեշտակն էր միայն որ սիրում էր Աննալին և

նրա դստեր Շուշանին ինչպէս իր հարազատներին։ Ամիրը մի օր առանց Հիւրիզատին իր ալցելութեան մասին առաջօրէն լայտնելու, գնալով նըրան մօտ տեսաւ նրա ծաղկանոցում Շուշանին, որի մահմետական լինելու համար ոչ ոք չէր կարող կասկածել, մանաւանդ Հիւրիզատի գողտրիկ մատերով կարած հագուստի մէջ, և մի հիացողական ակնարկ ձգելով այդ հրեշտակակերպ արարածի վրայ, մտաւ Հիւրիզատի մօտ։

— Հիւրիզատ, ձեր ծաղկանոցի աղջիկն ումն է։

— Իմ մօտ բարեկամիս, պատասխանեց Հիւրիզատը։

Ճշմարիտ, մէկ այդպէս չքնաղ արարած չէ տեսել ասաց Ա.միրը փոխելով խօսակցութեան առարկան։ Հիւրիզատ, գիտէք իմ անակնակալ ալցելութեան պատճառը, Թեմրազն այս երկու օրս աներոջ նամակի համաձայն պիտի վերադառնայ, 'ի հարկէ տանելով իւր հետ և հայուհիներից մէկը. բայց նախ քան նրա հետ խօսելս, լաւ համարեցի ձեզ տւած խոստմանս համաձայն իմանալ ձեր հաճութիւնը թէ արդեօք հայուհիներից ուրին կ'կամենաք ձեզ մօտ ունենալ։

— Թեմրազը հայուհիներից մէկը պիտի տանէ... հառաչելով շարունակեց Հիւրիզատը, ոհ, այս ի՞նչ եմ լսում... դժբաղդ հայեր. միթէ դուք՝ սիրելի ամուսին, չ'կարողացաք ազատութիւն շնորհել կամ գոնէ մալրն աղջկանից չ'բաժանել։


—Ո՛չ, ալդ միայն ինձանից չէ կախուած Հիւրիգատ, դուք այն ասացէք, հայուհիներից ո՞ր մէկը կուզէք:

Հիւրիգատը Շուշանին կանչելով, ահա սրան:

Ամիրը խօսքին փոքը ինչ հրամալողական ձեւ տալով, «կատակի ժամանակ՝ չէ, դուք ասացիք որ սա ձեր բարեկամի աղջիկն է»:

Թողող ներողամիտ լինի ինձ իմ տէրը ասաց Հիւրիգատը, իմ խօսքերն այնքան անկեղծ են որքան մեր սրտերը, ալո՞ ես ասացի իմ բարեկամի աղջիկըն է և այն մի այնպիսի բարեկամի, որի թշուառ և դառն վիճակը տանջում են ինձ և պիտի տանջենքանի կ'պսակէ նրա անընդհատ ձախորդութեան երեսից անժամանակ սպիտակացած գլուխն աղցալից աշխարհի դժբաղդութեան վշեայ պսակը, այո՞ կրկնում եմ մի այնպիսի կարեկցութեան արժանի բարեկամի, որի անկեղծ պարկեշտ և բարոյական բնաւորութիւնը հաստատելով իմ նախնեաց սուրբ և անսուտ խօսքերը, ներկայացնում են մի անման Աննայի, որի կենդանի տիպն ահա կանգնած է ձեր մեծութեան առաջ:

Ամիրի սիրտը տակնուվը արին Հիւրիգատի զգալի խօսքերը, նա կարեկցաբար նայելով Շուշանի վրայ, դարձաւ դէպի Հիւրիգատը «սիրելիս, ձեր մարդասիրական բարձր զգացմունքները և արժանաւոր խնդիրը յարգելու և կատարելու համար, չէ թէ կ'դանդաղիմ ոչինչ համարելով, այլ կ'սար-



ստվիմ մտաբերելով այն արիւնահեղ խռովութիւնները, որոնք քանի տարի առաջ ինչպէս ձեզ ևս յալտնի է մի ամենաչնչին բանի համար տեղի ունեցան իմ և այն արիւնակզակ Սլլահղուլի-խանի մէջ, որից կրած նեղութիւններս, վնասներս և որ գլխաւորն է անմեղ ժողովրդիս ու եղբօրցս կորուստը ալժմ ևս կ'մաշեն ինձ: Ահա սրանք են գլխաւոր պատճառները, որոնք արգելք են լինում սիրելուգ խնդիրը կատարելու: Ուրեմն Աննան կ'գընալ իսկ Շուշանը, որի ընտրութեան համար չէ սխալուած իմ Շիրխանը, կ'լինի իմ տան ամենագեղեցիկ զարդը:

Հիւրիզատը կանչելով Սազլուին պատուիրեց երեկոյեան Աննային կանչել կանանց: Այդ անասնական կրքերի զոհ դարձած մարդկութեան ամենագեղեցիկ սեռի բանտանման շինուածքը, այն երեկոյ մի տռանձին ուրախութիւն էր զգացել, իւրաքանչիւր սենեկից լսվում էր սիրահարական երգերի և նուազարանի գրաւելք ձախներ. միայն կանանցի գեղեցիկների թագուհին-Հիւրիզատն էր որ տիրութեան ամենաժանձը մառախուղի մէջ ընկղմուած մտածում էր Աննալի համար:

Շուշանը երբեմն երբեմն փարելով Հիւրիզատի վզովը և մայրական քաղցր ու վսեմ անունը տալով հարցնում էր նրան տիրութեան պատճառը: Շուշանի այդ անմեղ և սրտաշարժ երախայական արարքը և մայրական կոչումն աւելի ևս կը շարժէին Հիւրիզատի գութը:

Աննան մտնելով Հիւրիզատի մօտ և տեսնելով նրան ամենաղառն տիրութեան քողով ծածկուած, ինքը ևս խորասուզվեց տիրեցուցիչ մտածմունքների մէջ և երկար չ'կարողանալով համբերել, թագաւորող լրութիւնը ընդհատելով շարունակեց, «թշուառների բարերար ազնիւ տիկին. երեկոյիս ձեզ մի այնպիսի անսովոր տիրութեան մէջ կ'տեսնեմ, որը կաւեցնէ թշուառիս անթիւ ցաւերի վրայ մի նոր հոգեկան վիշտ։ Եթէ անկեղծ էր ձեր մինչև օրս անսպասելի կարեկցական ակնարկը դէպի աղախինս, եթէ ես և իմ ողորմելի աղջիկն ենք ձեր տիրութեան պատճառը՝ կաղաչեմ լալտնեցէք։

— Սիրելիս, աշխարհի միլիոնաւոր կամ լաւ ևս ասել անհամար ձախորդ դէպերը, սկսեց Հիւրիզատը, որոնք օդի պէս խաղում են երկրագնդի մակերևոյթի վրայ, մեզ մահկանացուներիս համար են, և ահա այսօր նրանիցից մէկն ամենակածեցուցիչը և բաժանարարը պատրաստ է հարուածելու մեզ իմ և առաւելապէս դժբաղդիդ բացի հինգէքերը նորոգելու. այլ և մի այնպիսին որն աւելացնելու, որ միայն նախախնամողի ամենազօր ձեռքը կարող է բուժել կամ դէպերը դէպի լաւը փոխելով և կամ սառը գերեզմանի ծոցը մեզ դրկելով։

— Արիացիր խղճուկ, մարդիկ որքան բաղդաւորութեան մէջ ուրախ և զուարթ են լինում,

դժբաղդութեան ժամանակ՝ կրկնապատիկ տոկուն և սրտապինդ պիտի լինեն, ինչպէս քաջ զօրական պատերազմի մէջ. և քաջօրէն պիտի մաքառեն այն սարսափեցուցիչ պատահարների դէմ, որոց տևելն երկար չէ քաշում, ինչպէս ամենասաստիկ փոթորկալի և կարկտախառն անձրեկից յետոյ երեսում են պարզ երկինք, մաքուր օդ, նոյնպէս ձախորդութիւններին փոխարինում են ուրախալի և ցնծալի օրեր, որոնք մոռացման են տալիս տիսուր անցեալը։

— Որքան ես և ամուսինս կ'ջանալինք ձեր ազատութեան համար՝ հանգամանքները չէին յաջողիլ. վազը կէս օրից յետոյ, պիտի բաժանեն քեզ ոչ թէ միայն ինձանից, այլ և ամենաքաղցր զաւակիցդ, որն որդեգրած եմ Աստուծոյ, ամուսնուս և քո առաջ նրան մալրաբար խնամելու և կրթելու չ'ճնշելով նրա խղճի և կրօնի ազատութիւնը։

Դու պիտի գնաս Թեմրազի հետ Ալլահուլիխանի սիրուհիներից մէկի մօտ ծառայելու, ուրեմն դու պիտի չ'մտածես Նուշանի համար, մոռանալով նրա կեանքի ներկայ և ապագայ ամենահարկաւոր պէտքերը, որոնց ծանրութիւնն արդէն ես ընդունելով ինձ վրայ, պիտի կատարեմ իբրև իմ հարազատ գստեր համար, որին նախախնամութիւնը պարզեել է ինձ կարծես իմ ամլութեան պատճառով տիսուր սիրտս մխիթարելու։

— Դու միայն պիտի հոգաս կեանքդ պահ-

պանելու, և ես վստահ եմ որ քո համեստութեամբ, ազնուասրտութեամբ և շնորքով կարող ես գըաւել և գութերը շարժել մինչև անդամ քարասիրտ և բարբարոս մարդկանց, իսկ ես առանձին նամակով պիտի խնդրեմ Ալլահուլի-խանի սիրուհիներից առաջնուն քեզ իր մօտ ընդունելու և արժանապէս քեզ հետ վարվելու:

Լսեցէք Աննա, իմաստունի այս խելօք խօսքերը Փինչպէս առաքինութիւնը ձախորդութիւնների, նոյնպէս և մանուշակը մացառոտների մէջ կաճէ և կ'սփոէ անուշահոտութիւնն իր շուրջը, այսպէս էլ դու իբրև բանաւոր մանուշակ քո պարկեշտ բնաւորութեամբ և համեստութեամբ պիտի մի զարմանալի օրինակ լինես այն օտար եր կրում, որտեղ գէպքերը կ'փոխադրեն քեզ:

Աշխարհի հոսանքի դէմ չէ կարելի դնալ... անաջողութիւնների դժբաղդութիւնների անընդհատ վրադ կուտավիլը, նենդաւոր մարդկանց քաղցր լեզուները, չ'լինի թէ մի ժամանակ յուսահատացնելով շեղեն քեզ այն ուղիղ ճանապարհից և բարեմտութիւնից, որոնք ուղղակի տանում են դէպի երանութեան այն մշտադալար այգին, որի խնքնաբուն բարի այգեպանը վարձադրում է իւրաքանչիւր մարդի իր գործած առաքինութեան ամենաքաղցր պտուղներով:

Աստուած բոլոր կենդանիներին և գագաններին իրենց պաշտպանելու համար զէնքեր է

տուել, մարդուն էլ՝ խելք, որն ինչպէս զէնք պիտի գործադրի անձնապաշտպանութեան համար: Եթէ խելքը ձեռքէ առնում խոհեմութիւնը, արդարութիւնը, աչքաբացութիւնը, ուղղագատութիւնը և համբերութիւնը իբր զէնք այն ժամանակ յաղթութիւնն իրենն է:


Քաջի պէս պիտի գիմագրաւ լինես ամեն նեղութիւնների հաստատ հաւատալով որ կ'գալ մի օր, մի գեղեցիկ առաւօտ, որ կ'ծագի փրկութեանդ արեր և դու կ'գտնես քո կորցրած բաղդն, որը և կ'վերադրածնէ քեզ քո զաւակները, սիրելիները քաղցր հայրենիքիդ հետ»:

Հիւրիզատի խրատական խօսքերի ժամանակ, Աննալին կարելի էր կատարեալ արձան համարել, եթէ նրա սկզբակ աչքերի ազբիւրներից արտասուքը ջրի պէս չվազէր, Հիւրիզատն իւր խօսքերը վերջացնելուց յետով, Աննան ընկաւ նրա առաջ և խեղդուած ձայնիւ ասաց, «ո բարերար հրեշտակ, ձեր անդնհատելի երախտեաց փոխարէնն ես ուրիշ կերպ չեմ կարող հատուցանել, եթէ ոչ այս իմ անկեղծ բայց խոր վիրաւորուած սրտից ազբիւրացած արտասուքներով յուանալ ոտքերդ, և բռնելով Շուշանի ձեռքից ուշը դէպի Հիւրիզատը դարձնելով ասաց, ահա իմ սիրելի զաւակս իբրև աւանդ, յանձնում եմ ձեր խնամատարութեանը զըկվելով դրա մայր լիշտելուց. իսկ դու սիրելի աղջիկս, ինձ չ'պիտի տեսնես, ահա քո

մալը, քո բարերարը և խնամատարը, որի անգին
երախտեաց փոխարէնը պիտի հատուցանես հաւա-
տարիմ և անկեղծ սէրդ յարգելով նրան որպէս
հարազատ ծնողի և բարերարի։ Ահա քեզ և իմ
մալրական ընծան. հանելով իւր վզից մի փոքրիկ
խաչ կախեց Շուշանի վզից և ասաց այս պի-
տի ունենաս միշտ քո անմեղ սրտի վրալ 'ի նշան
քրիստոնէութեան և չ'պիտի մոռանաս քարայրի մէջ
սովորացրած Տէրունական ազօթքները ամեն առա-
ւոտ և երեկոյ մտքումդ ասելու։ Այս մասին գիտեմ
որ մալրդ-բարի Հիւրիզատն արգելք չ'պիտի լինի։

Աննան խօսքերը վերջացնելուց յետով, միտ-
քը դէպի երկնալին կապուտ կամարը սլացնելով
այսպէս կ'մըմնջար, «ո՛ թշուառների, անօդնական-
ների Տէր և ապաւէն, որ չես մոռանամ նրանց,
որոնք դառնում են սրտանց դէպի քեզ, ուղար-
կիր երկնալին բարձրութիւնից քո խաղաղութեան
հրեշտակն անմեղ զաւակս պահպանելու. բաց նը-
րա մանկական հոգու աչքերը միայն քեզ տեսնե-
լու և քրիստոնեական սուրբ հաւատի մէջ անսա-
սան մնալու»։

Արևելեան կողմի արշալուսից առաջ ծագվող
լուսաւոր աստղը պլազմում էր կապուտ երկնակա-
մարի վրալ, հրեշտակագեղ Շուշանի վրալ Որֆէոսը
թևատրած անուշ օրօր կ'երգէր, երբ Աննան
թողեց կանանցն անուշիկ քուն մաղթելով իւր
բարերարին։



ԱՆՆԱՅԻ ՇՈՒՇԱՆԻՑ ԲԱԺԱՆՈՒԽԼԸ

Կէսօրից մօտ էր, Ամիրի ապարանքում ասեղ
ձգելու տեղ չկար, քաղաքի ամբողջ նշանաւոր,
աստիճանաւոր և բարձր դասի մարդիկ հրաւիրու-
ած էին ճաշի ՚ի պատիւ Թեմրազին։ Ամիրի պա-
տուէրի համաձայն Ռասիւլն արդէն ամեն հար-
կաւորութիւններն առանց պակասութեան պատ-
րաստել էր, իսկ Հիւրիզատն Ամիրի թոլլտու-
թեամբ հայուհիների հետ, գտնվում էր կանանո-
ցին կից Ամիրի առանձնասենեակներից մէկի մէջ։

Հիւրիզատն Ամիրի միջոցաւ իմացել էր Ալլահ-
դուլի-խանի ամենասիրելի կնոջ Հափիս անունը,
և պատրաստել երկու նամակ, մինը Հափիսի, և
միւսն՝ Թեմրազի անունով։ Թեմրազին խնդրում էր
Աննալի հետ վարուել ոչ իբրև մի ալլազգի աղախ-
նու, ալլ իբրև իրեն շատ մօտ մի դժբաղդ քը-
րոջ, որն օժտուածէ կնոջ վայել ընտիր բարեմաս-
նութիւններով։ Իսկ Հափիսին պարսկական լատուկ
քաղաքավարութեամբ ալսպէս կ'շարունակէր «Ան-
ծանօթ քոյրիկ Հափիս-խանում, ահա մի արժանա-
ւոր պատճառ, որ չէ թէ պիտի վերցնէ մեր մի-
ջից անծանօթ բառը. ալլ և հազարաւոր վերստ

մէկը միւսից հեռու գտնվող երկու նոր քոլրերի սրտերը պիտի կապէ անկեղծ սիրոյ ոսկի շղթալով. ահա պատճառն, իմ ազնիւ բարեկամը կամ լաւ ևս ասել դժբաղդ քոլր Աննան, որը Թեմրազը էկի արժանաւոր հսկողութեամբ զրկեցի ձեզ: Դրա հեռանալն այնքան ցաւ և տրտմութիւն պիտի պատճառէ ինձ, որքան ձեզ բերկրանք և ուրախութիւն: Ահա այն դժբաղդ կինը, որ իւր բարձը և արժանաւոր բարեմասնութիւններով և համեստութիւնով կանգնած է մարդկութեան քընքուշ սեռի ամենաբարձր աստիճանի վրայ: Ահա այն ողորմելի արարածն, որի հոգացողութիւնը և խնամատարութիւնը յանձնում եմ ձեզ, յուսալով որ դուք ձեր բարձր անուան բուն նշանակութեան համաձայն, իբրև պահապան հոգ կ'տանէք աստուածահաճոյ եղանակաւ ոչ իբրև մի անարժան աղախնու. այլ որպէս ձախորդութեամբ պըսակուած ամենաարժանաւոր կնոջ, որը գնահատել գիտէ երախտագիտութիւնը բարութեան հետո: Հիւրիզատը նամակները վերջացնելով, Հափիսի անունով գրածը յանձնեց Աննային. իսկ Թեմրազինը՝ իւր հաւատարիմ աղախնու այր Իբրահիմին:

Ճաշը վերջացել էր, շատերն ազնուականներից և նշանաւոր մարդկանցից պատրաստ էին Թեմրազին հանդիսաւոր եղանակով ճանապարհ ձգելու, գարպասի առաջ եղած մեծ հրապարակի վրայ ամենաարժանգագին ոսկեթել թամբերով զար-

դարուած արաբական նժոյգների տրոփիւնը և խինջոցը մէկ առնաձին հանդէս էին պատկերացընում. իսկ դարպասի հիւսիսային կողմի խանի առանձնասենեակներից մէկի մէջ երեք չքնաղ արարածներ մի տիսուր տեսարան էին ներկայացնում:

Յերեկուայ լուսաւոր աչքն երկնքի մի ծալրից հողագունդը գիտելով միւս ծալրին մօտեցած էր, Բասիւլ-բէկն իւր կազմ ձիւորներով, իսկ բէկազնեալք փրփրերախ նժոյգներով իմբուած էին մեծ հրապարակի վրայ: Թեմրազն առանձին իւր սուր աչքերը Հիւրիզատի քնքուշ մատներով գրած սահուն ու իմաստալի ոճով նամակի վրայ անլագ ախորժակով պտտացնելուց յետոյ, Ամիրի հետ մեծ սրահի մի ծալրից միւսը կ'հասնէր:

Հասաւ վերջապէս և այն ցաւալի ու սրտաճըմլիկ բոպէն, որին սրտատրոփ կ'սպասէր Աննան, նա պարսկական հազուստով, փաթաթուած ծածկոցի մէջ, դուրս գալով Շուշանի և Հիւրիզատի հետ հասան այն պարսպապատ փոքրիկ գրան, որը բաժանում էր կանանցին կից առանձնասենեակներն այն մեծ սրահից, ուր կ'ճեմէին Ամիրը և Թեմրազը, որսնք առանց իմանալու Աննայի և Շուշանի արտասուելի կցկտուր խօսքերի միտքը, լուսում էին միայն նրանց սրտաշարժ հեկեկանքը:


Ամիրի և Թեմրազի գութն աւելի շարժեց Աննայի պարսկական լեզուով դէպի Հիւրիզատը և

Շուշանն ուղղած վերջին խօսքերը «գերութեան ծանր շղթաների օղակը փշրում է մեր անրակները, ալսօր անդժաբար խլում են մալրն որդուց, որդին՝ մօրից և բարեկամը բարեկամից։ Զաւակս, կ'դադարէք ալսուհետեւ ինձ մալր կոչելուց, ահա ձեզ մալր բարի Հիւրիզատն-ողորմած խանումը։ Այսուհետեւ չ'պիտի տեսնեմ ձեզ, չ'պիտի լսեմ ուրախացուցիչ ձայնդ, ահա և իմ մալրական վերջին համբուրիս հետ և օրհնութիւնս.... Երկինք.... մահ.... գիտացէք....»

Ողորմելի Աննան իրանից բաժանվող աղջիկը կարծես չէր ուզում թողել. նրան դրկած, իր երկու ակնակիտ աղի աղբիւրները վրան կ'հոսացնէր. իսկ Հիւրիզատն ալդ ողբալի տեսարանին շուտ վախճան տալու համար, Շուշանին մօրը բազուկներից պըճացնելով հեռացրաւ ինչպէս դեռ յագուրդ չ'ստացած որթ՝ մօրը ստինքներից։ Հիւրիզատը մխիթարելով Աննալին, տուաւ իւր հրաժարական ողջոյնն տսելով «առէք ալս փոքրիկ քըսակը ևս ձեր անձնական հարկաւորութեան համար»։

Աննան նստելով յատուկ իրեն համար պատրաստուած ձիի վրալ, Թեմրազի հաւատարիմ ծառաներից մէկի առաջնորդութեամբ դուրս եկաւ դարպասից։

Քանի օրվա անընդհատ ճանապարհորդութիւնից յետով, մի գեղեցիկ օր Թեմրազն իր խմբով



Հասնելով Բ. քաղաքը յանձնեց Ալլահուլի-խանին
Ամիրի զրկած թանգագին ընծաների հետ և նա-
մակը, որով Ամիրն անկեղծաբար ցոյց էր տալիս
իւր ունեցած դէպի խանը բարեկամութիւնը և
հաւատարմութիւնը»:

Հափիսն իւր հարճերի մէկի ձեռքով ստանա-
լով Հիւրիգատի նամակը, հարկաւոր հոգատարու-
թիւնը չէր մոռացած Աննալին իւր մօտ բերելու:
Կարճ ժամանակից լետով, Աննան իւր համեստ
բնաւորութեամբ գրաւելով Հափիսին, սկսեց մի
փոքր ուրախանալ, որովհետեւ նրա անուանը տակ
մի երկրորդ բարերար Հիւրիգատ կ'տեսնէր:

Նուշանին թողելով Հիւրիգատի՝ իսկ Աննալին
Հափիսի մօտ, դառնանք դէպի ընթերցողին յայտ-
նի Քեարիմ-բէկը:

Մէկ ամիս անցել էր երբ Քեարիմն իւր երեք
ծառաներով Ամիրի մարդիկը ներկայացրին Միւշ-
տէխտին, որի հրամանով Քեարիմն ենթարկուեց
անսահման ժամանակով խիստ բանտարգելութեան,
նրա երեք ծառաները թեթև պատժի և տուգան-
քի. իսկ Ասլանն իբրև ազատ, բռնեց իր գիւղը
տանող ճանապարհը:

Կանուխ դեռ արեգակի ճառագայթներն եր-
կրագունդը չ'տեսած, Ասլանը կանգնեց իր գրան
առաջ: Տիրասէր շան կաղկանձոցի և ձիի խխնջոցի
վրայ իսկոյն դուրս թռաւ տանից կովհարը Սու-
լէլմանի հետ: Ասլանն իր հալքական սիրոլ համ-

բոլըները Սուլէլմանի ճակատին գրօշմելուց յետով, ձին թողելով որդու խնամատարութեանը, ինքը կովհարի հետ մտաւ տուն և գրկելով իւր երկու քնած անմեղ զաւակներին ինքը ևս ընկաւ զօրացուցիչ քնի գիրկը:

Ճաշի ժամանակ էր, Ասլանն իւր ընտանիքով բռնած էր սեղանի շուրջը, Կովհարն Ասլանի վերադարձը Ռուսաստանից կարծելով՝ հետաքրքրաբար հարցնում էր «Ի՞նչպէս անցաւ ձեր արշաւանքար հարցնում էր «Ի՞նչպէս անցաւ ձեր արշաւանքար կեաւուրների գէմ, ուր են Քեարիմ-բէկը և քը կեաւուրների գէմ, մի գուցէ թշնամիների նրա միւս ծառաները, մի գուցէ թշնամիների սուրը կամ գնդակները զրկած են նրանց մի ալլաշխարհ։ Ասլանն ալլ ևս ծածկելու տեղիք չունէր, նա պատմեց Կովհարին թէ Աննալին և Շուշնին բէկի հրամանով փախցնելը, թէ Ամիրի շանին բէկի հրամանով փախցնելը, թէ Միւշտէիտի հրամարդկանց ձեռքով բռնվիլը, թէ Միւշտէիտի հրամանով Քեարիմ-բէկի միւս ծառաների հետ բանտարգութիլը և թէ իւր ազատութիլը։

Յուլիս ամիսն էր, քրտնաճակատ գիւղացին ամենահրօւստ բնութեան առատ պարզեաբաշշան խութիւններից լցնում էր իւր ամբարները, տեղ կալերումը գիւղուած էր գեռ աշխատասէր տեղ կալերումը գիւղուած էր գեռ աշխատասէր երկրագործի արդար աշխատանքի պտուղն։ իսկ հարացուցեալ ծերունի Աբրահամի հարուստ ընտանիքի ոսկեգոյն արտերը կիսով չափ գեռ գեղածին կանգնած սպասում էին անխոնջ մշակի սուր-

Արևի բոլորշի գիմաց տեղ, շերդացեալ լուսնի եղիւրը կերւար, անհամար աստղերի բազմութիւնը զարդարելով երկնալին կապուտ կամարը՝ ցոյց էին տալիս անհասանելի բնութեան ամենասքանչելի արարչագործութիւնը, խորհրդաւոր լուռութիւնը թագաւորում էր ամեն տեղ, միայն հովիւների քաղցրահնչիւն սրիգների մելամաղձալին ձայնն էր որ հեռութից թմրութիւն էր ձգում լսողների վրայ։ Ասլանը չէր մոռացած Աննալի աւանդը և նամակը, նա գուրս գալով տանից ուղղեց իր քաղցրը դէպի Ս. գիւղը։

Ասլանն ապերախտութեան աներեոյթ ծանր շղթալի տակ, գլուխը կախ՝ գնում էր դէպի այն աղքատասէր տունն, որի օգնութեամբ քանի անգամ ազատած էր իւր ընտանիքը թշուառ գրութիւնից և իրեն մահից։ Ծերունի Աբրահամի մեծ որդի Գաբրիէլը շների հաշիւնի վրայ գուրս գալով և տեսնելով իւր վաղեմի ծանօթ Ասլանին՝ հրաւիրեց տուն։ Ասլանը խորին տիրութեան մէջ և առանց նրանց երբեմն երբեմն արած հարցերին պատասխանելու, ձեռքը ճակատին, աչքերը դէպի Վահանը յառած, արտասուքի կաթիլներ կ'գլորէր չոր այտերի վրայ։


Ծերունու երկու որդիները Գաբրիէլը և Միքայէլը տեսնելով Ասլանի արտասուքը և կարծելով որ նա մի կարիք կունենալ, խղճահարուած քաջալերում էին նրան ցոյց տալով իրենց օգնելու յօժարակամութիւնը։

Ասլանն այլ ես չ'կարողանալով սիրտը պայ-
թեցնող գաղտնիքի հետ և խոշոր աչքերի հոսան-
քը պահել շարունակեց «իմ բարերարներ, ես ան-
արժան եմ ձեր օրհնեալ օջաղի հիւրասիրութեանը.
իմ ակամալից գործած եղեռնագործութեանս հետ
և ձեր երախտիքը տանջում են ինձ: Ես իբրև
ծառալ կուրօրէն կատարած եմ իմ անիրաւ տիրոջ
Քեարիմ-բէկի հրամանն Աննալին և Շուշանին
փախցնելով, ես յանցաւոր եմ, ահա իմ պարանո-
ցը և ահա սուր, մահ, կամ ներում... ոհ ան-
դունդ... դժոխք... դուք ես կ'խորշէք ինձ նմանն
ընդունելու: Ո՞չ՝ գեռ արիւնս կեռայ երակներիս
մէջ. Աննան և Շուշանը պիտի դառնան իրենց
սիրելիների գիրկը, ու թէ նրանց հետ ինչպէս եմ
վարված, ահա նամակիցս և ինձ տուած աւանդի-
ցը, որը յանձնում եմ քեզ սիրելին իմ Վահան,
կարողէք իմանալ»:

Ո՞չ լեզուի ճարտարութիւնը և ո՞չ գրչի սրու-
թիւնը չեն կարող իսկապէս նկարագրել մի պատ-
կեր, որը յառաջանում է երկար ժամանակով մի-
մեանց տեղ չիմացող և միմեանցից խլուած սիրե-
լիների հազարաւոր զգացմունքներից, մանաւանդ
այն ժամանակ՝ երբ գերի մալրը գրում է իւր
հարազատ որդուն, Վահան, սիրելի Վահան, կար-
դա այս վերջին բառերը ևս, համբուրիք արտա-
սուքով թրջած նամակս, որովհետեւ մօրդ սէրը
այդ արցունքը թափեց, երկար չեմ կարող գրել...

ահա քեզ և վերջին օրհնութիւնս... Աստուած...
գուցէ էլ չտեսնվինք այս աշխահրում. մնաք բարեւ:

Ասլանը Գաբրիէլի և Միքայէլի խնդրքի համաձայն պատմեց թէ Աննալի և Շուշանի փախցընելը, թէ Մուշտէիտի հրամանով իրենց բռնվիլը, թէ Աննալի և Շուշանի համար իւր դիպի Ամիրին արած աղաչանքը և թէ նրանց ուր գտնվիլը: Այս բոլորը լսելուց լետոյ, վճռեցին որ արտերը շուտով հաւաքեն և Ասլանի առաջնորդութեամբ Միքայէլին ու Վահանին ճանապարհեն դէպի Աննան ու Շուշանը:



ԱՍԼԱՆԻ, ՄԻՔԱՅԵԼԻ ԵՒ ՎԱՀՈՆԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Աշնանալին գեղեցիկ առաւօտներից մէկն էր, գեռ նոր ամենաբարձր լեռների գագաթները ծիծանի գոյնէին ստացել, երբ Ասլանը, Միքայէլը և Վահանը հրաժարական ողջուն տուին իրենց հայրենի տանը:

Նոր նոր Ոռւսաստանի մէջ խաղաղութիւնը վերականգնել էր, պարսից ասպատակիչ զօրքը չըկարողանալով դիմադրել Մ. քաջութեանը. մեծ կորուստ ստանալուց յետոյ, ինչպէս փոշի քամու առաջ փախել էր մինչև Դ.

Ա. քաղաքի Ամիր-խանի Ոռւսաց կողմից ստացած հարուածն անբուժելի և անմոռանալի էր, նրան կրտսեր եղբայրը և երկու եղբօր որդիքն, որոնք պարսից արքունի վաշտի մէջ կ'ծառայէին ընկած էին պատերազմի գաշտում։ Ամիրն իւր սիրելիների մահից յետոյ, երկար չ'կարողանալով ապրել, թողեց մահկանացուների աշխարհը։

Նիրխանը, Ամիրի միակ որդին՝ հօր մեռնելուց յետոյ, նրա կանանցը հեռացրաւ. իսկ Հիւրիզատին, որի մօտ լինում էր Շուշանը, պահեց իւր մօտ մի առանձին նպատակով այն է՝ Շուշանին կին առ-

նելու համար։ Հիւրիզատը լաւ իմանալով որ Նիրխանը միայն իւր մտադրութիւնը կատարելու համար կ'յարգէ իրեն, մի հանգամանօրէն նամակով լաւտնեց իւր հօրը։

Հիւրիզատի հայրը, պարսից շահի գլխաւոր նախարարներից մէկն էր, ստանալով աղջկայ նամակը, իսկոյն իւր որդի Ռուստամին զրկեց նրա մօտ։ Ռուստամը Նիրխանին կասկած և անբաւականութիւն չ'պատճառելու համար, Հիւրիզատի թեան պատրուտակով առնելով քրոջը Հիւրիզատին և Շուշանին տեղափոխեց իւր հօր կալուածների սահմաններից մօտ Ա. դարպասը, որն իւր մօտագայ գիւղով Ամիրը կտակած էր Հիւրիզատին։

Ջեռոն արդէն իւր սպիտակ ու փափուկ սրբուցով ծածկել էր ամբողջ երկիրը։ Ընթերցողին լայտնի երեք ցրտահար ճանապարհորդները մօտացել էին Ա. քաղաքին, որի գիտանոցի հսկալածե գմբէթը լիշեցնում էր Ասլանին իրեն Աննալից և Շուշանից բաժանող տիսուր ըոպէն։

Միքայէլը հետաքրքրվելով Ասլանի աշքերում փալող արտասուրքի կաթիլներով, իմացաւ որ նոյն իսկ քաղաքումն է թողած Ասլանն Աննալին և Շուշանին և ահա գիտանոցը՝ ուր կ'բնակէին նըանք։

Միքայէլի և Վահանի սրտերը կը տրոփէր, ուրախութեան արցունքը կ'թրջէր նրանց սառած դէմքը, նրանք աւելի արագացնելով իրենց գնացքը

կուզէին մի ժամ առաջ տեսնել իրենց սիրելիներին:

Ասլանը քաշելով իւր ձիի սանձը և կանգնեցնելով ընկերներին քանի մի զգուշացնող խօսքեր կրկնելուց յետոյ ասաց, «Եղբայրք մենք արդէն գտնվում ենք մի այնպիսի երկրում, ուր անպատճառ ձեզ պիտի մահմետական ձեացնէք, ձեր արտաքինը շատ համապատասխանէ, իսկ ներքինը միայն Աստուած և մենք պիտի իմանանք. ուրեմն Միքայէլ ձեր անունն այսուհետև կ'լինի Քեարիմ, իսկ Վահանինը՝ Նուրի: Երեկոյեան ազանի ժամանակ Ասլանն իւր երկու ընկերներով վաստակած երկար ճանապարհորդութեան և ցրտի երեսից, իջաւ մի քարւանսարալում:

Միւս օրն Ասլանը Միքայէլի հետ դուրս գալով գնացին դէպի Ամիրի դարպասը, որի նախադրան վրայ ծածանւող սև սգառիթ դրօշակը տեսնելով, մօտացին մի ծերունու հետեւեալ հարցով «Հալրիկ, ալս ի՞նչ դրօշակ է:

— Մեր ամենից յարգուած Ամիր-խանը քանի ամիս առաջ վախճանվեց, 'ի նշան դէպի այն բարերարն ունեցած սիրոյ, քաղաքը սուրգ կ'պահէ:

— Իսկ նրա որդին և բազմաթիւ կանայք ուր կ'գտնուեն:

— Ամիրի որդի Շիրխանը հօր մահից յետոյ, նրա բոլոր կանանց հեռացնելով՝ պահած է միայն Հիւրիզատին, որի իւր հօր հիւր գնալուն շատ ժամանակ չէ, պատասխանեց ծերունին:

Ասլանը ծերունու ասածները լաւ ստուգելուց յետոյ, Միքայէլի հետ դարձաւ իւր իջևանը, նրանք տիսուր վարանմունքի մէջ, չ'գիտէին ինչ անել, դէպի Աննան գնալ, թէ Շուշանը, վերջապէս աչքի առաջ ունենալով Շուշանի ջահիլութիւնը և նրա կեանքի վտանգաւոր դրութիւնը, վճռեցին ուղղեորիլ դէպի Դ. քաղաքը:

Միւս օրն երբ արեգակի անզօր ճառագայթները կաւետէին երկրագնդին, Ասլանն իւր ընկերներով եափունջիների մէջ փաթաթուած բռնեցին Դ. քաղաքը տանող քարուտ ճանապարհը:

Զմեռուալ սաստիկ ցրտի, դժուարագնաց ճանապարհի և Վահանի երկար ճանապարհորդութեան անսովոր լինելուն համար, հազիւ թէ մի ամսից յետոյ մեր ճանապարհորդները կարողացան հասնել Դ. քաղաքը:

Ասլանը և Միքայէլը զանազան միջոցներով հարցուփորձ էին անում Հիւրիզատի մասին և ոչ մի ուրախացուցիչ բան չէին լսում: Մի օր վըռողաբար Ասլանն ասաց Միքայէլին, «Ես էլ երկար չեմ կարող համբերել, անպատճառ պիտի ներկայանամ Հիւրիզատի հօր տանը, այնտեղ մի որ և իցէ ծառալական պաշտօն ստանալու. գուցէ և կարողանամ իմանալ թէ որտեղ է Հիւրիզատը: Այդպէս էլ արաւ և ստացաւ ախոռապետի պաշտօն, որի մասին յայտնեց Միքայէլին և խնդրեց որ իրենց մօտ ունեցած փողը չ'սպառելու համար,


գոնէ մինչև գարնանամուտ Վահանի հետ իրենց
դարբնութեան արհեստը բանացնեն:

Քանի շաբթից յետոյ, Ասլանը մտերմացաւ
տան բոլոր ծառաների և մէկ պառաւ կնոջ հետ,
որն իւր բազմամեալ և հաւատարիմ ծառայու-
թիւնով նախարարի տան մէջ սիրելի էր բոլորին:
Մէկ երեկոյ քանի որ պառաւը մի հին անցք կը-
պատմէր, Ասլանն ի միջի ալլօց խօսք ձգելով
իմացաւ որ նախարարն ունի երկու տղայ, և մի
աղջիկ, որոնցից մեծը գտնվում է զինուսրական ծա-
ռայութեան մէջ, փոքրն-Ռուստամը գնացած է Ա.
քաղաք իւր քրոջ Հիւրիզատ-իանումին այցելու-
թեան, նրա այր Ամիրի մեռնելու համար:

Ասլանը Հիւրիզատի համար նախկին լսածնե-
րը համեմատելով պառաւի խօսքերի հետ, պարզ
տեսնում էր որ մէջ տեղ մի գաղտնիք կալ, որն
իմանալու համար հարկաւոր էր սպասել մինչև
Ռուստամի վերադարձը:

Գարնանալին տաք քամիները փչում էին, ձիւ-
նապատ լեռները և բլրակները ծածկուած էին կա-
նապատ գորգերով, վերակենդանութեան ուրախացուցիչ
ոգին մի փոքր առաջ մեռած բնութեան մէջ
սկսել էր իւր զօրութիւնը ցոյց տալ, գարնանաւ-
ետ թոշունները ճախրում էին մաքուր օդի մէջ,
երբ մի գեղեցիկ առաւօտ յայտնեցին նախարարի
որդի Ռուստամի գալուստը:

Երեկոյեան դարպասը բոլորովին լուսաւորված



էր, նախարարի բարեկամներն եկած էին Ռուստամի գալուստը շնորհաւորելու, ուրախութիւնը թագաւորում էր այդ նշանաւոր տան ամենագեղեցիկ շինուածքի մէջ։ Ասլանն էլ իւր առանձին ուրախութիւնն ունէր. նա իւր շուրջն առած նախարարի քանի մի նշանաւոր ծառաների հետ Ռուստամին բերող մարդկանց, երբեմն երբեմն աստիճանաբար պատմում էին հին դիւցազունների առասպելական քաջագործութիւնները, պարսից շահերի միւս ազգութիւնների հետ արած արիւնահեղ պատերազմները, զանազան խաների միմեանց հետ ունեցած արշաւանքները, իրենց կրած նեղութիւնները, լաղթութիւնները, աւազակութիւնները և այլն։ Ոմանք էլ զալեանի թանձր ծխի հետ արձակած խոր հառաջանքներով, աւազում էին իրենց երիտասարդութեան ժամանակ կորցրած ոսկի ժամերի վրա։

— Անցեալն անդառնալի է, նրա համար աւելորդ է ափսոսալն ասաց Ասլանը, ձեզ տիսրութիւն չ'պատճառելու համար, մեր խօսակցութեան նիւթը լաւ կ'լինի փոխել, դուք այն ասացէք, շատ ժամանակ է Ռուստամին մօտ էք, դարձնելով ուշը դէպի Ռուստամին բերող մարդիկը։

— Երկրորդ օրն է։

— Ի՞նչպէս թէ երկրորդ, աւելացրաւ Ասլանը, ես ահա երկու ամիս է ալս տեղ. բայց Ռուստամն ինձանից շատ առաջ է հայրենիքից բացակայած։

— Արդարեւ ալդպէս է, մենք նրա մշտական ծառաները չենք. այլ իբրև նրա կալուածականներ պարտաւոր ենք մեր տէրը մի որ և իցէ տեղ գընալուց, գիւղից գիւղ տանել. պատասխանեցին նրանք:

Ասլանի ծառալութեան երրորդ ամիսն էր, նա ներկայանալով իւր տիրոջ՝ լայտնեց որ իւր ընտանիքից ստացած տիրեցուցիչ նամակի համաձայն, ցանկանում է կարճ ժամանակով գնալ հայրենիք։ Մի գեղեցիկ օր Ասլանը, Միքալէլը և Վահանը մի լիքը պայուսակ պնդացնելով իրենց ձիաների վրայ, թողեցին Դ. քաղաքը։

Մի սակաձև կանաչ և ծաղկազարդ ձորակի մէջ երփներփն սոխակների դալլալիկը քանի մի թուզունների բազմահագագ գրաւիչ սուլելը, ծաղկազարդ ծառերի և թուփերի արմատների տակով թագուն հոսվող օձապտոյտ առուակների կարկաչիւնը, համեստ մանուշակի և այլ բազմատեսակ վալրենի ծաղիկների անուշահոտութիւնը մի փոքրիկ դրախտ էին ներկայացնում։ Այս հրաշալի բնութեան գեղեցիկ անձեռագործ դրախտի մէջ, լայտնի ճանապարհորդները բռնել էին մի համեստ սեղանի շուրջը։

Մութը դեռ երկերս չէր պատել, երբ Ասլանն իր ընկերներով վալր իջաւ Խ. գիւղացի Խալիլի տանը, որը Ռուստամին իւր հալրենիք բերող մարդկանցից մէկն էր։ Խալիլն իր նոր բարեկամներին լաւ հիւրասիրելուց յետոյ, առաւօտեան

առաջնորդեց մինչև Ք. գիւղը և քանի օրից յետոյ Ասլանն իր ընկերներով հասաւ այն գիւղին, որը բաժանում էր մի այլ խանի պատկանող հողերի սահմանը։ Այս գիւղումն էլ թէ և Ասլանն իջեանած էր Ռուստամին դէպի հալրենիք բերող մարդու միակ էին և հազիւքանի օրվայ մէջ կարողացել էին հասնել իրենց գիւղը։ Ասլանը շուարած չ'գիտէր դէպի որ կողմը գնար, վերադառնալ նորէն քաղաք՝ անօգուտ էր բոլորովին, առանց Աննալի և Նուշանի դէպի հալրենիք, որտեղ անհամբեր աչքը ճանապարհին սպասում էր մի ողորմելի ընտանիք իւր սիրելիներին, խիղճը կ'տանջէր։ Վերջապէս Ասլանն երկու օր Ռ. գիւղում մնալուց և ոչինչ ուրախալի հետք չ'գտնելուց յետոյ, ասաց Միքալէլին «Ճախորդ դէպիքերն արգելք են լինում մեզ, միայն վհատիլ չէ հարկաւոր»։ այլ հաստատուն կամքով և տոկնութեամբ պիտի աշխատենք և ես վստահ եմ որ Աստուած կ'պսակէ մեր լոյսը։ Հիւրիզատը դեռ մընում է իւր անլալտութեան մէջ և մեզ ոչինչ չէ մնում անելու, եթէ ոչ՝ վերադառնալ Ամիրի քաղաքը, ուր եթէ չ'լաջողվի իմանալ Հիւրիզատի տեղը, գոնէ կ'գնանք դէպի Աննան։

Գարնանային անձրեսոտ օրերից մէկն էր, կապուտակ երկնքի տակ սև սև թանձը ամպերը վարագուբելով անթափանցելի էին դարձրել մալր մտնող արեգակի ճառագայթները, կայծակնացայտ անընդհատ որոտմունքներին արձագանք էին տալիս անդնդախոր ձորերը, հինաւուրց քարալըները և մէկ առանձին սարսափ էին ձգում մարդու վրայ:

Ընթերցողին լալտնի ահաբեկ և անձրեկ երեսից բոլորովին ողողված ճանապարհորդները գեշերուալ մժութեան մէջ ճանապարհները կորցրած, կանգնեցին մի փոքրիկ ապաստարանի առաջ, որը գտնվում էր մի ծառոտ բարձրաւանդակի վրայ:

Ասլանի ձայնի վրայ դուրս գալով մի բարձրահասակ, ածխագործի սեռութեամբ թաւամազ մարդ, հրաւիրեց ներս: Խրճիթը կրակի լուսից բոլորովին լուսաւորված էր, Ասլանն իւր ընկերներով բռնած թէժ կրակի շուրջը թրջած հագուստները կը չորացնէին, ձիանքը խրճիթի մի կողմում ագահաբար քաղցած որովայները կ'լցնէին. իսկ բընութիւնը դեռ իւր կատաղութեան մէջ գոռալով գոչելով շանթեր կարձակէր:

Գիշերից բաւականին անցել էր, մի փոքր առաջ սարսափեցնող որսոտմունքների, փայլատակումների տեղ տիրում էր խորհրդաւոր լուսութիւն: Երկնալին փերուզագոյն կամարի տակ սև սև ամպերի տեղ փայլում էր բոլորշի լուսինը շրջապատուած անհամար աստղերով: Քանի որ մեր ճանապար-

հորդներն իրենց վաստակած մարմնին փոքր ինչ հանգիստ կ'շնորհէին, նրանց հիւրենկալ տւագակ Մամմատը իւր ընկերներով առած նրանց ձիաները և հրացանները հեռու կ'փախչէին:

Ասլանն իւր ընկերներով երկար որոնելուց և ոչինչ չգտնելուց յետոյ, ճանապարհ ընկաւ և քանի օրից յետոյ վաստակած հասաւԱ. քաղաքը:

Ասլանը Ամիրի դարպասի մօտ տեսնելով մի մարդ և ճանաչելով որ նա իւր և Քեարիմ-բէկի կալանաւորվելու ժամանակ Թեմբրազի թիկնապահ ծառաներից մէկն էր, հարցրաւ նրան:

— Ո՞ր տեղացի էք:

— Բ. քաղաքից.

— Ի՞նչով կ'պարապվիք այս տեղ:

— Նամակ էի բերած Ամիրի որդի Շիրխանին, որը դժբաղաբար այս տեղ չէ:

— Ալժմ ինչ էք ուզում անելու:

— Վերադառնալ հալրենիք.

— Ե՞րբ.

— Եաբաժ օրը պատասխանեց նամակաբերը:

— Բարեկամ, ես հենց ձեզ պէս մի լուսալի մարդ կ'որոնէի, որ կարողանալի նամակս հասցնել իմ բարեկամ Թեմբրազ-բէկին ասաց Ասլանը:

— Ներեցէք պարոն, ես շատ ուրախութեամբ կ'կատարէի ձեր պատուէրը, եթէ մահուան սուր մանգաղը կ'տրած չ'լինէր բարեկամիդ կեան-

քի թելը։ Ասլանը քանի մի ցաւակցական խօսքերից լետոյ, սեղմելով խօսակցի ձեռքը վերադարձաւ դէպի իւր ընկերները և լայտնեց որ վազը հարկաւոր է ճանապարհվիլ դէպի Աննան, որովհետև Թեմրազն՝ որը միախ կարող էր ճանաչել իրեն, արդէն վախճանված է։

Ա.ՍԼ.Ա.ՆԻ ԴԷՊԻ Բ. ՔԱՂԱՔ ՈՒՂՂԵՒՈՐՎԻԼԸ

Գարունն իւր վերջին հրաժարականը տալով հողագնդին կատարել էր իւր շրջանը, արտորայքը գեղին գոյն էին ստացել, տեղ տեղ տաքութիւնից թխացած քրտնաճակատ աշխատասէր գիւղացին հաւաքում էր իւր աշխատանքի պտուղներն իւր ծիծաղելի և վշտալի կեանքի համար, որին և սիրում էր և արհամարհում։ Հազարաւոր խուրձերի գեղեցիկ կապուկները բոլորովին մոռացութեան տալով գիւղացսւ նեղութիւններին, մէկ առանձին հոգեկան ուրախութիւն էին պատճառում։ Նա գոհ իւր վիճակից և իրեն ստեղծող անհասանելի բնութեան հետ արած անխարդախ առևտուրից, աշխատում էր ապրել և հէնց դրա համար քրտինքը ճակատին վազում էր սնունդի ետևից առանց ուրիշինը խլելու և լափշտակելու իւր ողորմելի կեանքի կանթեղին մի փոքր ևս իւղ աւելացնելու, որն այնու ամենայնիւ մի օր անորոշ ժամանակով պիտի շիջանի։

Ամառալին ժամանակ էր, երբ որ վիրուզագոյն երկինքն երկրի չորս քեեռոների վրայ անաստղ մնաց, թողելով ասպարէզը լուսաւոր մար-

մինների հսկային, Ասլանն իւր ընկերներով շաբաթ առաւտօտեան թողեց Ա. քաղաքը և ուղեորդեց դէպի Աննան:

Ասլանը բոլորովին անծանօթ մնալու համար, մտնելով մի գիւղ ածիլել տուաւ միրուքը և հագնելով օր առաջ իւր համար գնած ազնուականավալել զգեստը, պատուրեց Միքայէլին և Վահանին օտարների ներկալութեամբ իրեն իշխանի տեղ դնել, յարգել և զգուշանալ Աննայի ու Շուշանի մասին մի որ և իցէ բան խօսելու, չ'մոռանալով նաև իրենց կեղծ Քեարիմ և Նուրի անունները:

Քանի օրից յետոյ, դեռ մեծ կամուրջին չըհասած, Ասլանն նկատեց հեռուից Իբատին, որը թէւ մօտեցած, բայց չէր կարող ճանաչել Ասլանին, մանաւանդ այն ծպտուած իշխանական հագուստի մէջ: Նա ողջունելով իւր անծանօթ ճանապարհորդներին Միքայէլին և Վահանին սկսեց նրանց գնալու տեղն և անուններն իմանալ:

Կամուրջն իւր երկուստէք կանաչազարդ փոքրիկ անտառներով երեւում էր, Ասլանը մի փոքր առաջ իբր անլուր իւր ուղեկիցների խօսակցութեանը ձիի բաշը շոյելով առաջ կ'գնար, նրան կրակոտ աչքերից թափվող կաթիլներից ընթերցողը կարող է իմանալ որ նա լիշում էր մի տիսուր անցեալ, որը ստիպել էր իրեն թողնել իւր ընտանիքն և ծննդավայրը:

Կէս օրին Ասլանն իջնելով կամուրջի մօտ,

փուեց վերարկուն կանաչ գետնի վրալ և թիկն տուած մի հաստաբուն կաղնու, սկսեց ծխել և ինչ և իցէ ուտելու բան պահանջել:

Հացը վերջացել էր, Ասլանն Իբատին իւր մօտ կանչել տալով և Ալլահուլի-խանի մասին մի քանի հարկաւոր տեղեկութիւններ իմանալուց յետոյ ասաց, «Իբատ, մենք ես պիտի գնանք Բ. Քաղաք, եթէ չունիս մի ստիպողական պատճառ շուտ գնալու, կարող ես մեզ հետ ուղեկցիլ և առանց ամաչելու իմ ծառալ Քեարիմի և Նուրու հետ ուտելը: Իբատը մեծ յօժարակամութեամբ հեռացաւ դէպի ծառաները»:

Մէկ օր Ասլանն իւր ընկերներով Իբատի առաջնորդութեամբ իջաւ մի գեղեցիկ կարաւանսարալի մէջ: Ճրագի աղօտ լուսով լուսաւորված սենեկի և նրան երկարութեամբ դրած գեղեցիկ թախտերից մէկի վրայ ընկած էր Ասլանը հանգըտանալու. իսկ նախասենեկի մէջ Միքայէլը և Վահանը հաւաքելով իրենց պայուսակները և գէնքերը, գտնվում էին Ասլանի մօտ:

Կարաւանսարալի ելեէջների և պատշտամբների վրայ անցուդարձ անողներից, բոլոր սենեակների մէջ վառվուուն ճրագներից, խոհանոցների մէջ պատրաստվող կերակուրների անուշահոտութիւնից, պարսկական լեզուի ամենաընտիր բառերով խօսակցութիւնից, պարզ երեսում էր որ կարաւանսարալի մէջ բնակվողներն առաջին աստիճանի մարդկանց կ'պատկանին:

Առաւտեան արշալոյսը ընկել էր քաղաքի ամենաբարձր շենքերի վրայ, քաղաքի ամբողջ դասակարգի մարդիկ գնում էին իրենց գործին. իսկ Ասլանի լինում կարաւանսարալի մարդիկ նուրբ սպիտակ վերարկուներով վաճառատների մէջ բռնած էին իրենց տեղերը:

Ասլանն իշխանավայել հագնված Վահանն ետևից ձգած դուրս գալով սենեկից, ուղղեց քայլերը դէպի բաղնիս: Միքայէլն էլ ձիոցը խնամք տանելուց յետոյ, դուրս եկաւ կարաւանսարալի առաջ եղած մեծ հրապարակը, որտեղ կարծես հաւաքուել էր քաղաքի ամբողջ բազմութիւնը:

Կանանցից և աղջիկներից շատերը վաճառում էին գուլպաներ, երեսսըբիք, ուլունքներով զարդարած ծամկալներ, զանազան տեսակ ասեղնագործ արախիններ և ուրիշ մանրուքներ. իսկ տղամարդիկ՝ մատանիներ, քարեղէններ մի բանով այն ամեն թանգագին և աժանագին նիւթեր, որոնց մարդ կարեռութիւն ունի: Միքայէլը հետաքրքրութեամբ նայելով վաճառելի նիւթերի վրայ, անցնում էր մէկից դէպի միւսը, նա նկատեց մի գեղեցիկ արախին, որի վրայ ասեղնագործութեամբ գրուած էր հայերէն հետեւեալ բառերը «Եթէ այս արախինն անցնի հայի ձեռք, թող զգուշութեամբ որոնէ թշուառ Աննալիս»:

Միքայէլն իւր յուզմունքը ծածկելով, աղջրկան կասկած չ'տալու համար, ինչ և իցէ մի բան

գնելով հարցրաւ այս արախինն էլ քո ձեռագործն է:

— Ո՞չ՝ այդ մեր Հափիս-խանումի սիրելի աղախին Նահնիսալի գործն է։ Միքայէլն ալլ ևս չ'երկարացնելով, վճարեց գինը և հեռացաւ դէպի իւր իջևանը։ Սիրտը բաբախում, ուրախութեան արցունքն աղբիւրի պէս հոսում էր նրա աչքերից, ստէպ ստէպ մօտացնելով նա իւր շրթունքին համբուրում էր իւր սիրելու ձեռագործը։

Ասլանը վերադառնալով բաղնիսից իմացաւ բոլորն և հրամալեց ճաշ պատրաստել։ Քեարիմը խոհարաններից մէկին հարկաւոր պատուէրը տալուց յետոյ, պատահեց Իբատին։ Երկու ծանօթները միմեանց բարեելով դիմեցին դէպի մի գեղեցիկ ահագին շինուածք, որը բաժանվում էր ընթերցողին յայտնի կարաւանսարալից մի ամենաբարձր պարսպով։

— Բարեկամ ալս շինուածքն ումն է։

— Ալլահղուլի-խանին։

— Դեռ կենդանի է։

— Ինչպէս չէ, նա ահա երկու շաբաթ է որ հարկաւոր կարգադրութիւններ անելուց և կառավարութիւնն իւր մեծ որդի Մահմուտին լանձնելուց յետոյ, իւր սիրելի կնոջ Հափիս-խանումի և նրա հարճերի հետ գնացած է Մեկկայ ուխտ։

Միքայէլը տիսուր և յուսահատ դրութեան մէջ, եկաւ և լսածները պատմեց Ասլանին։ Ճաշը

վերջացրել էր Ասլանն իւր ընկերներով տիսուր մտածմունքի մէջ չ'գիտեր ի՞նչ անէր Աննալին և Շուշանին ազատալու համար, խոչընդոտ հանգամանքներն ոչնչացնում էին նրանց յոյսը: Ասլանն իրեն այդ տիսուր մտածովութիւնից ազատելու համար հրամայեց ձիանքը թամքել:

Միքալէլը գուրս գալով դէպի ձիաների սըրահը, պատահեց Իբատին և յայտնելով Ասլանի դիտաւորութիւնը, ինդրեց որ ինքն իրեւ ծանօթքաղաքի ամեն թաղերին առաջնորդէ իրենց: Կարճժամանակից յետոյ, Ասլանն երեք ծառաներով դուրս ելաւ կարւանսարայից և Իբատի առաջնորդութեամբ քաղաքի ամենանշանաւոր տեղերը պատելուց յետոյ, ուղղեց ընթացքը դէպի այն ճանապարհը, որի երկու կողմը զարդարում էին սպարթախիտ ուռենիների և զանազան կանաչազարդ գեղեցիկ ծառերի շարքը:

Ասլանը Աննալի մասին հարկաւոր և ճիշտ տեղեկութիւններ իմանալու համար, աւելի քաղցը ակնարկ ձգեց Իբատի վրայ և զանազան անկասկածելի դարձուածներով և հնարներով իմացաւ որ ինքն Իբատը նամակատարի պաշտօն կ'կատարէ խանի դրանը, որը շատ սիրով կ'վարվի իւր ժողովուրդակաների հետ, որի համար և ամենից լարգուած է, ունի չորս կին, մի տղա և երկու աղջկե. իսկ Հափիսին՝ որ իւր ամենասիրելի կինն է, կամքը կատարելու համար, գնացած են Մեկկայ ուստ:

—Ուրեմն դու Ա. քաղաքը նամակատարութեան պաշտօնով էիր գնացած, հարցրաւ Ասլանը:

—Ո, միայն նամակը՝ որին պիտի լանձնէի, ասացին որ Դ. է գնացած:

—Կ'նշանակէ նամակը Հիւրիզատին պիտի հասնէր:

Իբատը զարմացմամբ, «տէր դուք ո՞ր տեղից գիտէք:

—Զարմանալ հարկաւոր չէ, շարունակեց Ասլանը, քանի որ գիտեմ Ամիրը վախճանված է՝ նըրա որդի Շիլխանը գտնվում է Թ. քաղաքում, իսկ Հիւրիզատն է որ գնացած է Դ. քաղաքն իւր հօր ալցելութեան:

—Իսկութիւնը ծածկել ձեզանից ո՛ իշխան, անազնութիւն է. ձեր ասածն ուղիղ է պատասխանեց Իբատը:

Ասլանը, ես վստահ եմ որ ինձ չ'պիտի խաբեա. Հիւրիզատն իւրեւ իմ ազգականի աղջիկ գիտեմ որ թէ և ոչինչ բարեկամութիւն չունի թէ խանի և թէ նրա կանանց հետ, այնուամենայնիւ տարած նամակդ պիտի լինի կնոջ կողմից քան թէ խանի: Իբատը խոստովանվեց որ նամակն եղած է Հափիս-խանումի կողմից:

Ցերեկուայ լուսաւոր և ալրող արեգակը հեռանալով, իւր վերջին ճառագալթները ձգել էր ամենաբարձր լեռների և բլուրների գագաթներին, մեղմ քամիներից շարժվող տերևների խշխոցը, վճիտ

առուակների կարկաչիւնը, թուչունների երեկուեան դաշլալիկը, բարձր մինարետների գլխից ժողովուրդին աղօթքի հրաւիրող մօլլաների կոչք, կարծես ձայների ներդաշնակութեամբ փառաբանում էին հրաշալի բնութեան ստեղծողի ամենաբարձր անունը, երբ Ասլանը վերադառնալով իւր իջևանը և վարձատրելով Իբատին արձակեց:

Գիշերվայ քողը պատել էր աշխարհը, Ասլանն իւր ընկերներով խորին լուսութեամբ ընկած էր մըտածողութեան մէջ. 'ի վերջով նա ուշը դարձնելով դէպի Միքայէլն ասաց, «մենք պիտի աշխատենք Հափիսի նամակը ձեռք բերել, բայց չ'զիտեմ, կարող ենք, թէ ոչ»:

Միքայէլն այն նամակը ձեռք բերելու համար, հարկաւոր համարեց Իբատի հետ մտնել սերտ բարեկամութեան մէջ, և կարճ ժամանակից յետով, այնքան մտերմացան միմեանց հետ, որ մէկն առանց միւսին մի օր տեսնելու չէր կարող մնալ: Մի օր Միքայէլը ճաշի վրայ ուղղելով խօսքը դէպի Իբատը, ասաց, «ազնիւ բարեկամ, ես իմ սրտի գաղտնի ցանկութիւնը բանում եմ ձեզ, որն եթէ կատարվի աւելի և աւելի պիտի պնդվի մեր բարեկամական կատար: Ես իմ սիրելի ամուսնու մահից յետով, այլ ևս չուզելով ամուսնանալ, նուրին՝ (Վահանը) որն իմ որդի լինելու մասին դուք դեռ չ'զիտէք, պտտացնում եմ հետս, նրա համար՝ որ իմ հայրենիքում ոչ մի ազգական և բարեկամ չու-

նիմ որ նրանց խնամատարութեանը յանձնէի: Այժմ նա 19 տարեկան է, իսկ ձեր Փաթման՝ դեռ 10. ուրեմն եթէ կ'ցանկանաք այդ երկու երախաների ապագայ երջանկութեանը, տուեք ձեր պատսի խօսքը ժամանակին մեր ցանկութիւնը և ուխտը կատարելու:

Իբատը շատ լաւ ճանաչելով առոյգ և գեղեցիկ նուրուն (Վահանին) առանց այլ ևս երկար մտածելու բռնեց Միքայէլի ձեռքը և աչքերը դէպի երկինք բարձրացնելով ասաց «թող Աստուծու զօրեղ աջը հովանի լինի մեր որդիների վրայ, թող նա իւր երկնալին բարձրութիւնից օրհնէ մեր բարի մտադրութիւնը և ուխտը միայն թէ սիրելի բարեկամ, այս բանը պիտի ծածուկ մնայ, մինչեւ մեր երախաները կ'հասունանան»:

Այն օրվանից Միքայէլը և Վահանն Իբատի մօտ բարեկամները դարձան, նրանց համար արգելք չ'կար Իբատի տունը գնալ գալու: Վահանն իւր վայելչակազմ գեղեցկութեամբ հանդարտաբրոյութեամբ՝ այնքան գրաւել էր Իբատին և նրա կնոջը, որ առանց նրան մէկ օր հացի չէին նստում: Վահանն էլ գիտէր իրենց կեղծ բարեկամութեան նպատակը:

Մէկ օր Իբատը Վահանի հետ վերադառնալով տուն, հրամայեց իր կնոջը շուտով ճաշ պատրաստել և յետով քանի մի տնալին յանձնարարութիւններ անելով, տուաւ նրան մի ծրար զգուշու-

թեամբ պահելու համար և յալտնեց որ ինքը քանի օրվայ ժամանակով հարկաւոր գործով պիտի գնայ Տ. գիւղը: ճաշը վերջանալուց յետով, Իբատը մնաք բարեւ ասելով կնոջը և Վահանին, ձիու գըլուխը շրջեց գէպի իւր գնալու ճանապարհը:

Վահանը հէնց այն ըոպէին կարող էր գողանալ ծրարը՝ միայն նա աւելի լու համարեց առաջօրէն յալտնել Ասլանին և Միքալէլին ու նըրըանց խորհուրդովը բան ըռնել: Միւս օրը Վահանն ալցելեց Իբատի տանը և քանի նրա կին Սանամը իսպնված էր տնային գործով, առաւ նամակը և հեռացաւ: Նամակն անմիջապէս ամենայն զգուշութեամբ Ասլանը բանալով կարդաց հետևեալ տողերը «ազնիւ քոյրիկ Հիւրիգատ-խանում, մեր անկեղծ բարեկամութեան կապը, և սկզբնապատճառն եղած է ձեր և իմ ամենասիրելի Աննան. ալդ աւելի ամրապնդելու համար, գուցէ եթէ Աստուած լաջողէ եկող գարնան Մեկկայից վերադառնալուց իմ ալը Ալլահուլի-խանի համաձայնութեամբ և ուղեկցութեամբ ալցելենք ձեզ, այն նպատակով որ իմ ալը լսելով ձեր Շիրխան որդու լաւ անունը, մտադիր է իւր գեղեցիկ դուստըն տալ նրան կնութեան: Ահա ես իբրև քոյլ օր առաջ նախապատրաստութեան համար կ'յայտնեմ, ընդունեցէք իմ ողջոյնը: Աննան երախտագէտ սրտով կ'ողջունէ ձեզ և կ'խնդրէ չ'մոռանալ իւր թշուառ զաւակը»: Նամակն օրինաւոր եղանակով կրկին

փակելով յանձնեցին Վահանին իւր տեղը գնելու:

Ասլանի խորհրդով Միքալէլն Աննալի անունով գրեց հետևեալ նամակը «սիրելի քոյրիկ, ես ձեր որդի Վահանի հետ Ասլանի առաջնորդութեամբ գաղտնի որոնում ենք ձեզ, սրտապինդ և խորհրդապահ եղէք մինչև բազդը կ'լաջողէ միմեանց տեսնել. իսկ եթէ նամակիս համար ձեզ հարցնելու լինեն, ասացէք Շուշանիցն է: Միքալէլ»:

Իբատը տուն վերադառնալուց մէկ օր յետոր, Միքալէլը ներկաւանալով իւր բարեկամին, տուաւնրան Աննալի անունով ծրարը, հաւատացնելով որ նամակաբերն երկար չ'կարողանալով սպասել, աղաչեց ինձ այս նամակն անձամբ ձեզ յանձնել, որ դուք ժամանակին յանձնէք Շահնիսալին: Իբատն առանց ոչինչ կասկածանքի ստացաւ նամակը, և դրաւ Հափիսի գրածի մօտ:

Ամառվայ սաստիկ տօթը խեղգելու չափ ծանը էր, քաղաքի նշանաւոր մարդիկ գնում էին ամարանոց, հետզհետէ գարշահոտութիւնները, անմաքրութիւնները, որոնք կարծես բնական են պարսկաստանի քաղաքներում, սկսեցին օդը թունաւորել. կարւանսարանների և գմբէթաւոր շուկաների անցուդարձի վրայ ճապաղած ընկած էին առաւելապէս մշակներ. վերջապէս հասաւ այն սարսափելի ըոպէն որ ամեն մարդ աշխատում էր փախչել այն անկոչ հիւրի-խօլերալի թունաւորված մանգաղի սուր ժանիքներից՝ որն անխնալ հնձում էր մարդկանց:

ԱՍԼԱՆԸ ՖԱԼՐԱՏ-ԲԵԿԻ ՄՕՏ

Ասլանն առանց ժամանակ կորցնելու դուրս
եկաւ քաղաքից Միքալէլի և Վահանի հետ, գնաց
քաղաքից քանի օր հեռաւորութեամբ Փ. գիւղը,
որն իւր գեղեցիկ անտառներով և շրջակայ կանա-
չազարդ լեռներից գահավիժող սառն և պարզ
ջրերով, մաքուր տոռջարար օդով առաջին տեղն
էր համարվում այդ շրջագալքում:

Երեկոյեան մեղմ քամիներից զովացած և ալրող
արեգակից տերեւախիտ ծառերի մէջ թագնված
թռչունները ճռվղում էին, կարծես սրանք էլ մի
որ և իցէ բնազդմամբ գիւղի մէջ աշտարակի գըլ-
ից Աստուծու փառաբանող մօլլալի և նամազա-
կատար ժողովրդի հետ օրհնում էին երախտագէտ
սրտով ամենահրաշալի տիեզերքի կառավարչին,
երբ Ասլանը նախկին հասարակ զգեստով իւր ըն-
կերներով վայր իջաւ մզկիթի փոքրիկ սրահում:

Միւս օրն առաւտեան արեգակի ոսկի ճա-
ռագալթները խաղում էին ամենաբարձր ծառերի
տերեւների վրայ, կազուտակ պայծառ երկինքը,
մաքուր և ջինջ օդը մի առանձին բերկրանք էին
պատճառում մարդուս. իսկ գիւղի արևմտեան և

հիւսիսալին լեռներից թափվող մաքուր սառնորակ
առուտակների ջրերն անհետանում էին հարաւից
դէպի հիւսիսարևելք հոսող մեծ, փրփրադէզ գե-
տի յորձանքներում:

Գիւղի հիւսիսարևմտեան կողմում սակաձև
ծառազարդ բլրակի վրայ կառուցած երկյարկանի
շինուածքից դուրս գալով մի վայելչակազմ երի-
տասարդ, փրփրերախ ձիի վրայ երկու ծառաներով,
բռնեց այն նեղ ճանապարհը, որը մզկիթի գոնով
անցնելով տանում էր դուրս: Դա գիւղի բէկն էր,
որը տեսնելով Ասլանին իւր ընկերներով, հարցըց՝
«Ի՞նչ մարդիք էք:

— Մենք օտարականներ ենք և կամենում ենք
եթէ կ'թոլլատրէք ձեր հովանաւորութեան տակ
մնալ ինչպէս ձեր հպատակներ, պատախանեց
Ասլանը խոնարհութեամբ գլուխ տալով: Բէկը լը-
սելով Ասլանի քաղաքավարի խօսքերը և նկատե-
լով նրա հսկայական գրաւիչ տիպը ասաց՝ «Ես
գնում եմ զբօսնելու, կարճ ժամանակից լետոյ
կարողէք գալ ինձ մօտ:

Բէկը վերադարձած և իւր վերնայարկի գեղե-
ցիկ սենեակների մէկի մէջ նստած դալեանը ձեռ-
քին, առանձին հրճվանքով նայում էր դէպի ծաղ-
կազարդ այգին, որի սալայտակ մաքուր առուտակի
արձաթափալ սառը ջուրը պտտելով ուղղաբերձ,
մշտադալար և զանազան պտուղներով բեռնաւոր-
փած ծառերի տակով, թափվում էր կանանցի բա-

կում վարդենիներով և երփներանգ ծաղկունքներով
շըջապատռած մարմարոնեալ լճակները, ուր լողա-
նում էին առաւօտ և երեկոյ բէկի կանալք:

Ասլանն իւր ընկերներով բէկի դրանիկների
մէկի թոլլտուութեամբ նստած նրա ամրոցանման
տան բակի մի անկիւնում, սպասում էր տան տի-
րոջ երեալուն: Բէկն իւր փոքրիկ որդու ձեռքից
բռնած՝ վալը իջնելով վերնալարկից, նկատեց ըն-
թերցողին յատնի օտարականներին:

— Հ՝ բկել էք, շատ բարի, ասացէք ՞ը-
տեղացի էք և բնչով կ'պարապվիք:

— Դ.-ի գիւղօրալքից, ես ծառալութեամբ.
իսկ ընկերներս դարբնութեամբ. պատասխանեց
Ասլանը:


— Դուք ձեր հայրենիքում ոչինչ չժւնիք:
— Մինչև անգամ մօտ ազգական պատաս-
խանեցին բէկին:

— Իսկ այս տղան ով է:
— Ալդ ծառալիդ մի հատիկ որդին է, որի
մալը մեռնելուց յետով, առնելով հետո թափա-
ռում եմ մեր օրականը աշխատելու համար, պա-
տասխանեց Քեարիմի անուան տակ ծածկուած
Միքալէլը:

— Ասլան, ուրեմն դու կարող ես ծառալել
իմ տանը, մինչև քո հաւատարմութիւնը և գոր-
ծնէութիւնը կ'տեսնեմ. իսկ դու Քեարիմ որ-
դուդ հետ կարող ես արհեստդ բանացնել իմ գիւղի

մէջ և ահա ձեր բնակութեան համար, գիւղի
հրապարակի վրայ իմ սեպական արհեստանոցը:
Ասլանը շնորհակալ սրտով անցաւ ծառաների շար-
քը. իսկ Միքայէլը (Քեարիմը) խորին երկրպագու-
թեամբ դուրս եկաւ բէկի ծառաների մէկի ա-
ռաջնորդութեամբ գնաց դէպի իւր նոր կացարանը:

Ասլանն իւր յատնի լաւ յատկութիւններով
և բնական քաջութիւնով գրաւեց բէկի յարգանքը
և նրա բոլոր հօտերին գլխաւոր կառավարիչ դար-
ձաւ. իսկ Միքայէլը բարեբաղդաբար միակ դար-
բինը լինելով այն շըջագայքում, իւր քաղցը վար-
վողութեամբ և հմուտ արհեստագիտութեամբ
աւելի և աւելի սկսեց ժողովրդականների և բէկի
յարգանքին արժանանալ:



ԾՊՏԵԱԼ ԴԱՐՎԻՇ

Աշունն իւր շըջանը կատարելու մօտ էր, դաշտերը տխուր և գունաթափ կերպարանք էին ստանում, կանաչազարդ անտառները, լեռները և մարգագետինները մեռելալին տալկնութեամբ էին ծածկվում. ծառերի վրայ մնացած տերևները ցառը քամու փշելուց թափվում էին, մթին ամառերի ահագին կոլտերը վէտ վէտ բարձրանալով փուփում էին անսահման կապուտ երկնակամարի տակ կարծես տխուր եղանակով կտնչող, դէպի օտար երկիր դիմող կոռունկներին արգելելու, մի բանով բոլոր արարածներն իրենց ցըտաշունչ և անախորժ հիւրը—ձմեռը ընդունելու կ'պատրաստվէին:

Ասլանն իւր կառավարութեան տակ եղած հօտերը յանձնելով հօտապետներին և խաշնարածներին պատուիրեց նրանց քշել և պահպանել նըրանց համար առանձին առանձին նշանակված տաք տեղերում և ինքը ճանապարհ ընկաւ Փահրատ-բէկին ներկայանալու: Ասլանն ամրոցի նախադռնով մտնելով տեսաւ նրան բակում մի դարվիշ, որն իւր արտաքին գեղեցիկ դէմքով և շարժումով զանազանվում էր այն դարվիշներից, որոնց

տղեղ դէմքի, կեղտոտ քըքըված հագուստի տակ ծածկուած է մի շահասէր և հարստահարիչ ոգի:

Դարվիշը փոխանակ մի որ և իցէ գագանի մորթու, կրում էր սպիտակ նուրբ մետաքսեալ շրջանակն ասեղնագործ վերաբկու. նրա գոյնզգոյն թելերով գեղեցիկ նախշագիր գլխարկի տակից փալլում էին սև սամի նման ալիքաւոր մազերը, ահարկու կացնի կամ փայտի տեղ՝ ունէր աջ ձեռքին փղոսկրից մի բարակ փայտ, որի մի ծալը ներկալացնում էր մի քնքուշ ձեռք իւր կիսաբաց բարակ մատներով. իսկ ձախից կախած հիանալի քանդակործութեամբ մի ջալլամի ձու:

Նրա հաճելի դրաւիչ դէմքը, հագագասփիւռ զմալլեցուցիչ ձայնը, իւր մատաղ հասակի անհամապատասխան ազդու և իմաստալի խօսքերը, որով հրաւիրում էր մարդկանց դէպի պարտաճանաչութիւն, սէր դէպի ընդհանուր մարդկութիւն, ուսում և արհեստագիտութիւն, բոլորովին գրաւած էին բէկին, որն իւր վերնայարկից խորին ուշադրութեամբ անշարժ նալում էր դէպի այդ նոր քարոզիչը:

Դարվիշը վերջացնելով խօսքերը, բարձրացաւ դէպի բէկը և տուաւ նրան մի ռեհանի ոստ, որի փոխարէն բացի առանձին վարձատրվելուց, արժանացաւ և բէկի երեկոյեան հրաւիրին: Դարվիշը հասնելով ամրոցի նախադռան և առանց նկատելու Ասլանին, դարձրաւ ուշը դէպի կանանոց հե-

տեեալ խօսքերով «Երեկոյեան էլ բաղդ կունենամ ալցելել ալս տեղին, բայց երանի թէ սրան մէջ դժնէի»... Ասլանը լսելով դարվիշի խորհրդաւոր հալերէն խօսքերը և նկատելով նրա աչքերից գըլլորվող կաթիլները, կալծակի արագութեամբ բարձրացաւ նախագուան վրալ շինուած փոքրիկ դիտանոցը, որտեղից հեշտութեամբ կարելի էր նկատել և լսել դարվիշի թէ շարժուածքը և թէ խօսքերը. բայց վերջինս առանց ալլ ևս ոչինչ ասելու, հանդարտ քայլերով առաջ գնաց գէպի գիւղը տանող ճանապարհը:

Ասլանը թէև բոլորովին ընկած մտատանջութեան ծովի ալիքների մէջ տարուբերվում էր, ալնուամենալնիւ՝ առանց յուսահատութեան հաստատապէս գիտէր որ շուտ ոտք պիտի դնէ ցամաքին և ալնուհետեւ պիտի անհետանան դարվիշի խորհուրդաւոր խօսքերի անյալտութիւնների մասին մի առ մի յալտնելով բէկին, քանի ժամից յետոյ գնաց գէպի Միքայէլը: Երկու բարեկամներն ուրախ ուրախ սեղմելով միմեանց կոշտացած ձեռք, հարկաւոր հարցուփորձեր կանէին: Միքայէլը պատմեց որ ինքը միշտ արժանացել է թէ բէկի և թէ ամբողջ գիւղացոց համակրանքին, Վահանը հեռուից նկատելով Ասլանին՝ արագացրաւ քայլերը և զրի կուժը դնելով դարբնոցի մի անկիւնում, մօտեցաւ նրան «մօրս և քրոջս համար լուր չ'կալ»:

Այս խօսքերը մի այնպիսի զգալի ներգործութիւն արին Ասլանի և Միքայէլի սրտերի վրայ, որ փոքր առաջ ունեցած ուրախութիւնը ստուերի պէս անցնելով, թողեց կրկին նրանց տխուր տրամադրութեան մէջ: Իսկ Ասլանը Վահանին սիրտ տալու համար, քանի մի յուսադրական խօսքեր ասելով, հեռացաւ գէպի ամրոց:


Գիշերուալ խորհուրդաւոր լոռութիւնը թագաւորում էր, ջինջ երկնքի վրալ փալլում էին անհամար աստղեր և գեղեցիկ լուսնեակը, տեղ տեղ յարդգողը նմանվում էր ալն ծովալին փրփրագէզ ակօսներին, որոնք առաջանում են չոգենաւների սրնթացութիւնից յետոյ, համարեած ամբողջ Փ. գիւղացիք ընկած էին հարկաւոր անգործնէութեան մէջ և Որփէսսի զօրացնող ձեռքը հանդարտ փակած էր նրանց աչքերը. գիւղի մէջ չէր երեսում ճրագի լուս և չէր լսվում ոչինչ՝ բացի գիւղի շրջագալքում ոռնող չաղալներին պատասխանող գամփոների ձայնից:

Փ. գիւղից կէս վերստ հեռաւորութեամբ բարձր բլրակի վրալ կառուցած ամրոցի մէջ փալլում էին ճրագներ, պատշգամբների վրալ անցուդարձ էին անում ծառաներ, պարսկական ճաշակի զանազան համեմունքներով պատրաստած կերակուրների անուշահոտութիւնը բուրում էր ամբողջ ամրոցի մէջ:

Բէկն՝ այդ վայելչակազմ երիտասարդը նստած

իւր քանի մի հասակակից բարեկամներով դարվիշի
հետ, երբեմն երբեմն ծխելով խօսում էին զանա-
զան առարկաների վրայ: Սեղանը ընտիր և անու-
շահոտ կերակուրների, ոգելից ըմպելիքների, զա-
նազան մրգերի ճոխութեամբ բէկի սովորութեան
համաձայն պատրաստ էր: Բէկն այն կրօնամոլ
պարսիկներից չէր, որոնք պիղծ են համարում այն
բոլորը, ինչ որ իրենց կրօնի հակառակ է, նա ա-
ռանց կրօնի խտրութեան մարդկութիւնը յարգող
տնձնաւորութիւններից մէկն էր, նա բաւականին
հմուտ էր իւր և արաբացոց լեզուին և կեանքի
շատ մասն իւր հօր կենդանութեան ժամանակ
անցրել էր տաճկաստան և աւզանստան: Նա թէ
և առ երես յարգում էր իւր ազգի հոգեորական-
ներին, միայն սրտանց ատում էր այդ փանատիստ
և խաւարալին տղիտութիւնով իրենց ազգի առաջ
դէպի ուրիշ լուսաւորեալ ազգութիւններ հաղոր-
դակցութիւնն արգելող սարսափելի խորութեամբ
խրամատներ և անդունդներ բանողներին:

Ուրախութեան կատարեալ աստիճանին էր
հասած բէկն իւր հիւրերով, սեղանը թէ և հա-
ւաքված, բայց գեռ ճերմակ ու կարմիր անուշա-
համ գինու շիշերը թագաւորում էին մէջ տեղ:
Դարվիշը բէկի խնդրանաց համաձայն երգում էր
երբեմն արաբական և երբեմն պարսկական բար-
բառով բարոյական և սիրահարական երգեր, որոնք
գիշերվալ լուսութեան մէջ իրենց մելոտեական եղա-



նակով գրաւում էին ոչ թէ միայն ներկայ լինող-ներին, այլ և կանանոցի բարձր գմբէթաւոր սե-նեակներից տկանջ դնող գեղեցիկ հոգիներին:

Ասլանն որ ամենայն ուշագրութեամբ լսում էր դարվիշի խօսքերը, նկատեց որ նա դուքս գալով սենեկից և քանի ըոսլէ դէպի կանանոցը նայելուց յետոյ, ինքն իրան ասաց «Ես կ'երգեմ իմ երգը նա եթէ այս տեղ լինի, անկարծիք կ'ճանաչէ ինձ և իմաց կ'տայ:

«Ա՛խ անհետանալուդ երկ տարին անցաւ
և տխուր սիրտն իմ չ'ուրախացաւ,
«Եւ պայծառ երկինք խաւար ինձ թուաւ:
«Թողած հալրենիք, թշուառ հալը և մալը,

պտտիմ անդադար ես աշխար օտար,
«Միայն թէ գտնեմ քեզ ով իմ հոգեակ,

փշալի հոգուս մխիթար միակ:

«Ես քեզ մոռանալ երբէք չեմ կարող
իմ սիրատոչոր սիրտը միշտ գերնդ.

«Եւ հողագնդի միայն մի ծայրին
միշտ ուղղահայեաց մագնիտ-սլաքին
ո՞ր սաստն արդեօք բռնանալ կարէ
ո՞ր նա հիւսիսայդ դէպի չ'պշնէ:

«Ա՛ի գուցէ և դու այս կանանոցում,
անհոգ, հըճուանքով և չես էլ ուզում,

«Մինչ լսել անգամ դերվիշիդ մըմունջ,
ո՞ր գիշեր ցերեկ քեզ է որոնում:

«Եթէ այս տեղ էք տուէք ինձ իմաց,
և շուտով կ'լինէք ինձնով ազատուած:

ԲԵԿՆ իւր բազմականներով թէ և ուշադրութեամբ լսում էր դարվիշի երգը և նկատում նըրա մեղուակն աչքերից նորաբոլս միրուքի վրայ ընկնող կաթիլները, միայն իրան անհասկանալի լինելուն համար դարձաւ դէպի դարվիշը «աղադարվիշ, ձեր երգը, որի նմանը չեմ լսած. իւր մելամաղձային եղանակով մինչ այն աստիճան սըրտակէզ է, որ արդարեւ իրաւունք ունիք արտասկելու, ախ թէ իմանալի դրա իմաստը»:

Այս մէկ դժբաղդ ուսանող երիտասարդի իւր պանդխտութեան մէջ մեռնելու ժամանակ դէպի իւր սիրուհին ասածն է, պատասխանեց դարվիշը:

Գիշերվայ շատ մասն անցել էր, աքաղաղները շարունակ կ'կանչէին, հիւրերը հեռանալով իրենց տեղերն՝ ընկած էին խոր քնի մէջ. իսկ Փահրատբէկը, ընկած էր իւր գեղեցկուհի Գիւլզատի մօտ, որի բամբակունման կուրծքի վրայ թէւ Սէրն ու Շնորքը կ'խաղալին, սակայն նրա տախտակի տակ սիրու կըակից ալրվում էր մի զգայուն և ազնիւ սիրտ, որ լսելով իւր դարվիշ-սիրականի խօսքերը թռչել էր ուզում դէպի նա: Այդ Մարիամն էր, այն Գիւլզատը, որի անհամեմատելի գեղեցկութեան համար մեծ գումարով գերութիւնից գնել էր բէկը:

Ասլանն իւր ննջարանի կից սենեակում լսելով դարվիշի գանդաղ քայլերի ձայնը և երբեմն երբեմն խորին հառաջանքները, առանց այլ ևս

ուշանալու մտաւ նրա մօտ և հայերէն ողջունելուց լետով, շարունակեց «ազնիւ պարն, գուք ևս ինձ նման անկարծիք ուրախ պիտի լինէք այս պանդխտութեան մէջ ձեզ հաւատակից և ցաւակից գտնելով, ես գիտեմ որ հայ էք և որոնում էք նրան, որն իշխելով սրտիդ վրայ ստիպել է ձեզ թողել ծնողներ, հալրենիք և մինչև անդամ մատնել ձեզ մահուան, միայն թէ գտնել իրեն. ուրեմն խնդրեմ չ'գաղել ինձանից այն, որի մասին իմ կարացածին չափ պատրաստ եմ օգնելու»:

Դարվիշը լսելով Ասլանի խօսքերը և չ'կասկածելով նրա քրիստոնէութեան վրայ, խոսավանվեց որ ինքը Ս. քաղաքացի հայ հարուստ վաճառականի որդի է և իւր նշանած օրիորդ Մարիամի պարսիկների ձեռքով անհետանալուն համար ծպտեալ եղանակով որոնում է նրան: Ասլանն էլ պատմեց որ ինքն իւր ընկերներով հենց մի այդպիսի կորուստ գտնելու համար թողած է հալրենիք: Նրանք վճռեցին միւս օրը ժողովիլ Միքայէկի մօտ խորհրդակցելու, և բաժանվեցին միմեանց հանդիստ քուն մաղթելով:

Մ. Ա. Ր Ի Ա. Մ Ի Գ Տ Ն Ո Ւ Ւ Լ Ը

Մութը փախել էր, և հեռու արևելքում
արշալոյսի աւետաբերը գիշերուայ քաղցը քնից
զօրացած գիւղացուն իւր ապրուսու հոգալու հա-
մար դէպի գործ կ'լորդորէր, բէկն իւր սիրաբոր-
քոք սև խոշոր աչքերը գաղած Մարիամի մարմա-
րոնեայ կուրծքի վրայ նարնջաչափ բարձրացած
երկու բլրակների մէջ, սիրալին բոլոր հրճուան-
քով անյագաբար շոշափում էր հաճոյքը, Ասլանը
դարվիշի հետ թողելով ամրոցը գնաց դէպի Մի-
քալէլը:

Մարիամն երեկոյեան լաւ ճանաչելով իւր
սիրելի Վաղարշի ձալնը, նրան զինքը յալտնելու
համար, կանչեց իւր ամենահաւատարիմ ներքնի
արար Աբտուլալին և ասաց, «դու գիտես ո՞ր մեր
կանանցի բոլոր խանումներն իրենց աւելորդ զար-
դերը ծախելով նոր հարկաւորներն են գնում,
ահա մի հատ մատանի տար ծախելու, միայն լաւ
իմացիր որ դա հասարակ բան չէ և արժէ Խթը
ման։ Եթէ որ և իցէ մարդ նշանակած արժէքովս
գնելու և հարցնելու լինի թէ այս ումն է, դու
միայն մատանիի վրայ քանդագործ երկու տառերը

ցոյց կ'տաս և լաւ նկատելով առնողի պատկերը,
առանց կրկին ինձ ներկայանալու չ'տաս»։

Դարվիշ-Վաղարշը և իւր երկու բաղդակից ըն-
կերները նստած դարբնոցին կպած փոքրիկ սենեկի
մէջ կ'խորհէին իրենց կորուստների համար, երբ
յանկարծ նրանց ականջին դիպաւ մի ձալն «այ լաւ
մատանի առնող»։ Վաղարշն իսկոյն ճանաչելով ի
նշան սիրոյ Մարիամին իւր տուած մատանին,
չ'կարողացաւ արցունքը պահէլ. միայն Աբտուլա-
լին կասկած չ'պատճառելու համար, ուժն իրեն
հաւաքելով, հարցրաւ. «այս մատանին ումն է
և քանի արժէ»։ Աբտուլը ցոյց տալով մատանու
օղակի վրայ երկու խորհրդաւոր տառերը, նշանա-
կած արժէքն ասաց։

Վաղարշն իւր սրտի ամենամօտիկ առարկալին
կանանցում լինելու և նրա իւր երգը լսելուն
համար կասկածելու տեղիք չունէր. նա իսկոյն
նշանակած արժէքը կ'վճարէր, եթէ Աբտուլը
չ'մտաբերէր իւր խանումի խօսքը, «առանց նորէն
ինձ հարցնելու չ'տաս»։

Աբտուլը ներկայանալով Մարիամին յայտնեց
որ մատանին նշանակած արժէքով ուզում է մի
գեղեցկադէմ երիտասարդ դարվիշ, որի աջ թշի
վրայ կալ և մի փոքրիկ խալ։

— Եատ լաւ, գնա փողը ստաց։

Աբտուլը ստանալով մի փոքր ասեղնագործ
քսակի մէջ մատանու արժէքը, հեռացաւ դէպի
իւր տիկինը։

Մարիամը ճանաչեց իւր սիրական Վաղարշի
համար արած քսակը, որի մէջ փողի հետ գտաւ
և մատանին:

Վաղարշը և Մարիամն առանց հոգեկան
հանդարտութեան սպասում էին այն ցանկալի ըս-
պէին, որը կ'միացնէր երկու սիրահար սրտերը
միմեանց հետ. իսկ Ասլանը մի այնպիսի պատեհ
ժամանակի, որ կարողանար առանց արգելքի քան-
դել այն վանդականման ամրոցի պատերը, որի
մէջ փակված էր իրեւ սոխակ գեղեցիկ Մարիամը:

Ասլանն աչքի տուած ունենալով Փահրատ-բէ-
կի մօտ ժամանակում քանի շաբաթ միջոցաւ իւր
կալուածներին և հօտերին ալցելելու պատճառով
քացակալիլը, Վաղարշին խորհուրդ տուաւ օր ա-
ռաջ ներկալանալ բէկին իւր հրաժարական ողջու-
նը տալու և մի որ և իցէ եղանակով Մարիամին
իւր պատրաստութեան համար քացակալիլը յայտ-
նելու:

Վաղարշ - դարվիշը գրաւիչ և միանգամայն
զմայլեցուցիչ եղանակով իւր շնորհակալիքը բէկին
ցոյց տալով, վերջին հրաժարական ողջունը կ'մա-
տուցանէր, նրա բազմալազադ ելւէջներով ձայնը
գրաւել էր բէկի ամբողջ շինուածքի մէջ եղողնե-
րին, իսկ նրա կանանցի վերնայարկի փոքրիկ լու-
սամուտների մէկի առաջ նստած մէկը խոր տըի-
րութեան մէջ, լսում էր Վաղարշի հետեւալ
խօսքերը:

«Ես ուժ օրվայ ժամանակով հեռանում եմ
սիրելի,

«Ազատելու ձեզ միջոցներ պատրաստելու
իմ թռչնակ.

«Դուք ամեն ժամ, ովք իմ հոգեակ,
պիտի լինէք պատրաստի,

«Որ իններորդ գիշերումը ես կ'մտնեմ
ձեր վանդակի:

Նա Մարիամն էր, որին Վաղարշն իւր սը-
րատեսութեամբ նկատել էր վաղուց:

Վաղարշը վարձատրվելով բէկից վերադարձաւ
դէպի Ասլանը ու Միքայէլը և նրանց խորհրդով
ճանապարհ ընկաւ Բ. քաղաքը: Նա գիւղից գուրս
գալով Ասլանի հետ անհետացաւ դէպի մթին ան-
տառի խորքը, ուր Ասլանը մկրատելով Վաղարշի
երկար մազերը և փոխելով նրան հագուստը ասաց.
«այժմ ձեզ ոչ ոք չէ կարող ճանաչել, դուք նը-
մանվում էք մեծ մարդարէի ցեղին և ահա անձդ
պաշտպանելու համար ալս դաշոյնը և ատրճանա-
կը, միայն կաշխատէք ութերորդ օրն երեկոյեան
այս տեղ լինել, ուր և ես կ'սպասեմ»:

Ասլանն առնելով Վաղարշի հագուստը վերա-
դարձաւ դէպի Միքայէլը, իսկ Վաղարշն ողջունե-
լով Ասլանին, բռնեց Բ. քաղաք տանող ճանա-
պարհը:

Վաղարշի բացակալութեան 5-րդ օրն էր,
Ասլանը կեղծ հիւանդութեամբ պառկած էր, բէկն

էլ աչքի առաջ ունենալով ձմեռուայ մօտենալը՝
պարտաւորված էր օր առաջ իւր սովորութեան
համաձայն իւր կալուածներին և հօտերին գլուխ
քաշելու։ Նա երկար չ'կարողանալով սպասել Աս-
լանի առողջութեանը, ասաց նրան. «Ես գնում եմ
Ա. գիւղը, դուք ձեզ լաւ զգալուց, իսկոյն կ'ճա-
նապարհվիք դէպի ինձ» Ասլանը բարձրացնելով
գլուխը 'ի նշան հնազանդութեան, կրկին ընկաւ
բարձի վրայ։

Բէկը գնալուց երկու օր լետով, Ասլանը թո-
ղելով իւր մեքենական հիւանդութիւնը, ձայն էր
ձգել բէկի մօտ գնալու և երրորդ օրն առաւօ-
տեան շատ շուտ ամրոցի մէջ եղած վառօդ ու
գնդակ վեր առած բոլոր ծառաներին մնաք բարե-
ասաց և ինքն անհետացաւ խոր անտառի մէջ։ Մի-
քայէլն էլ գաղտնիքն առանց Վահանին լայտնե-
լու, Աննալի մասին լուր իմանալու և քաղաք
ուղարկած գործիքները վաճառելու պատրուակով
ինքն էլ հեռացաւ Ասլանի նշան արած տեղը։

ՄԱՐԻԱՄԻ ԱԶԱՏՈՒՒԼԸ

Մարիամը ցերեկվայ լոյսը մեծ ծանրութիւն
համարելով, անհամբեր սպասում էր մութ գի-
շերվան այն ցանկալի ըոպէին, երբ պիտի պա-
տերազմէին մահը և կեանքը, աջողութիւնը և
ձախորդութիւնը, նա վճռել էր մեռնել ուրախու-
թեամբ իւր սիրելու գրկում, քան ապրել բէկի
շքեղ կանանցում։


Արեգակը վաղուց էր իր հրաժարական ողջոյ-
նը տուել երկրագնդին, սև սև ամպերի ահագին
կոյտերի ստուար թերթերը ծածկել էին կա-
պուտ երկնքի և նրա լուսաւորների գէմքը։ Մե-
ռելութիւնը տիրում էր գիւղի և ամրոցի մէջ։
Մարիամն իւր սենեկի մէջ, Ասլանը Միքայէլի հետ
անտառի խորքում՝ անհանգիստ սպասում էին Վա-
ղարշին և ահա մէկը ներկայացաւ իւր հաւատա-
րիմներին, ալդ Վաղարշն էր ըոլորովին զինու-
ած։ Մի փոքր հանգստանալուց լետով, Ասլանը
դարձրեց խօսքը դէպի Վաղարշը, «ուշանալն աւե-
լորդ է, ահա աքաղաղները կ'կանչեն, Միքայէլը
մեզ ալս տեղ ձիաների մօտ կսպասէ. իսկ մենք
բաւական ենք մեր գործը կատարելու։»

Քանի ժամից յետոյ Ասլանը և Վաղարշը
գտնվում էին կանանցի պարտիզի քարձր պարսպի
տակ: Կարծես բնութիւնն էլ ուզում էր աջակցել
ալդ ազատութեան գործին, սաստիկ քամիներն
այնպիսի սարսափելի ձայներ էին հանում, որ ե-
թէ ամրոցի պատերը քանդէին՝ ոչ ոք չէր լսիլ:
Ասլանը և Վաղարշը Միքայէլի շինած ելեջներով
քարձրացան պարսպի վրայ և նկատելով կանանցի
մէկ պատուհանում ճրագի աղօտ լուս, հանդարտ
քայլերով գնացին գէպի գմբէթաւոր շինուածքը:

Ճրագը Մարիամի սենեակումն էր, նրանք
ուղղակի մօտեցան սենեկի կիսաբաց դրան, որի
առաջ քնած էր նրա Աբտուլ ծառան: Ասլանը
կանդնելով Աբտուլի գլխի վրայ, Վաղարշին հրա-
ւիրեց ներս պատուիրելով չ'ուշանալ:

Երկու սիրահարները կայծակի արագութեամբ
փաթաթուեցան միմեանց, նրանք ընկղմուած զգաց-
մունքների թանձր ալիքների մէջ, բոլորովին համ-
րացած ուրախութեան արցունքով կ'թըջէին
միմեանց:

Վաղարշը Մարիամին և նրա ոսկեայ թան-
գագին զարդերը մի ձեռն հագուստի հետ տոնե-
լով գուրս ելաւ բանտանման կանանցից և վայր
իջնելով պարսպից Ասլանի հետ անհետացաւ մը-
թութեան մէջ: Նրանք Մարիամի հագուստը թո-
ղեցին գետի ափում և տուանց ժամանակ կորցնելու
հեռանալով անտառից մի ամբողջ օրվայ ճանա-
պարով, իջևանեցին մի ձորակի մէջ:



Գիշերվայ մէջ Բ. քաղաքից մէկ փարսախ հեռաւորութեամբ Ասլանը քաշելով իւր ձիու սանձն ասաց «Դուք ալժմ սիրելի եղբայրք կարող էք աներկիւղ գնալ ուղղակի իբատի տունը մինչեւ ձեզ համար առանձին տեղ կ'գտնէք, միայն թողնում եմ ձեզ այն հնարները և հարկաւոր զգուշութիւնները, որոնք պիտի գործ դնէք մեզ ամեն որոգայթներից և կասկածանքից ազատ պահելու»: Ի վերջու նա իւր հրաժարականը տալով Միքայէլին, Վաղարշին և Մարիամին անհետացաւ խոր մթութեան մէջ գէպի Փահրատ-բէկը:

Իբատը 5 ամիս էր որ Միքայէլին չէր տեսել, նա ամեն ուրախութեամբ ընդունեց իւր բարեկամին և նոր հիւրերին: Վաղարշը և Մարիամը մի առանձին սենեկում հանգստանում էին. իսկ Միքայէլն Իբատի և նրա կնոջ Սանամի հետ նըստած պատմում էր թէ ինչպէս խօլերալի ժամանակ անակնկալ փախչելով գէպի Փ. գիւղը, ընդունելութիւն գտան այն տեղ, ուր և լինում է Նուրին (Վահանը) թէ՝ ինչպէս բաժանվեցին իրենց Ասլան աղայից և վերջապէս թէ ինչպէս ինքը Միքայէլն երկու օր առաջ ճանապարհին դիսուածով պատահում է իւր աներ որդի Սէլիս-Սմայիլին և նրա կին Բէկզատին:

— Միթէ Սէլիսը ձեր աներ որդին է և Բէկզատը նրա կինը, ուրեմն դրանք կ'լինեն իմ պատուական հիւրերը որքան այս տեղ են ասաց

իբատը: Քանի օրից յետոյ Սէլիաը Միքալէլի խոր-
հրդով հաւաքուել էր իբատի հարևանի տունը,
Բէկատն Իբատի կին Սանամի օգնութեամբ հո-
գում էր իւր տան տնտեսական բոչոր պակասու-
թիւնները: Սէլիտի դիմակի տակ ծածկուած Վա-
ղարշն իւր գրաւիչ դէմքով և բարձր գիտու-
թեամբ հետզհետէ սկսել էր ժողովրդականների
լարդանքին արժանանալ:

Միքալէլն աչքի առաջ ունենալով Վաղարշին
իւր բնական արժանաւոր ձիբքերի շնորհիւ բարձր
դասի մարդկանց հետ բարեկամատկան յարաբերու-
թիւնների մէջ մտնելը և Վահանի միայնակութիւ-
նը մէկ օր իւր Իբատին հետ ունեցած կեղծ բա-
րեկամութեան պատճառը, առաջիկայ գարնան
սկզբում կատարելի նպատակները յալտնելով նը-
րան, ճանապարհ ընկաւ դէպի Փ. գիւղը և
խնդրեց Աննալի համար գաղտնի տեղեկութիւններ
իմանալ:

Մարիամի (Գիւղատ) անհետանալուն լուրը
տարածուել էր ամեն տեղ, բէկը չ'գիտէր դէպի
որ կողմ գնալ, նրա տիսրութեանը չափ չ'կար, նա-
աւելի ուրախ կ'լինէր իւր ամբողջ կանալք մեռ-
նէին, քան Մարիամն անհետանար, իսկ ընդհա-
կառակը բոլոր կանանցն ուրախ էր Մարիամին՝
ալդ բէկին բոլորովին գերի անող և իրանց նրա
մօտ ստուեր գարձնող հրեշտակի կորստեան վրայ:
Քանի որ բէկը խորին տիսրութեան մէջ կ'սպասէր

Մարիամին որոնողների վերադարձին, գիւղական-
ներից մէկը գտնելով գետի ափում կանացի զգեստը
ներկալացրաւ Փահրատ-բէկին, որն այլ ևս անտե-
ղի համարելով զանազան մարդկանց վրայ ունեցած
կասկածները, դադարեց Մարիամին որոնելուց:
Ասլանն էլ մեքենական սրտացաւութեամբ հան-
դերձ, աշխատում էր բէկին համոզելու որ Մա-
րիամն անպատճառ մի որ և իցէ հանգամանքից
ստիպուած՝ զինքը խեղդած է այս ահագին գետում:

Ճեռոն իւր սպիտակ սաւանը փռել էր եր-
կը վրայ, Փ. գիւղն իւր շրջագայքով ծածկուած
էր ձիւնի ահագին կոլտերով, ծառերը փոխանակ
կանաչ տերեններով, բեռնաւորված էին սառցի լու-
լաններով, որոնք արեգակի ճառագայթներից աւելի
աղտմանդի փալլ էին տալիս, գարնանալին թըռ-
չունների զմալեցուցիչ դալլալիկների փոխանակ,
լսվում էր տգուաւնների և կաշաղակների կռուն-
չիւնը, որոնք օգի մէջ պտտում էին գիւղի շուրջը
կերակուր գտնելու: Երբեմն երբեմն ծերունինե-
րը ժամանակ անցուցաննելու համար, հաւաք-
վելով տաք գոմերի առանձին բաժանմունքով պա-
տրաստված սաքունների մէջ, երանում էին իրենց
անցեալը. իսկ երիտասարդներն առանց մի որ և
իցէ առտնին գործով պարապվելու, որից զուրկ է
առհասարակ գիւղացի դասը, անտարբեր պատ-
մում էին իրենց լաւ թէ վատ կողմերը: Աշխա-
տասէր կինը նստած ոստանի տակ ջերմեռանդ

սրտով պատրաստում էր իւր տղամարդի և երախաների հագուստը, մէկը ճախարակին տակ առանց անհագիստ անելու իւր գոգում մռմռալով նիբհող կատուին՝ երգելով կ'մանէր, միւսը գոցում էր. իսկ մի ուրիշը պարապվում էր տնային այլ գործերով:

Ասլանը, Միքայէլը և Վահանը բոլորված կրակի շուրջը կարգում էին Վաղարշից ստացած նամակը ռձմեռվայ սաստկութիւնը կտրելով գիւղացուց դէպի քաղաք ունեցած երթևեկութիւնը, ահա շատ ժամանակ է միմեանցից նամակ չունենք, չ'զիտեմ հետախուզութիւնը շարունակվում է թէ ոչ. սպասում եմ ձեր կարգադրութեանը: Աննայի վերաբերեալ ոչինչ չ'կայ, ես տեղիս նշանաւոր հոգեսորականների թվում կ'գտնուիմ. ընդունեցէք ողջոյնո»: Ասլանը և Միքայէլը միամտացնելով Վաղարշին, անելի կարգադրութիւնները ժողեցին գարնան:

Գարնան առաջի ամիսն էր, կենդանութեան ոգին իշխում էր բնութեան վրայ, երկերը մի կողմը ձգած սառնացուցիչ սպիտակ վերարկուն, հագել էր գոյնզգոյն ծաղկունքներով զարդարված կանաչը: Ասլանը և Միքայէլն անպատճառ վճռած էին գնալ դէպի Աննան: Վաղարշն անհամբեր սպասում էր Ասլանի նամակին, որովհետեւ նա աւելի յարմար էր համարում իւր երախան ճանապարհորդութիւնը կատարել նախ քան

իւր սիրելի Մարիամի մալրական վսեմ անուան արժանանալը:

Մէկ օր Միքայէլն Ասլանի խորհրդով 'ի նշան շնորհակալութեան ընծալեց Փահրատ-բէկին մի ընտիր թուր, և յայտնեց մի ամենահարկաւոր գործով իւր հայրենիք վերադառնալու դիտաւորութիւնը: Բէկը սկզբում աշխատեց նրա մտագրութիւնը փոխել, գլխաւորապէս նրա համար՝ որ գարենութեան արհեստն իւր գիւղի մէջ ծաղկի և այն թերուս աշակերտները կատարելագործվին. բայց տեսնելով Միքայէլի հաստատամտութիւնն արձակեց նրան, նորէն վերադառնալութիւնն առնելով: Միքայէլը և Վահանն իրենց հրաժարական ողջոյնը Ասլանին և միւս ծանօթներին տալով, ուղղեսորվեցին դէպի Իբատի տունը:

Քանի օրից յետոյ Միքայէլը յայտնեց Վաղարշին, որ պէտք է շուտով ճանապարհվել դէպի Ա. քաղաք, միայն քանի որ առանց Ասլանին չեն կարող, ուստի նրան Փահրատ-բէկը հեշտութեամբ կարող, թողելու համար հարկաւոր է մի հնար գըտքաց թողելու համար հարկաւոր գըտքաց Փահրատ-բէկին հետեւեալ նել: Վաղարշը գըտքաց Փահրատ-բէկին հետեւեալ կեղծ նամակը «Ո. քաղաքից ստացած նամակիս համաձայն կ'յալտնեմ ձեզ, որ մէկ հարուստ մարդ մեռնելով անժառանգ, բոլոր կարողութիւնը կըտակած է իւր ազգական Ասլանին (լիշելով և աղանունը) որին և որոնում ենք: Ես հաստատ

աղքիւրից իմանալով որ յիշեալ Ասլանը լինում է
ձեզ մօտ, ուստի հարկաւոր կ'համարիմ որ շուտով
զբկէք նրան։ Ի վերջով Վաղարշն իւր կեղծ (Սէլ-
իտ) անունը ստորագրելով կնքեց նամակը և մէկ
հաւատարիմ մարդով զբկեց Փահրատ-բէկին։

Փահրատ-բէկը ստանալով այդ հոչակաւոր
մարդու նամակը թէ և ցաւում էր Ասլանի նման
քաջ և պաշտօնը հաւատարմութեամբ կատարող
ծառայից զբկվելուն վրայ. բայց աչքի առաջ ու-
նենալով այն հարստութիւնը, որով պիտի բաղդա-
ւորվէր Ասլանը, արձակեց նրան պարզեաթաշխու-
թեամբ։

Ասլանը Միքայէլից ստացած առանձին նա-
մակի համաձայն գիտէր որ տեղ պիտի սպասէր,
նա Բ. քաղաքից քանի փարսախ հեռաւորու-
թեամբ մի գիւղից նամակով յալտնեց Միքայէլին
որ ինքը սպասում է նշանակեալ գիւղում։

ՎԱՂԱՐՇԻ ԵՒ ՄԱՐԻԱՄԻ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ
ՎԵՐԱԴԱՐՁԸ

Մի պայծառ և գեղեցիկ օր Բ. քաղաքի գըլ-
խաւոր մզկիթի հրապարակի վրայ, որի մօտ բնակ-
վում էր ընթերցողին յալտնի Վաղարշը, ասեղ
ձգելու տեղ չ'կար. քաղաքի բոլոր դասակարգի
մարդիկ խուռն բազմութեամբ հաւաքված էին
իրենց սիրելի նորահոչակ մարգարէի զաւակին
ճանապարհելու, նրա ազգու, իմաստալի խօսքերը
լսելու և օրհնութիւնը ստանալու։ Հարիւրաւոր
կանալք բոլորված Մարիամի (Բէկզատի) շուրջը
բարի ճանապարհ կ'մաղմէին։

Միքայէլն իր խնամի իբատին մի կողմ քա-
շած, խնդրում էր Ալլահուլի-խանը վերադառ-
նալուց աշխատէ նուրուն (Վահանի) համար նրա
տան մէջ մի ծառայական պաշտօն գտնել և
խկոյն Սէլիտի անունով Ա. քաղաք իրան նամակ
գըել։

Վաղարշը Մարիամին Միքայէլի և Վահանի
հետ ճանապարհ ձգելով, դուրս եկաւ տանից մի
քանի նշանաւոր մօլլաների հետ և իւր խրատա-
կան, իմաստալի ճառը վերջացնելուց յետով, քա-
կան,

ղաքացիների կողմից պատրաստած հեծելախմբով
հեռացաւ քաղաքից: Հազարաւոր բերաներ օրհ-
նում էին այդ իմաստուն քարոզչի կեանքը, աղ-
քատները, որոնք բռնած էին նրա անցնելու ճա-
նապարհի երկու կողմը, ապշած նայում էին այդ
առատաձեռն և աղքատասէր հոգեորականի վրայ
և չէին դադարում նրա համար բարեմաղթու-
թիւններ անելուց:

Երեկոյեան Վաղարշը մտաւ գիւղը, ուր և
լինում էր Ասլանը, և առաւօտեան յետ գարձնե-
լով իրան առաջնորդող ձիաւորներին, ինքն Ասլանի
Միքայէլի և Վահանի հետ ճանապարհ ընկաւ
դէպի Ա. քաղաք: Երկու շաբթից յետոյ մեր ճա-
նապարհորդները մտան Ա. քաղաք և իջևանեցին
մի հարուստ վաճառականի տան:

Մէկ օր Վաղարշը կանչելով իւր մօտ Ասլա-
նին և Միքայէլին ասաց «բարեկամներ, դուք տես-
նում էք որ հետզհետէ Մարիամը ծանրանում է
և նրան ծնանելու օրերը մօտենում են. եթէ
մենք այստեղ նրան պահելու լինենք, անշուշտ
մեզ պիտի արգելք լինի մեր մտադրութիւնը կա-
տարելու: Գուցէ դէպէրն ալնպէս կ'փոխվին, որ
կ'հարկաւորվի մեզ փախուստ, այն ժամանակ ի՞նչ-
պէս պէտքէ անել, չէ որ Մարիամը և Երեխան
արգելք կ'լինեն, ուրեմն ես լաւ եմ համարում
քանի տարվայ լաւ և Մարիամի թեթև ժամա-
նակն է գնալ դէպի իմ հայրենիք, որ տեղ նրան

թողելուց յետոյ, էլի շուտով կ'վերադառնամ դէ-
պի ձեզ իմ պարտքը կատարելու և երախտագի-
տութիւնս ցոլց տալու: Ասլանը և Միքայէլը մի
փոքր մտածելուց յետոյ, ընդունեցին Վաղարշի
առաջարկութիւնը:

Ալլահզուլի-խանի վերադարձի համար տեղե-
կութիւններ իմանալու և Իբատից սպասելի նա-
մակները ստանալու համար, Միքայէլը մնաց Ա.
քաղաքում. իսկ Վաղարշը Ասլանի, Մարիամի և
Վահանի հետ ճանապարհ ընկաւ դէպի հայրենիք:

Ա.ՍԼ.Ա.ՆԻ ԲԱՆՏՈՐԿՈՒԻԼԸ ԵՒ ԱԶԱՏՈՒԻԼԸ

Մօտ երկու ամիսանցել էր, Միքայէլն ոչինչ
լուր չունէր ոչ իբատից ոչ Ասլանից և ոչ Վա-
հանից, մէկ օր քանի որ Միքայէլը տիսուր կ'մը-
տածէր, այն վաճառականի ծառան, որի տան-
վաղարշն իջևանած էր, յանձնեց Միքայէլին մի
նամակ: Նամակը իբատիցն էր, նա յալտնելով
Ալլահզուլի-խանի վերադարձը, կ'խնդրէր խոկոն
Նուրուն զրկել նրա մօտ: Միքայէլը մնացել էր
շուարած, չ'գիտէր ինչ անէր, միայնակ ոչինչ չէր
կարող գործել. նա Վահանի և Ասլանի ուշանալու
պատճառով խոր տիսրութեան մէջ, գնաց դէպի
քաղաքի գուռը եկող գնացողներից տեղեկութիւն
իմանալու. բայց քարացած մնաց՝ երբ Վահանին
տեսաւ մի քանի անծանօթների հետ:

Վահանը Միքայէլի հետ վերադառնալով տուն,
պատմեց թէ ինչպէս Պ. քաղաքից Վաղարշն իւր
հայրենակիցների հետ ճանապարհ ձգելով և Աս-
լանի հետ դէպի ինքը Միքայէլը վերադառնալու
ժամանակ, ճանապարհին Բ. գիւղաքաղաքի մօտ
երկու մարդի ձեռքի տեսին Ասլանի արար ձին:
Ասլանն ասում էր ձին իմս է, նրանք պնդում

էին որ իրենց իշխանի մատակներից է ծնուած
և հէնց իշխանի սիրելի ձին է, վերջապէս կուիւր
սաստկացաւ, ծառաներից մէկն ընկաւ Ասլանի սը-
րից. իսկ միւսը վիրաւորված փախաւ դէպի գիւ-
ղը: Մենք բաւականին տարածութիւն հեռացել
էինք, Ասլանը հագնելով իւր իշխանական հա-
գուստը գարձաւ դէպի ինձ, Վահան, դուք նկա-
տում էք այն թանձր մառախուղի նման դէպի
երկինք բարձրացող փոշին, կ'նշանակէ որ մեր ետև-
ից մարդիկ են դալիս. միայն սիրելի՛, միայնակու-
թեանս և ձեր անմեղ կեանքը վտանգի չ'ենթար-
կելու համար չ'պիտի կրվիմ. ինձ անկարծիք պիտի
բռնեն, միայն ձեզ կ'ազատեմ: Դուք շուտով
կ'հասնէք և կ'պատմէք Միքայէլին, եթէ նա սի-
րում է ինձ, թող հասնէ շուտով կեանքս ազա-
տելու, որից և կախված է մօրդ և քրոջդ ազա-
տութիւնը: Այս խօսքերն արտաստնելուց, նրա
աչքերում ցոլացին արտասուքի կաթիլներ և այն
երկաթեալ մարդու ձայնը բոլորովին խեղդուեց:

Արդարեւ կարճ ժամանակից յետով պաշարեցին
մեզ մի խումբ ձիւաւորներ, Ասլանն առանց ընդ-
դիմութեան անձնատուր եղաւ, միայն նրա վե-
հանձնական խօսքերը, իշխանական հագուստը և
մոքական հայեացքը մի այնպիսի ազդեցութիւն
ունեցան խմբի բարկացած սրտերի վրայ, որ ա-
ռանց մի վիրաւորական խօսք անգամ տսելու, զի-
նաթափ արին և տարին դէպի գիւղը: Ես ողբում

էր, բայց նա սիրու տալով ինձ քաջալերում էր և հաւատացնում որ իմ անմեղութիւնը ինձ պիտի ազատէ: Վերջապէս հասանք գիւղի իշխանի մօտ, որը մի բարձրահասակ տարիքն առած մարդ էր: Ասլանին առանձին ներկալացրին նրան, չ'գիտեմ ինչ էր ասած Ասլանը՝ որ մէկ ժամից յետոյ, իշխանը կանչելով ինձ ասաց. «զաւակս, դուք ազատ էք և իմ ծառաներս կ'տանեն ձեզ ուր որ գնալու էք. միայն ձեր առաջնորդը, որին յանձընված էիք, կ'մնայ իմ խոնաւ բանտի մէջ՝ մինչև մահը վերջ կ'գնէ նրա անպիտան կեանքին»: Յետոյ տեսայ ինչպէս Ասլանը շղթայակապ տարին դէպի գիւղից ոչ այնքան հեռու մի քարափի վրայ կառուցած ամրոցը, նա իւր վերջին մտայով հայցուածքով որ ձգեց ինձ վրայ, կարծես կրկնում էր այն խօսքելը, որը արտասուալից աչքերով ասել էր ճանապարհին:

Միքայէլը խորին յուսահատութեան մէջ չ'գիտէր դէպի Աննան գնայ, թէ դէպի Ասլանը: Կարճ լոռութիւնից յետոյ, խօսքը դարձնելով Վահանին ասաց. սիրելի, դժբաղդութեան մէջ ընկած մեր ընկերին թողել հեռանալ մեծ ասլերախտութիւն է: Մենք ամեն կերպ պիտի աշխատենք առանց ժամանակ կորցնելու նրան օգնել: Նա իր ակամալից և բռնութեամբ դէպի մեզ արած վատութեան համար, տուն, ընտանիք թողած եկել է մեզ բարերարելու և օգնելու: Այժմ նա

բացի նեղութիւներ կրելուց՝ կեանքն էլ վտանգի է տուած. մենք հակառակ արդարութեան չպիտի կտրենք երախտագիտութեան շղթան. այլ պիտի գնանք ազատենք նրան, որից կախուած է և մեր սիրելիների ազատութիւնը: Հաւատացած եմ որ Աստուած մեզ օգնելու է: Միւս օրն առաւօտեան շատ շուտ առանց ժամանակ կորցնելու, հարկաւոր գործիքներ և զէնքեր պատրաստելով Վահանի հետ աղքատի հագուստով ճանապարհ ընկաւ դէպի Բ. գիւղը և քանի օրից յետոյ, իջևանեց յիշեալ գիւղի անկիւնում մի կիսաւէր տան մէջ:


Ցերեկները Միքայէլը մէքենաբար կազալով մախաղը Վահանի շալակը տուած մուրսցկանութիւն կանէին. իսկ գիշերները պտտելով ամրոցի շուրջը մի որ և իցէ մուտք կ'որոնէին: Մօտ երկու շարթվայ մէջ Միքայէլը հազիւ կարողացաւ ստուգապէս իմանալ որ գիշերները հսկում են բանտի վրայ երբեմն մի և երբեմն երկու հոգի:

Գիշեր էր, կարծես նոյն իսկ երկինքը Միքայէլին կաջակցէր, շերտանման լուսնեակը և անհամար աստղերը ծածկուած էին մոխրագոյն ամպերի լայնատարած քօղի տակ, բնութեան խորին լոռութիւնը խանգարում էին երբեմն երբեմն բուերի ձալնը, Միքայէլը և Վահանը պտտելով ամրոցի պարսպի շուրջը, մի յարմար տեղ կ'որոնէին ելեէջը դնելու: Բերդի արևմտեան կողմից Միքայէլը բարձրացաւ մինչև ելեէջի ամենավերին ասեկել է մեզ բարերարելու:

տիճանը և նկատելով պարսպի բարձրութիւնը մի
պարանի երկու ծալրից կապած երկաթեալ ծանր
գնդակները ձգեց պարսպի միւս կողմը և նրա մի-
ջոցով բարձրացաւ մինչեւ գլուխը. Վահանն էլ
հետեւեց նրան:

Կէս ժամից յետոյ նրանք գտնվում էին
բանտի մէջ, որտեղ կատարեալ թագաւորում էր
մեռելութիւնը: Միքայելը և Վահանը մի ձեռնե-
րումը սուր՝ իսկ միւսում ատրճանակ՝ հասին այն
սրահին, ուր քնած էր բանտապահ ծառան, նրա
զէնքերը կամաց մի կողմը գնելով, զարթնեցրին
նրան. նա ոչինչ չէր կարող անել, եթէ ոչ՝ կա-
մալ ակամայ կատարել իրեն անծանօթների հրա-
մանը: Ծառան բացաւ Ասլանի խոնաւ սենեկի
դուռը, նրան ստները Միքայէլի սուր խարտոցնե-
րի շնորհիւ ազատուեցին ծանր շղթայակրութիւ-
նից: Նրանք բանտապահ ծառալից մեծ դրան
բանալին ստանալուց և նրան Ասլանի խոնաւ սե-
նեկի մէջ բանտարկելուց յետոյ, իսկոյն հեռացան:
Միքայէլը և Վահանն իրենց կասկածի տակ չձգե-
լու համար, Ասլանին ճանապարհելով դէպի Ա.
քաղաք, իրանք վերագարձան կիսաւէր տան մի
անկիւնում հանգստալու:

Լոյսը խաւարի հետ կ'մրցէր, կապուտակ
երկնակամարի արեածին ծալրն էլ ոսկեջրել էր և
հրալին ծովից հողադնդի վրայ անհամար ցոլքեր
արձակելով սկզբնածին խաւարը կ'հալածէր տիե-



զերքին կենդանութեան ոգի փչելով։ Ամբողջ գիւղաքաղաքը տակն ու վրայ եղած խօսում էր Ասլանի անհետանալու մասին։ Նոյն իսկ իշխանը, Հիւցմամբ նայում էր երկաթեալ ելեէջի վրայ, որի բաւականին երկարութեանը չ'նալած, մէկ մարդ հեշտութեամբ կարող էր մանածել։

Բանտապահ ծառան իշխանի հարցման համաձայն պատմեց որ անծանօթ չարագործներն երկու էին և մի այնպիսի միջոցում թափվեցին վրաս, որ ոչինչ չ'կարողացար անել և մինչև անգամ սաստիկ մժուռթեան պատճառով նրանց երեսներն ինձ անտեսանելի մնացին։ Ես կամայ ակամայ իմ գոյութիւնը պահպանելու համար, պիտի կատարէի նրանց հրամանը։ Նրանք շատ քաջ էին, Ասլանին ազտաելուց և ինձ նրա տեղ բանտարկելուց յետով, այլ ոչինչ չ'գիտեմ։

Միքայէլն այդ բոլորը լսելուց յետով, ասաց Վահանին «այժմ մեր ուշանակն տւելորդ է», երեկոյեան նրանք շալակելով իրենց աղքատի մախաղները գուրս եկին կիսաւէր տանից և արագ արագ հեռացին գէպի Ասլանը։

Չորս օրից յետով Ասլանը տեսնելով իւր հաւատարիմ բարեկամներին բաւականին ուրախացաւ և նրանց գէպի ինքը ցոյց տուած անհամեմատելի լաւութեան համար. սկսեց առաւել ևս անձնուրացութեամբ աշխատել Աննայի և Շուշանի համար։ — Մենք իբատեց ստացած նամակի համա-

ձալն շուտ պիտի գնանք շարունակեց Միքայէլը,
բայց թէ Վաղարշից սպասելի նամակները ով կըս-
տանալ, գուցէ նրանք այնպիսի կարևորութիւն
կունենան, որ կ'հարկաւորվի մեզ դէպի մի ուրիշ
կողմ գնալ:

— Դրա համար կարելի է կարգադրել մի փո-
քըր մտածելուց լետով, ասաց Ասլանը. մենք պան-
դոկապետին հետ բաւականին բարեկամական լարա-
բերութեան մէջ մտած ենք, նա մի ազնիւ և
հաւատարիմ մարդ է, նամակների ստացումը
կ'լանձնենք նրան և կ'խնդրենք որ շուտով մեր
ծախքով հասցնէ Խ. գիւղը մօլլալ Հասանին:

Ամառվալ տօթակէզ օրերից մէկն էր, օդը
խեղդելու չափ ծանը, Ասլանն իւր ընկերներով
պանդոկապետին իրենց շնորահակալիքը և Վաղար-
շից (Սէլիտից) ստանալի նամակները մօլլալ Հասա-
նին հասցնելու հարկաւոր ծախքը տալով, ճանա-
պարհ ընկան դէպի Աննան: Մէկ օր, կէս օրից
լետով, քանի աշխատասէր հնձողներն ուրախ ու-
րախ երգելով, ոգեսորված զովացուցիչ և թարմ
օդից կ'հնձէին գարու հասունացած արտերն եր-
բեմն երբեմն նայելով կորացած գլխով ծածանվող,
ինչպէս օրհասական ըոպէին սպասող ծերունիք,
ցորնի արտերին, ընթերցողին լայտնի ճանապար-
հորդները վայր իջան մօլլալ Հասանի տանը:

Ասլանը և Միքայէլը հարկաւոր խորհուրդներ
Վահանին տալուց լետով, միւս օրը նրան թողին

մօլլալի տանը, և իրանք գնացին Բ. քաղաք: Աս-
լանը կեղտոտ ցնցոտիների մէջ, կորացած մէջքով,
երկու փալտերի վրայ լինուած մի այնպիսի եղա-
նակաւ կ'կաղար, որ ոչ ոք բացի նրա վրայ կաս-
կած չունենալուց՝ կցաւէր և կ'խղճար: Նա մեքե-
նական ընթացքով իբր թէ մեծ գժուարութեամբ
հասաւ Ալլահուլի-խանի դրանը և նստեց այն
աղքատների շարքում, որոնք միշտ կերակրվում
էին խանի խոհանոցից:

Բոլոր աղքատները մի փոքրիկ սրահում ճա-
շում էին, Ասլանն էլ բոլորովին լուռ ու մունջ
նստած մի ծերունու մօտ, այնքան չէր ուտում,
որքան իւր սրատես աչքերը պտտացնում էր դար-
պասի աչքի ընկնող անկիւները: Ասլանի տմանա-
կից ծերունին նկատելով նրան թափիծը հարցրեց,
«բարեկամ, ի՞նչու չէք ուտում, և ի՞նչ ցաւ ունիք
որ ալդքան տիսուր էք:

— Իմ տիսրութեան պատճառը բացատրելու
համար կ'պակսի ուժս և չեմ էլ ուզում ողորմելի
ծերունուդ վիշտ պատճառել, կուզէի անձամբ
խանին ներկայանալ պատասխանեց Ասլանը:

— Դուք ձեր ցանկացածին հասնել չէք կարող
ասաց ծերունին, որովհետև խանը երկու շաբթից
աւելի է որ իւր ընտանիքով գնացած է, բայց
թէ ուր, իսկը չգիտեմ»:

Ասլանի մոայլ դէմքի վրայ փալեց արտասու-
քի կաթիլներ և խեղդուած ձախնով ասաց անի-

ծեալ բաղդ. մինչև Երբ պիտի փախչես. ո՛ Աստուած,
դու որ պատժում ես բոլոր յանցաւորներին, բաւ-
ական համարիր իմ այսքան կրած նեղութիւն-
ներս գործած յանցանքներիս համար և օգնիր
ինձ իմ բարի լուսերս պատկելու:

Աղքատներին կերակրող խանի դրանիկներից
մէկը տեսնելով Ասլանի արտասուքը հարցրեց, հալ-
րիկ, ինչու կարտասվիք, ինչ կարօտութիւն ու-
նիք ասացէք, գուցէ ես օգնել կարենամ»:

Ասլանն աղքատից լսածների խսկութիւնը
իմանալու համար, պատասխանեց սիրելի, խանը
անձամբ տեսնել կուզէի:

— Ողորմելի մարդ, կոչեց ծառան, ես ուրա-
խութեամբ կ'ներկայացնէի ձեզ նրան՝ եթէ այս
տեղ լինէր, նա ուրիշ տեղ է գնացած ընտանիքով
և աշնան միայն կ'վերագառնալ:

Քանի որ Ասլանը խանի դրանը կ'աշխատէր
Աննալի մասին գաղտնիքներ իմանալ, Միքայէլն
էլ իւր բարեկամ Իրատի բացակալութիւնն իմա-
ցած տիսուր դուրս էր եկել մեծ հրապարակ,
ուր քաղաքի և նրան շրջակայ գիւղօրայքի կա-
նալք և աղջկունք տեղալին սովորութեան համա-
ձակ բերած էին իրենց ձեռագործութիւնները
ծախելու: Խառնիճաղանձ ամբոխն այնքան լցվել
էր, որ հրապարակի վրայ ասեղ ձգելու տեղ
չկար: Միքայէլն իւր լսդութիւնը լարած մի կող-
մից գէպի միւսն էր գնում, յանկարծ նրա ուշա-
դրութիւնը գրաւեց քանի պատուաւոր մարդկանց

խօսակցութիւնը, որոնցից ոմանք կպնդէին որ
խանին նենգութեամբ են կանչած հարսանիք.
ոմանք էլ ընդ հակառակը:

Միքայէլը խոր մտածմունքի մէջ անցնելով
մի նեղ ճանապարհով, նկատեց նոյն իսկ աղջկան,
որից մի ժամանակ գնած էր Աննալի գործած
արախչինը, նա մօտեցաւ նրան և ուշադրութեամբ
նալելով բոլոր վաճառելի նիւթերի վրայ հարցրեց,
«ուրիշ ոչինչ վաճառելիք չունիք»:

— Երկու երեսսրբիք ևս ունիմ, բայց գներն
այնքան թանգ են, որ ոչ ոք չէ գնում ասաց աղ-
ջիկը:

Վերջին խօսքերը Միքայէլի հետաքրքրու-
թիւնն աւելի շարժեցին, նա առաւ երեսսրբիքը,
կարդաց առաջնի վրայ ասեղնագործ բառերը
«գիրը կարդացի, սպասում եմ, ձեր վերնազգեստի
աջ թելի վրայ կարեցէք երեք կարմիր նշան, ձեզ
կ'գտնեմ խանի մեծ ալգիի մօտ». իսկ երկրորդին՝
«բաղդը չ'լաջողեց միմեանց տեսնել, ես խանի և
նրա կնոջ հետ գնացի. ի սէր Աստուծու չմոռա-
նաք: Աննա»:

Միքայէլը վճարելով երեսսրբիների գինը,
դուրս եկաւ հրապարակից և ուղղեց քալերը գէ-
պի այն տեղ, ուր որ պիտի գնար և Ասլանը:
Կարճ ժամանակից յետով Ասլանը և Միքայէլը քա-
ղաքից դուրս մի սաղարթախիտ ծառի տակ պատ-
մում էին միմեանց իրենց լսած ու տեսածները:

Արեգակի վերջնալոյսի վերջին ստուերը մը-
թութեան առաջին ստուերին հետ ողջունելու
սկիզբն արած էր, ամառվայ սաստիկ տաքութիւ-
նից վարսագեղ ծառերի ճիւղի տակ թագնված
թուչուններն և թանձը հովանիների տակ հան-
գստացող հօտերը դուրս գալով ցըռւել էին գեղե-
ցիկ մարդագետինների և հովիտների վրայ: Մէկ
տեղ թռչունների գալլալիկը, հովիւների քաղցրա-
հնչիւն սրինգների ձայնը, միւս տեղ գառների
մայիւնը, տաւարների պառաշը, ձիաների խխնջիւ-
նը և մի այլ տեղ սարերից գահավիժող արծաթա-
փալլ գետակների կարկաչիւնը ներդաշնակտբար
օրհնելով Արարչի զօրութիւնն և նրա փառքը
հռչակելով, մարդիս այլ լալլմէ կդարձնէին:

Նա—մարդը կարծես այլ ևս նոյնը չ'լինէր,
որ մի փոքր առաջ շռայլ կեանքի ատելի պայման-
ների տակ ընկճուած և իւր գոյութիւնը պահ-
պանելու համար աշխատում էր անգթաբար ու-
րիշներինն ոչնչացնել, խեղդելով միանգամալն իւր
ծովացեալ մտքի կատաղի ալիքների մէջ այն՝ որ
բարի է և լաւ, այլ իբրև բնութեան պարզ որ-
դի բոլորովին հեռու նիւթապաշտութիւնից, կեանք
թունարող և խաբուսիկ հեշտասիրութիւնից,
մոռացած զինքն անհանգստացնող տխուր մտած-
մունքները, շնչում էր աղատ, ծծելով ամենամա-
քուր պարզ օդ և զգում մի փոքր առաջ ընկ-
ճուած և ալեկոծ սրտին անսովոր հանդարտու-

թիւն և ոգուն ուրախութիւն: Նա պատկերացնե-
լով իւր լիշողութեան աւանդարանի մէջ նախկին
բիբլիական մարդուն՝ նրա պարզ կեանքը, գեղեցիկ
դրախտը, այն անհասանելի բարձր զօրութիւնը,
որը ստեղծել է երկինքն իւր լուսաւորներով և
երկիրը հրաշալի անհամար առարկաներով իբրև
հոյակապ անձեռագործ տաճար Աստուծու, եռան-
դալից խօսքերով կօրհնէր նրա յաւիտենական
կամքը:

Մօլայ-Հասանն իւր հիւրերով նստած սրահի
թախտի վրայ՝ խօսում էր զանազան առարկաներից.
մինչեւ քունը իւր քնքուշ ձեռքերով փակեց նը-
րանց աչքերի ծանրացած բիբերը:

Արշալուսը սկսել էր երևալ, Ասլանը գարթ-
նացնելով Միքայէլն ասաց «Գնանք գէպի աղքիւ-
րի ընկուզենին, ես ալսօր սովորականից շատ
ուրախ եմ զգում իմ սիրտը»: Դեռ նրանք ընկու-
զենուն չհասած, կանգնացը նրանց մի անծա-
նօթ մարդ և խօսքն ուղելով գէպի Ասլանն
ասաց. «Եթէ չեմ սխալվում դուք պիտի լինէք
Սէլիտ-Ամալիլի ծառան և պանդոկապետի բարե-
կամը»:

— Այո՛, ինչ կ'կամենաք բարեկամ:

— Ստացէք ձեր նամակը:

Ասլանն ամիջապէս պատռեց ծրաբը, և
կարդաց հետևեալ տողերը «Ես անվտանգ հանե-
լով հայրենիքս ձեր տուած նամակները հասցըած

եմ ուր հարկն էր, մէկ շաբաթ է գտնվում եմ Խ. քաղաքում, որտեղ ժողովում են պարսկաստանի նշանաւոր մարդիկ մի հանդիսաւոր տօն կատարելու առթիւ. կ'ինդըեմ եթէ հաստատուն լուր չունիք մեր կորսվածների համար, իսկոյն ճանպարհվիք դէպի ինձ. Ես բնակվում եմ նոր թաղի հրապարակի վրա! Մ.-ի տանը նախկին դարպիշտական հագուստով:

Ասլանը վարձատրեց նամակաբերին, Միքայէլի հետ գնաց դէպի մօլլայի տունը և պատրաստվեց ճանապարհ ընկնելու: Կէս օրից յետոյ, նրանք առանց երկար մտածելու, մնաք բարեւ ասելով մօլլայ-Հասանին, ուրախ տրամադրութեան մէջ հեռացան դէպի իրենց անծանօթ քաղաքը: Քանի օրից յետոյ, ճրագ վառին հասին իրենց հաւատարիմ ընկեր դարպիշի տունը: Այդ անձնանուեր բարեկամները միմեանց գրկախառնելուց յետոյ, երկար ճանապարհորդութեան երեսից վաստակած անդամների ուժերը զօրացնելու համար, ընկան հանգստանալու:

ԱՆՆԱՅԻ ԵՒ ՇՈՒՇԱՆԻ ՄԻՍ ԵԱՆՑ ՏԵՍՆԵԼԸ


Աշնանային գեղեցիկ առաւօտ էր, օրը հինգշաբթի, կապուտակ մաքուր երկնակամարի վրալ փայլում էր արեգակն իւր ոսկեճանանչ ճառագայթներով, քաղաքի բոլոր մասերում, ամեն հրապարակի վրայ լսվում էր բացի թմբուկների, նուագածուների, պարողների ձայներից և յաղթանգամ ըմբիշների վայրենի գոչիւնը, որոնք մերկանդամ խաղացնելով ձգում էին դէպի բարձր մէկը միւսի ետևից երկու ծանրագին կլանակաձև փալտեր, քաղաքը համարեա կաթսալի պէս եռում էր:

Վաղարշ-դարվիշը, Ասլանը և Միքայէլն անցնելով խուռն բազմութեան միջով, կանգնեցին կրօնաւոր և նշանաւոր անձինքներով լցված այն հրապարակի վրայ, որի շուրջը բռնած էին ամենաբարձր կանաչ կաղամախիք, որոնց դարեւոր արմատները ջրելով անցնում էր պարզ առուակը դէպի հրապարակի հանդէպ արևելեան կողմից հըսկալած բարձրացած փառաւոր արքայական տան մարմարոնեալ շատրվանները և այն տեղից դէպի մի ալլ շինուածք. որն իւր սքանչելի մողալիկ

կերտուածքով, ծաղկազարդ ճեմելիքներով, ջրալից
մարմարեալ աւազաններով նմանվում էր Մհամ-
մետի երևակալական դրախտին:

Այդ շինուածքի հարաւարեելեան կողմից ըն-
կած մշտագալար ծառուղին իւր օձապտոյտ
առուակով տանում էր գէպի մի գմբէթաւոր շի-
նուածք, որի կտուրների վրայ դուրս ցցուած
գոյնզգոյն ապակիներով շինուած փոքրիկ երդաձե
պատուհաններն, արեգակի ճառագայթներից զանա-
զան նշով էին տալիս. իսկ նրա ծխնելուզից
սիւնաձե բարձրացած ծուխն, երբեմն հանդարտ
քամիներից այս կամ այն կողմն էր թեկվում:
Նինուածքի կանաչագարդ բակում, քանի սաժէն
բարձրութեամբ բըգաձե պարսպի վրայից սեա-
մորթ ներքնին 'ի նշան բաղնիսի պատրաստու-
թեան, հնչեցնում էր շեփորը: Այդ շահի առանձ-
նական բաղնիսն էր, որ տեղ նոյն օրը պիտի լո-
զանալին գեկեցիկ սեռը շահի և նշանաւոր շահ-
զատաների հրեշտակագեղ կանալք:

Բաղնիսի գոյնզգոյն քարերով սալայատակ
արած նախասենեակից մտնում ես մի բաւականին
մեծ, զանազան տեսակ ծաղիկներով, առասպելա-
կան գիւցազունների և գիւցազնուհիների նկար-
ներով զարդարված դահլիճ, որի մէջ տեղը շի-
նուած մարմարոնեալ աւազանի և նրա միջից գէ-
պի վեր ցցված պղնձեալ ոլորուն սիւնեակի գլխին
մի ոտքի վրայ կանգնած է մի մետալական արձան,



որն իւր գլխի բոլոր ծակերով արծաթափալլ մաքուր ջուրը լորդութեամբ թափում էր աւազանի մէջ:

Դահլիճի բոլորտիքը շինուած էր ամենաթանգաղին գորգերով ծածկուած կամարակապ հանգըստարաններ, որոնց մէկում սպիտակ և խաւօտ սփածանելիքի մէջ իւր տարիքին անհամապատասխան գեղեցկութեամբ ընկողմուած էր փափուկ բարձի վրայ մի հրաշալի պատկեր և նրա հարուստ ալիքաւոր մազերը և բամբակի սպիտակութեամբ քնքուշ մարմինը հոտաւէտ հեղուկներով օծում էր մի աննման գեղեցկութեամբ, սև արևելեան աչքերով և սպնիազ պերճ մազերով, գոգաւոր ալիքի պէս բարձրացած կուրծքով, սքանչելի օրիորդ:

Երբ օրիորդն իւր գործը կատարելով մտաւ դահլիճի հարաւալին կողմի առանձնասենեակն իւր տիկնոջ համար մի որ և իցէ զովացուցիչ ըմպելիք պատրաստելու, մի այլ զարդարուն հանգստարանի վրայ ոչ պակաս գեղեցկութեամբ քան այն երկրորդ Կալիփսը, հանգում էր մի այլ տիկին, որ հիացած բոլորովին օրիորդի գեղեցկութեամբ, սկըսեց հարցնել «տիկին այն օրիորդը ձեր հարազատն էր»:

—Ո՛չ, որդեգիր պատասխանեց առաջինը:

—Հասարակ ցեղից է:


—Չգիտեմ քըստոնեալ է:

— Քրիստոնեալ, աչքերը լայն բանալով, ես
ևս մէկն ունիմ, այս ըոսէիս կ'գալ, նրանց պիտի
խօսացնեմ:

— Եատ լաւ կ'լինի, պատասխանեց իւր խօ-
սակցուհուն և մտաւ սենեակ օրիորդի պատրաս-
տած ըմպելիքը վարելու:

Օրիորդն ամենայն զգուշութեամբ հաւաքելով
իւր տիկնոջ թրջած շորերը, սկսել էր ծալել, երբ
ներս մտաւ խորին պարկեշտութեամբ մի բարձր
հասակաւոր կին, որի գեղեցիկ բայց այնու ամե-
նայնիւ դալկացած և մռայլ դէմքը պարզ արտա-
յալտում էր որ նա կըում է իւր սրտի խորքում
զինքը հոգեալէս տանջող մի վիշտ: Կինն իւր ձեռո-
քի փոքրիկ կապոցը դնելով հանգստարանի վրայ
նստած տիկնոջ մօտ և նրա իւր ականջին մի ինչ
և իցէ բան շշնչալուց լետով, մօտեցաւ օրիորդին:
Կեանքի զանազան պայմանները մի ալնպիսի փո-
փոխութեան էին ենթարկած լիշեալ օրիորդին,
որ քանի տարի առաջ նրան տեսնողը հեշտու-
թեամբ չէր կարող ճանաչել:

— Ի՞նչ ազգից ես, եղեւ կնոջ առաջին հարցը:
Խեղճ աղջիկն իւր մալրենի լեզուի քաղցրա-
հնչիւն բառերը լսելուն պէս, որը համարեա եր-
կար ժամանակ չ'խօսելով մոռացած էր, մի սուր
և զննողական հայեցք ձգեց իւր խօսակցի վրայ
և նրա զանազան դառն հանգամանքներից բո-
լորովին փոխված դէմքը չ'ճանաչելով ամօթխա-
ծութեամբ պատասխանեց, հայ եմ:



— Ո՞վքեր են քո ծնողքը:

— Իմ հայրը մեռած է. իսկ մայրս գերի են տարած բալց թէ ուր, այդ միայն իմ բարի տիկինը գիտէ, որի խնամատարութեանը յանձնուած եմ ասաց օրիորդը խորին հառաջանքով և արտասուալից աչքերով:

— Ո՞վ է քո տիկինը:

— Հիւրիզատ-խանումը:

Հիւրիզատի անունը լսելուն պէս, մայրական բոլոր խանդադանքով գրկելով աղջիկը, խեղդուած ձայնով ասաց «ո՛չ Աստուած... ո սիրելի զաւակս, որքան արցունք թափեցի քեզ համար, ճանաչիր վշտահար մօրդ», և այսպէս երկուսն էլ թուլացած ընկան գահինի սալայատակի վրայ:

Տիկինը՝ որ առանց այդ երկու ողորմելիների խօսակցութիւներն իմանալու արձանացած նայում էր, նրանց վերջին սրտաճմլիկ տեսարանը տեսնելով, ճշաց գէպի միւս տիկինները, 'ի սէր Աստուծու օգնեցէք Շահնիսայիս և այս չքնաղ օրիորդին: Տիկինների ալդ աղմուկի վրայ Հիւրիզատը դուրս գալով առանձնասենելից, տեսաւ թէ ինչպէս իւր սիրելի Աննան և Շուշանը ուշագնաց ընկած են: Նա Աննայի թուլացած գլուխը գիրկն առած, արցունքի կաթիներ գլորելով նրա գալկացած գէմքին, սառն ջրով շփում էր խեղճի ճակատն և ասում «Աննա, սիրելի Աննա, խնայիր զաւակիդ, բաց աչքերդ, տես ես եմ ես, քոյլդ Հիւրիզատը»:

Նուշանը փոքր առ փոքր ուշը գլուխը հաւաքելով արտասուքն աչքերին իւր փափուկ թաթիկների մէջ բռնած էր իւր ողորմելի մօր սառած ձեռքերը. իսկ Հափիսը խրախուսելով Նուշանին, շոյում էր նրա գեղեցիկ և օղակ օղակ սև սաթի նման մազերով զարդարուն գլուխը: Աննան էլ երեմն երեմն իւր կիսաբաց աչքերը պտտացնելով իւր շուրջն եղած տիկինների վրայ, կըկին ընկնում էր խորին զառանցանքների մէջ: Վերջապէս Աննան էլ հետզհետէ ուշի գալով, ճանաչեց իւր բարի Հիւրիզատին և գլուխը մինչև գետին խոնարհցնելով երախտապարտ որտով շնորհակալութիւն արեց ալդ թշուառների գթած մօրը:

Հափիսը և Հիւրիզատն ալդ բարեսիրտ, միմեանց անծանօթ բարեկամները և տիկնութեան բարձր անուանը վայել կանալք, մտերիմ քոյրեր դարձան երդուելով բոլոր տիկինների առաջ հզօր Ալիի և մեծ Մհամմետ մարդարէի գերեզմանով Աննալին և Նուշանին ազատութիւն շնորհել և նրանց իրենց հալրենիք վերադարձնել:

Կէս օրից յետոյ ընթերցողին յայտնի դարվիշն իւր թանգագին վերարկուի մէկ մէկ ձեռքում փղոսկրեալ կիսաբաց մատներով բարակ փալու, միւսից սքանչելի քանդակութեամբ արծաթեալ շղթալով կախ ջալլամի ձուի քաշկուլը, աչքերն շղթալով կախ ջալլամի ձուի քաշկուլը, աշուած, հաներեմն երկինք և երեմն գետնին լառած, հանգարտ քալլերով, գողտը ձայնով երդում էր,

Աստուծու անհասանելիութիւնը, նրա սիրելի մարդարէների և սուրբերի հրաշալի գործերը և անհաւատներից կրած տանչանքները:

Դարվիշի զմալլեցուցիչ ձայնը ընդհատելով մէկն իւր խոպոտ ու բարձր ձայնով գոչում էր, «ով աստուածասէր ուղղափառներ, եթէ մէկը ձեզանից ճանաչում է մէկ հայի, կամ թէ կայ այնպիսին այս տեղ, թող աներկիւղ ներկայանալ Հիւրիզատ և Հափիս խանումներին մի հարկաւոր գործի համար:

Դարվիշը լսելով ալդ խօսքերը, մօտեցաւ մունետիկին հետեալ հարցով պուք կարող էք ներկայացնել ինձ խանումներին:

— Ի՞նչու համար, հարցրեց մունետիկը:

— Նրանց խնդիրքը կատարելու և ձեր նեղութեանը վերջ տալու:

— Աղա-դարվիշ, կաղաչեմ բարի եղէք, ծառադ կ'կատարէ հրամանդ ասաց խոնարհութեամբ մունետիկն և առաջնորդեց նրան դէպի դարպաս:

Օձապտոյտ ելեէջներով դարվիշը բարձրացաւ, անցաւ արևելեան նուրբ հազուագիւտ գորգերով ծածկուած և ոսկեզօծ նկարներով զարդարուն դահլիճով և մտաւ մի փոքրիկ սենեակ, որի մէջ իբրև երկնալին արարածներ նստած էին ալդ երկու չաստուածուՀիները Հիւրիզատը և Հափիսը: Նրանց ծխած թանգագին քարերով զարդարուն զալիանից անուշահոտ ծուխն օղակ օղակ բարձրա-

նալով գէպի սենեկի առաստաղը, անհետանում էր
գոյնզգոյն ապակիներով շինուած լուսամուտների
միջով։


Դարվիշը խորին երկրապատութեամբ ողջունեց
տիկիններին և կանգնեց դրան մօտ։ Տիկինները
նկատելով դարվիշի սովորական դարվիշների շրջա-
նից դուրս լինելը, նրան գրաւիչ դեմքն և ընտիր
հագուստը հրաւիրեցին նստել. իսկ նա իւր հիա-
նալի պերճախօսութեան գեղեցիկ դարձուածներով
լալտնելով իւր շնորհակալիքը, անարժան համարեց
զինքն ալդ պատուին։

— ծանաչում էք քաղաքումս մի որ և իցէ
հալի, հարցրեց Հիւրիզատը։

— Եթէ բարեհաճէիք լայտնել ինչ գործի հա-
մար, պատախանեց դարվիշը։

— Մենք ունինք երկու գերի հայուհիներ,
նրանց ազատութիւն շնորհելով՝ ուզում ենք
իրենց հալրենիք վերադարձնել։

Դարվիշը նախ օրհնեց տիկինների բարի կամ-
քը և ասաց «իշխանները և իշխանուհիները, դա-
տաւորները և առհասարակ կարողները չ'պէտքէ
սպասեն արդարների, անմեղների և լանիրաւի
հալածուածների ու տանջվողների համար աղա-
չանքի ու բարեխօսութեան. այլ ինքնայորդոր
պիտի օգնեն և բարերարեն նրանց. որովհետեւ
Աստուծու համար մարդիկ մի և նոյն են, նա
նրաց կրօնին և ազգութեանը նայած չէ վարձա-



տրում. այլ նրանց սրտերին և գործերին, աւելացնելով որ այդ տատուածահաճոյ գործով բոլորովին անցնում էք երկնալին բարի հոգիների շարքն և չէ թէ միայն բարութեան օրինակ էք ինում մեր ուղղափառ ազգի. այլ և պարտաւորում էք ձեր գերիների ամբողջ սերունդի հետ և բոլոր քրիստոնեալ երախտագէտ ազգերին յարգանքով ձեր անունը լիշելու և ձեր լիշատակը յաւիտեանս օրհնելու: Եւ երկրորդ ասաց թէ ինչպէս ինքը դարվիշն իբր թէ քանի տարի առաջ իւր պանդխտութեան ժամանակ սաստիկ հիւանդութեան մէջ պատահում է մի հայի, որն ընդունում է իրեն իւր համեստ ընտանիքում, խնամում է ամենալ կերպ առանց ոչինչ ակնկալութեան և իւր նեղութեան փոխարէնը ստանալու, և թէ ինքն երկու օր առաջ տեսած է նոյն իսկ հային իւր եղբօր որդու հետ եթէ բարեհաճէք կ'որոնեմ ներկալացնելու:

Հափիսը և Հիւրիզատը դարվիշին լաւ վարձատրութիւն խոստանալով պատուիրեցին գտնել հայերին և անմիջապէս ներկալացնել իրենց:

Աշնանալին գեղեցիկ գիշեր էր, լրացած լուսնեակը լողում էր բաւականին պարզ և պայծառ լուսով, մոյզ կապուտակագոյն երկնքի վրայ չէր երեսում մի պատառ անգամ ամպ բացի այն բիւրաւոր և կայծերի պէս պլալող աստղերից: Մի բարձրաստիճան մարդու միակ որդու հարսանեաց

առաջին գիշերն էր, ամբողջ քաղաքը լուսաւորված էր ջահերով, նրա ամեն մասերում լսվում էր ուրախութեան ձայներ, քաղաքը կարծես սաստիկ ոմբակոծութեան մէջ էր դէպի երկինք սլացող անհամար փամփուշտների ուժգին ճայթումներից:

Դարվիշն իւր երեք ընկերներով նստած փոքրիկ սենեկի պատուհանի առաջ, պատմում էր նրանց պատահած ուրախալի անցքի համար թէ ինչպէս ներկայացաւ Հիւրիզատ և Հափիս խանումներին և թէ ինչպէս վաղը պիտի ներկայանան նրանց: Նրանց ուրախութեան չափ ու սահման չ'կար, գիշերուայ ծանրութիւնը անտանելի կ'լինէր, եթէ մահուան կրտսեր եղբայրը չ'ծածկէր նրանց աչքերի բերերը և չ'ձգէր բարերար ինքնամոռացութեան մէջ:

Առաւօտեան արշալուսն ընկած էր երկրագնդի կիսամեռ գաշտերի և բլուրների վրայ, օրը ուրբաթ՝ մահմետականների հանգստեան օրն էր, կտրուկ ոսկեզարդ ազնուականները փրփրերախ արաբական նժոյգներով արշաւում էին ընդարձակ հրապարակի վրայ, պարտէզ, գաշտ և ալզիք լցուած էին մարդկալին գեղեցիկ սեռի խմբերով, ամեն տեղ լսվում էր ուրախածայն ուռուաներ: Հափիսի և Հիւրիզատի բնակվում հոլակասլ տների շըջապատող մշտագալար բարձր ծառերի կատարները մի առանձին եղանակով կ'օրօրուէին, ծառերի տերե-

ները կամաց կամաց որդանի գոյն էին ստանում, քամին շվացնելով անցնում էր հնձած արտերի վրայով: Կռունկների անհամար երամները տխուր կռնչելով թռչում էին դէպի հարաւ. իսկ Հափիսը և Հիւրիզատը այդ երկու բարեսիրտ քոյրերը կըռնած փափուկ բարձերի վրայ, նարկիլայի օձապտոյտ ծխաքարշի ոսկեայ ծալբերը բռնած խօսում էին Աննայի և Շուշանի համար:

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԼՐՈՒՄԸ

Դարվիշը Միքայէլի, Ասլանի և Վահանի հետ
դուրս գալով սենեկից, ուղղեց քայլերը դէպի
Հիւրիզատը:


Մի մեծ դահլիճում նստած էր տխուր Ալ-
լահզուլի-խանը իւր աներ որդոց և Հիւրիզատի
մեծ եղբօր հետ, նրա անընդհատ ծիւելուց և
առծուռունչ քթի լայն բնչերով դուրս եկող
թանձը և ալիք-ալիք բարձրացող ծուխը մառա-
խուզի պէս բռնել էր դահլիճի առաստաղը:

Կարճ լոռութիւնից լետոյ, խօսքը դարձնելով
խանը դէպի գարվիշը հարցըաւ «Քերիք այն հայե-
րին, որոց համար խոստացած էիք»:

— Ալ՛, մեծազօր իշխան, ես կատարած եմ
իմ պարտքը և ահա հայերը, ցոյց տալով Միքայէ-
լին և Վահանին:

— Դուք աւելի մահմետականի էք նմանվում
քան թէ քրիստոնէի՝ փոքը ինչ բարկացած ասաց
խանը:

— Ուզիղ է ձեր ասածն ողորմած տէր, մենք
ստիպուած հանգամանքներից արտաքուստ մահ-
մետական ենք, իսկ ներքուստ քրիստոնիալ ասաց



Միքայէլն և իմ խօսքերի ճշմարտութիւնը կարող է հաստատել և այս ուղղափառ մահմետականը ցոլց տալով Ասլանին, որն ուրախ դէմքով կանգնած էր գարվիշի մօտ և կարծես ծիծազում էր հսկայական գերազանցութեամբ իւր շուրջն եղած բոլոր ազնուականների վրայ:

Խանը խօսքը ուղելով դէպի Ասլանը «Դուք ճանաչում էք այս հայերին:

— Այո՛, ես ճանաչում եմ գրանց իրեւ իմ ազնիւ և բարի հարեաններին, պատասխանեց Ասլանը և եթէ կասկածում էք այս մասին, կ'խնդրեմ կանչել ձեր գերիներին գուցէ նրանք աւելի հաստատեն իմ անսուտ խօսքերը:

Ընդհանուր հաւանութիւն. խանը հրամայեց իւր մանկաւիկին նախ Հիւրիզատ և Հափիս խանումներին հրաւիրել և ապա յայտնել Շահնիստին և Շուշանին որ շուտով ներկայանան:

Հիւրիզատն և Հափիսը դահլիճում բռնած էին իրենց համար պատրաստած տեղերը, խանը խօսքն ուղելով դէպի տիկինները շարունակեց, «ահա այն հայերը, որոց համար ձեզ աղա-դարվիշը խօսք էր տուած, նրանց հաւատարմութեան համար կ'վկայ է և մեր հաւատակից Ասլանը»:

Խորին ու տխուր լուսութիւնը թագաւորում էր դահլիճի մէջ, բոլորն էլ սպասում էին գերիներին, Հափիսը և Հիւրիզատը մի բնազդմամբ նախագուշակում էին մի խորհրդաւոր գաղտնիք

ալդ անծանօթ թախծալի անձինքների մէջ։ Նը-
րանք աչքները յառած առողդ Վահանի վրայ այն
համոզմունքին էին, որ նրա երակների մէջ Շահ-
նիսալի արիւնն է վագում և ալդ աւելի հաստա-
տում էր Վահանի գեղեցիկ դէմքն որ բոլորովին
Աննալի և Շուշանի նմանութիւն էր բերում։

Լսում էին ոտքի հանդարտ քայլելու ձալ-
ներ, բոլորի սիրտը բարախում էր, դահլիճի հիւ-
սիսալին կողմի նկարագարդ դուռը բացուեցաւ և
ներս մտան չարշաւների մէջ բոլորովին փաթա-
թուած և երեսները ծածկած երկու վայելչա-
կազմ արարածներ, որոնց միայն նկատելի էր մե-
տաքսանման սև թերթեռնքների տակ փայլուն
մի աչքը։ Նրանք առանց ալս և այն կողմը նայե-
լու, գլուխ տալով խորին յարգանքով հարաւային
կողմի նստած ազնուականներին, հանդարտ ու նա-
զաքալ դիմեցին դէպի իրենց բարերար տիկին-
ները։

Ալո՛, նա Աննան էր Շուշանի հետ. գուցէ
նա իսկոյն կ'գիմէր դէպի իւր տագրը և կ'համ-
բուրէր իւր սիրելի որդի Վահանին, եթէ ուշը
դարձնէր դէպի արևմտեան կողմում կանգնած եր-
կար տարիներով զինքը որոնող անձինքներին։

Ալահղուլի-խանը ընդհատելով թագաւորող
լութիւնը, կանգնեց տեղից, գնաց դէպի խա-
նումներն և խօսքն ուղղելով դէպի Աննան, ասաց.
«լսիր իմ ամուսնու ամենահաւատարիմ և սիրելի

Շահնիսա, ալսօր իմ, Հափիսի և նրա սիրելի քըոջ
ու իմ հանգուցեալ բարեկամի կնոջ Հիւրիզատի
կամքին չ'հակառակելու և նրանց ուխտը կատա-
րելու համար, ես ևս ազատութիւն եմ շնորհում
քեզ և դստերդ։ Թէ և մեզ համար ծանր է քեզ
նման մի պարկեշտ և հաւատարիմ աղախնուց
զրկուելը, միայն քո այսքան տարվայ անգնհատելի
ծառալյութիւնդ և դէպի իմ տունն ունեցած խը-
նամատարութիւնդ, խոհեմ վարվողութիւնդ ստի-
պում են մեզ ինայել քեզ և աղջկանդ, և յետ
գարձնել ձեզ ձեր հայրենիք դէպի ձեր թշուառ
ընտանիք, որոնք գուցէ դեռ արտասուաթոր աչ-
քերով սպասում են ձեզ կամ որոնում անհիւրըն-
կալ աշխարիս կողմերը։ Ձեզ ձեր հայրենի օջախը
հասցնելու համար, Հափիսը և Հիւրիզատն աղա-
դարվիշի միջոցաւ գտել են երկու հալեր, որոց
ազնուութեան և հաւատարմութեան համար ես
ստուգած եմ իմ հաւատակիցներից։ Ահա այն
հայերը, ինչպէս ես, նոյնպէս ձեր բարի տիկին-
ներն իրաւունք ենք տալիս նրանց հետ ազատո-
րէն խօսելու։

Աննան գլուխը մինչև ծնկները խոնարհեցնելով
երախտագիտական սրտով և քաղցր հայրենիքի կա-
րօտից արտասուալի աչքերը չարշաւէ տակից ուղղեց
դէպի դահլիճի արևմտեան կողմը։ Նա իսկոյն ճա-
նաշելով իւր սիրելի որդուն և տագը Միքայէլին,
կալծակի արագութեամբ վազեց դէպի նրանց գիրկը

և կերկերեալ ձայնով կոչեց ո՞չ Աստուած, ի՞նչ
երջանիկ ըոպէ, Դու վերջապէս գթացիր քո դըժ-
բաղդ Աննալին և նրա թշուառ զաւակներին,
քանի տարիներ անցան որ չ'տեսալ ձեզ, բոլորը
փաթաթուեցան միմեանց:

Ընդարձակ դահլիճի մէջ լսվում էր արտա-
սուքից խեղդուած կցկուր խօսքեր, ո՞չ մայրիկ,
ո՞չ որդեակ... ո՞չ եղբայր, ո՞չ քոյրիկ...: Տեսարա-
նը սրտաշարժ և դրամատիկական էր, խանը բոլոր
ազնուականներով, Հիւրիզատը և Հափիսը արձա-
նացած արտասուքի կաթիլներ միայն կ'գլորէին
այտերի վրայ: Ասլանը ծնկաչոք ձեռքերը դէպի
Աննան և Շուշանը բարձրացրած հեկեկանքով նե-
րումն էր խնդրում իւր արած վատութեան հա-
մար. իսկ դարվիշն աչքերը դէպի երկինք ձգած
բազկատարած օրհնում և փառաբանում էր Աս-
տուծու անհասանելի և բարի կամքը, հազարաւոր
բարիքներ մաղմելով տիկինների և խանի թան-
գագին կենաց:

Լացը բոլորովին դադարել էր, Աննան իւր
որդոց և Միքայէլի հետ դահլիճի մի անկիւնում
նստած պատմում էին իրենց գլխով անցաները.
իսկ Ասլանը խանի և միւս ազնուականների հարց-
ման համաձայն շարունակում էր թէ ինչպէս ին-
քը իրեւ ծառալ, Քեարիմ-բէկի հրամանով ակա-
մայից փախցրեց Աննալին և Շուշանին, ինչպէս
թագնվեցան գազանների անտառում և բռնվեցան,

ինչպէս ազատութիւն ստանալով վերադարձաւ իւր
հալրենիք, և իւր յանցանքը քաւելու համար ա-
րած երդմանը համաձայն առնելով իւր հետ Մի-
քայէլին և Վահանին սկսում է որոնել Աննալին և
Շուշանին, որքան նեղութիւնների մէջ են ընկ-
նում, որտեղից են ընկերանում դարվիշի հետ և
վերջապէս ինչպէս նրա խորհրդով և նամակի հա-
մաձայն թողնելով Ա.. քաղաքը գալիս են Խ. քա-
ղաք: Ասլանը մի այնպիսի եղանակով նկարագրեց
իւր գլխի անցքերը, որ բոլոր ունկնդիրների ար-
տասուքը շարժեց:

Դարվիշը խօսքը դէպի խանը և խանումներն
ուղղելով ասաց. «առ հասարակ բարերարութեան
մէջ երկու բան պիտի նկատի ունենալ, մէկն ըն-
դունած բարեքը և նրա օգտակարութեան չափը,
միւսը բարերարի սէրը կամ բարերարելու շնորհա-
լի եղանակը: Առաջինի փոխարինումը կարելի է.
իսկ երկրորդինը՝ հազիւ թէ: Բայց ձերի մէջ ով
մեծ բարերաներ, երկուսն էլ անփոխարինելի են,
ոչ թէ միայն բարերարուածների կողմից, այլ և
մարդկութեան: Զեր արած աստուածահաճոյ գոր-
ծը ձեր բարի անունների հետ դարեր շարունակ
անմոռանալի կ'մնալ ազնիւը, բարին, գեղեցիկը և
առաքինութիւնը սիրող և յարգող սրտերի մէջ:
Ինչպէս երկիրն առանց արեգակի ոչինչ է և ոչ
մի օգուտ չէ կարող տալ, այնպէս էլ մարդն ա-
ռանց առաքինութեան մեռած է: Զեր մէջ առա-

քինութեան արևը կերեալ և ձեր բարի գործերը
նրա կենսատու ճառագալթները են, որ կ'սփռէք
ձեր շուրջը: Ձեր արածների փոխարէնը միայն նա
կարող է հատուցանել, որն իր սուրբ ձեռքով
դրել է ձեր կուրծքերի տակ այն փոքրիկ մսի
կտորը, որին սիրտ են ասում. իսկ ես՝ մի ան-
սահման, անտեսանելի աշխարհ, ուր այժմ Աս-
տուած է կառավարում: Երկրպագում և համբու-
րում եմ այն տանը այն սրբազն տաճարին,
ուր Աստուած է բնակում»:

Դարվիշի խօսքերն այնքան ազդեցին, այնքան
յուզեցին նրանց, որ տեղներից վերկենալով բռնե-
ցին նրան ձեռքը և իրենց շնորհակալիքը լայտնե-
լով, զանազան նուերներ տուին:

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Միւս օրն առաւօտեան դարպասի դրան ասեղ
ձգելու տեղ չ'կար, Աննան ծնդների վրայ Հիւրի-
զատի և Հափիսի առաջ երախտագիտական բարձր
զգացմունքով, ողբալի ձայնով իւր շնորհակալիքն
էր լայտնում, Հիւրիզատը դրկած Շուշանին, օրհ-
նում էր նրան հետեւեալ խօսքերով «գնա սիրելի
դստրիկս թող Ալիի մեծազօր Աստուածն առաքէ
իւր բարի հրեշտակը խաղաղութեամբ ձեղ ձեր
հալրենիք հասցնելու, թող երկնքի թագաւորն
իւր անսահման բարձրութիւնից օրհնէ ձեր ապա-
գան» և այս օրհնութիւնը տալուց յետոյ, մայրա-
կան քաղցր համբոյներ դրոշմելով Շուշանի վար-
դագեղ այտերի վրայ, Հափիսի հետ դուրս եկաւ
դահլիճից Աննալին և Շուշանին ճանապարհ ձը-
գելու:

Աննան և Շուշանը վերջին արտասուախառն
հրաժարական ողջոյնը տալով իրենց բարերար տի-
կիններին, նստեցին Ալլահուլի-խանի հրամանով
պատրաստուած երկու գեղեցիկ ոսկեթել թամբե-
րով զարդարուած նժողուների վրայ և թանգարին
ընծաներով հեռացան դէպի իրենց հալրենիք:

Նրանց հետեւում էր հսկալի բոլոր արժանաւորութեամբ մէկն, որի դէմքն արտայալում էր նրա հոգեկան կատարեալ ուրախութիւնը, նա Ասլանն էր որ իբրև մըցանակը տարած քաջ զօրական, ուրախ ուրախ և երբեմն երբեմն ձեռքն իւր ուրախ ձիու բաշով անցկացնելով գնում էր արագ արագ իւր ողորմելի ընտանիքի կարօտը լցնելու:

Քանի օրից յետով ընթեցողին յայտնի ճանապարհորդները երեկնադէմին երբ բարձր մենարէթների գլխից գողտընկ, մելոտեական եղանակով ուղղափառներին ազօթքինամազի հրաւիրող ազանի ձայնը կ'լսուէր մտին X քաղաքը, ուր Վաղարշը—նախկին գարվիշն իր տռետրական տան ճիւղն ունէր և իջան նրա սեփհական գեղեցիկ տան:

Երեք օր ալդ տեղ հանգիստ առնելուց և վալելուց եղանակով հիւրասիրվելուց յետով, Վաղարշն խօսքը դէպի Ասլանը, Միքայէլը և Վահանը դարձնելով ասաց. «գուք վաղն Աստուծով պիտի բաժանուիք ինձնից. բայց նախքան մեր բարժանուելն ես պիտի կատարեմ պարտքս, պիտի ցոյց տամ իմ երախտագիտական զգացումներս ոչ թէ լուռ. ալլ հրապարակով։ Կան մարդիկ, որոնք երախտագիտութիւն և բարեկամութիւն են ցոյց տալիս միայն այն ժամանակ, երբ մի որ և է կատարելիք կամ ակնկալութիւն ունեն. ալդպիսի բարե-

կամութիւնը և երախտագիտութիւնը կեղծ է։ Որպէս զի ես այդպիսիների շարքին չ'պատկանիմ կասեմ որ այն, դուք էիք որ ձեր կեանքը վըտանգի ենթարկելով օգնեցիք ինձ ամուսինս ազատելու, առանց որի իմ կեանքը դժոխք պիտի լինէր։ Երբ մէկը կարող է իր ընդունած քարիքը փոխարինելու և չէ անում, ամենամեծ ապերախտը և անազնիւն է։ Ես՝ որ հօրս միակ որդին եմ և ինչպէս տեսնում էք նախախնամութիւնը չէ խնալել կեանքի բարիքներով ճոխացնելինձ, պարտք եմ համարում խիղճս հանգստացնելու և պարտքս դէպի ձեզ ու գէպի ինձ վարձատրող Աստուծը կատարելու։ Ասլան, 'ի նշան անմոռաց բարեկամութեան և երախտագիտութեան ահա ձեզ այս դրամական վարձատրութիւնը։ Զէ որ դուք ինչպէս իմացել եմ մեծ ընտանիքի տէր էք և ահա քանի տարի է առանց խեղճ ընտանիքիդ ապրուստի համար մտածելու, միայն իմ հաւատակիցների ազատութեան համար էք չարչարուել։ Իսկ դուք Միքայէլ և Վահան, բարեհաճեցէք նոյն պէս ընդունել այս ընծաներն ձեր լաւ բարեկամից եբը նշան երախտագիտութեան։

Ասլանը, Միքայէլը և Վահանը կարծես միաբերան ընդհատելով Վաղարշն ասացին «մենք աւելի երախտապարտ ենք։ Զեր մեզ համար արածները, կրածներն աւելի շատ է քան մերը։ Զէ որ ձեր միջոցով գտինք մեր սիրելիները. թանգ է

ամեն բանից մեզ համար լոկ ձեր բարեկամութիւնը: Մեզ մի ամաչցնէք նուշըներով քանի որ գոհ ենք մեր վիճակով»: Վաղարշը պնդելով շարունակեց «ամեն մի ընդունած բարեկամական բարիք՝ բարեկամութեան շղթայի օղակն է կազմում. ով բարիքը և այն երախտագիտական զգացումից յառաջացած, մերժում է, այնպիսին յանիրտի կ'տրում է բարեկամական շղթան և այդ անարդարութիւն է և հակառակ սիրոյ և օրինաց: Այսուհետեւ ձեզ եմ թողնում որը հաճելին է՝ այն արէք»: Նրանք առանց այլ ևս յամառելու՝ ընդունեցին Վաղարշի ընծաները:

Միւս օրը նախ քան արշալուսի անկողնից ելնելը և մահկանացուներին իր լոյսը շնորհելը, Ասլանը և ընկերները դուրս եկան Վաղարշի տընից և արտասուախառն հրաժեշտի ողջոյներ տալով նրան, բռնեցին գէպի հալրենիք տանող ճանապարհը:

Ա Ե Բ Զ



43

17

ԱՐՄ.

2-12632

ԽՄ ԱԶԽԱՏՈՒԹԵՍՄ ՀԱՅԱ ՏԵԱՎՆ ԳՐՔԵՐԸ

1. Ընտանեկան վիշտ և հաւատարմութիւն 75 կ.
2. Պատկերներ կեանքից (սպառուած) —
3. Մեռածի կեանքից — . 20 կ.
4. Պանդուխտի լիշտակարանից . . 20 կ.
5. Թունիկը (սպառուած) . . —
6. Կեանքի գերասանի խոստովանքը (սպառուած)
7. Նումալ Պոմպիլիոս թարգ, գրաբառից
աշխարհօքէն . . . 1 ր. —

Գումարով դնողներին 20% զեղչ:

Դիմել Շուշի՝

Խորէն քահ. Խալեսանդրեանցին.

Դիմում 75 կոպ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0347703

47449